

Բնակի

ՆՈՅՆՄԱՆՆԵՐ - ԴԵԿՏԱՄԱՆՆԵՐ 87



digitised by A.P.A.P. @

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1.—	***	Նոր հուսկումներու կարօտով
3.—	Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ	Յետ մահու տեսիլք
7.—	»	Ծաղկոց
16.—	Մ. ԻՇԽԱՆ	Երբ դուք չկայիր
18.—	»	Պուրա
29.—	ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ	Նը սպասեմ
33.—	»	Սարահարթին դաշտամուկը
37.—	Բ. ՓԱՓԱՋԵԱՆ	Հեմարանի մէջ տիրող եզին իւ գաղափարական մթնոլորտը
43.—	Հ. ԻՓԷԿԵԱՆ	Բոլոր գան օրեր
45.—	»	Ոնորհ
46.—	»	L'enfant Prodigue
48.—	»	Առանձնութիւն
48.—	»	Solitude
49.—	Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ	«Այստեղուանը ուտական է, ուտական»
57.—	Ա. ՆՈՒՐԵԱՆ	Լուսադրիւր
59.—	Ե. ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ — ՄԻՆԱՍԵԱՆ	Բաղդատական խորհրդածութիւններ՝ ազգային — ժողովրդական գիւցազնավեպերու մասին
69.—	Ա. ԱԼԻՔԵԱՆ	Սփինքս
70.—	»	Անունդ
71.—	»	Հայաց լեզուն
72.—	»	Խօսք
74.—	Յ. ԳԵՂԱՐԴ	Հին օրերու կարօտ
75.—	»	Լիբանան երկինքին մէջ
85.—	ԳԱՅԼ ՎԱՀԱՆ	Յամուսն պարկեշտութեան
87.—	Գ. ՇԱՀԻՆԵԱՆ	Հոգեկերտում
93.—	Կ. ԱՐՄԵՆԵԱՆ	Խաչելութիւն
96.—	»	Աղբշուքիւն
97.—	»	Մեր ուսուցիչներէն՝ Կարօ Սասունի
102.—	Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ	Շ. Նաբուցի՝ բացարձակ մերժումը ներկային
109.—	Գ. ՊԸԼՏԵԱՆ	Տօնական խորում
111.—	»	Եղիա Տեմիրբիպանան՝ անգործ
125.—	Ե. ՏԱՅՆԱՊԵՏԵԱՆ	Հոգեկերտում եւ գրականութիւն
130.—	***	«Բաղբշ»ի 1987ի բովանդակութիւնը



Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՋ. ՏԱՐԻ ԹԻԻ 11-12 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵՍԵՄԲԵՐ 1987 ՊԵՏՐՈՒԹ

10436-84p

ՆՈՐ ՆՈՒԱՃՈՒՄ ՆԵՐՈՒ ԿԱՐՕՏՈՎ...

Անցեալ տարուան վերջին ամիսներէն մինչեւ այս պահը. մեր ժողովուրդին մէկ մեծ զանգուածը, Սփիւռքի գրեթէ բոլոր անկիւններում՝ բացառիկ խանդով մը տօնեց «Համազգային»ի հիմնադրութեան վաթսուն, իսկ ձեմարանի գոյութեան յիսուն ամեակները, որտաքուի մասնակցութեամբ մը յայտնելով իր երախտագիտութիւնը այդ բազմանիւղ ու բազմաբովանդակ հաստատութեանց երկկուան բերքին, ու հաւատքով՝ անոնց վաղուան հանդէպ:

Ժողովրդային հանդիսութիւններու թէ ձեմարանի նոր հասարկութեան կառուցման ի խնդիր տեղի ունեցած մասնաւոր հանդիպումներու առեւ պարզուած ոգեշունչ իրադարձութիւններուն դիմաց՝ «Բազմ»ը չէր կրնար անտարբեր մնալ, անո՛ր համար մանաւանդ, որ հայ գրականութիւնը, ի՛նչ մասնաւորի Սփիւռքի գրականութիւնը, իր կարգին, մեծապէս երախտաւարտ է «Համազգային»ին եւ «Համազգային»ի ծոցին յղացուած ու ձեւաւորուած ձեմարանին, անարձրական հունձքին, քանի մը սերունդի վրայ, անոր հնգամեակին լրումէն ցայտօր:

Այդ իրականութիւնը ունի շօշափելի դարձնելու համար՝ խմբագրութիւնն առաջիկայ կազմել այս բացառիկը, որուն պատկերը վստահաբար պիտի մզէ հայ գրականութեան բախտով շահագրգիռ մարդերը, որ ձեռք բերուած արդիւնքին առջեւ անգամ մը եւս խոնարհեմ իրենց գլուխը:

Պարտ է մեզի անմիջապէս յիշեցնել, որ մեր այս ձեռնարկին մէջ հաշիւ չէինք կրնար առնել ու չենք առած նեմաբանականներուն մտքի եւ հոգիի դրսեւորումներուն ամբողջական պատկերը: Կարելի չհղաւ նոյնիսկ մերձ-գրական դէմքերուն էջ բանալ, որպէրբերու, հանդէսներու, պար-

բերագիրքներու մէջ վաստակած անձերուն, հրապարակագիրներուն, յող-
ւածագիրներուն, ուսումնասիրութիւններ ու քննադատական էջեր ստեղծող
անձերուն, դեռ չհաշուած իրենց վաղ երիտասարդութեան գիրք
հրատարակած ու հետագածները կամ ուշ հանդէս եկած ու դարձեալ լուծ
միւսները: Մնաց որ, մեր նպատակը համապատկեր մը կազմել չէր այս առի-
թով, այլ՝ պատկեր մը միայն, ուր երեւին անհետացած դժմօքնէն մէկ-երկու
հոգի, առաջին ու միջին սերունդէն ուրիշ քանի մը դէմք ու այսօրուան
գրական հոլովոյթին մաս կազմող քանի մը երիտասարդ, յատկապէս
անոնք, որոնց առիթով ձեւարարը լրացուցիչ դերերէ աւելի՝ խմբումի
դեր կատարած է:

Ուշադիր ընթերցում մը իսկոյն երեւան պիտի բերէ այն իրողու-
թիւնը, որ հոս մէկտեղուած բանաստեղծներուն, գրագէտներուն թէ մտա-
ւորական գործօններուն կուտակած բերքը քիչ չէ քանակով, ու քիչ չէ օրա-
կով. մա՛նաւանդ այլազանութեամբ:

Թերեւս անհրաժեշտ է առանձնացնել վերջին յատկանիշը,՝ այլազա-
նութեան որակը:

Շնորհիւ իր հիմնադիրներուն հոգիին խորութեան ու խոհերուն
լայնութեան, ձեւարարը առաջին օրէն ունեցաւ ու այնուհետեւ պահեց
ներկայացող խմբները իրենց իրենց մէջ անեցնելու ոգի մը, եղաւ աւելի
ներշնչարան մը. քան ընթացիկ առումով դպրոց մը: Ա՛յդ է պատճառը հա-
ւանաբար, որ մտքի ու հոգիի ասպարէզներուն մէջ, հիմնադիրներուն ու
անոնց յաջորդներուն կողմէն՝ տարբեր մարդեր երեւին եւ ոչ թէ հետե-
ւորներ, ա՛յդ է պատճառը դարձեալ, որ ճեմարանականներուն մէջ գոյու-
թիւն ունին գրականօրէն օրինապահ յետնորդներ, անիշխանականներ եւ
որոնման տեղիէն բռնուած ուրիշներ:

Քննարկ պարագաներուն, սակայն, քննարկն ալ իրենց շնորհներուն
յայտնաբերումը կը պարտին այդ հաստատութեան խռովիչ դժմօքնուն,
որոնք՝

Անցեալ մը ունէին իրենց ետին, ու անցեալին հետ՝ այրող տեսլական
մը.

Հոգի մը գգայութիւնը ունէին, ու այդ գգայութեան հետ՝ վարակիչ
շունչ մը.

Գիտութիւն մը ունէին, ու գիտութեան հետ՝ հաւատք մը.

Վաստակ մը ունէին, ու վաստակին հետ՝ պարզութիւն մը.

Կեանքի փիլիսոփայութիւն մը ունէին, ու փիլիսոփայութեան հետ՝
լայնախոհութիւն մը:

Արժանիքներու այդ գումարով էր, որ ձեւարարը ձեւարան եղաւ.
մնաց իբրեւ այդ՝ փոխանցուած ու երկարաձգուած ոգիով. առ իմքնա՛յ բով
մը, մեծ ապրումներով ու այրող հեռանկարներու լոյսով շաղախուած ա՛յն
ձգողականութիւնը, առանց որուն ո՛չ խմբում տեղի ունեցած է, ո՛չ ծլար-
ձակում եւ ո՛չ ալ պտղաբերում:

Աւանդութիւններով ու վաստակով հարուստ դպրոց մը՝ ձեւարա՛-
նը, որուն մեր ժողովուրդը կը նայի առաջին օրերու ակնկալութեամբ, կը
շռայլէ ամէն ինչ անոր համար. որպէսզի վաղը դարձեալ իր մէջ կարենայ
ունենալ իրենց իրենցմէ աւելցած մարդեր, մտքի մարդեր, հոգիի մարդեր,
յաւիտեանական արժէքներու երկրպագու եւ նոր նուաճումներու ցնորքնե-
րով կեանքը հարստացնելու իրենցմէ փայլուն փայտերը:



ԱՆՆԻՐԱՆԻԿ ԵՐԱՌՈՒԿԵԱՆ

Առաջին ճանապարհները: Քեզու ուրա
մ 1933ին: Երեսն է 1912ին, կերպ: Նախնական

կրթությունը կր աստուայ Հայկ պրոֆեսորները, ապա՝
Ազգ. Հայկական մանկավարժական մեթ. ու բն. շրջա-
նում առաջինը եղավ, 1931ին կր յաճախել Պետական
Հայ ճանապարհը, ուր էր կր աստուայ իր երկրորդ ա-
կան ուսումը:

1933ին կր յաճախել կրթական մարզ էր շուրջ 20
տարի կր յաճախել առաջարկվել իր բն. ուսումը էր
տնտեսական: Առաջինը բնական տնտեսական՝ 1941ին, Հայկ-
պի մեթ. կր հիմնել Վնայի իր պատրաստվածքը, որ
1945ին կր վերածուի առաջարկի: 1951ին, Վնայի-
րիս առաջարկը կր սկսել հրատարակել Պետական
մեթ. էր յաճախել տնտեսական կր վերածուի շարունակական:

Ի պրոֆեսորական գրասենյակներում սկսած՝ Վ. Պաճապ
և Ա. Մառ գրական ներքին կ'աշխատակցի ափսոս-
քալույց մասին: Երբեք էր կր պարտավոր յաճախել
Վնայի իր ճանապարհը էր լեռն էր լեռն էր լեռն էր լեռն էր
ներքին: 1933ին, Վ. Պաճապ գրական ներքին, կր հրատա-
րակել իր առաջինը գործը՝ Վնայի իր պատրաստվածքը, որ
1945ին կր վերածուի առաջարկի: 1951ին, Վնայի-
րիս առաջարկը կր սկսել հրատարակել Պետական
մեթ. էր յաճախել տնտեսական կր վերածուի շարունակական:

Ներկայիս, Ա. Մառու կենտ կ'ապրի Փարիզ:

Ա. ԵՐԱՌՈՒԿԵԱՆ

ՅԵՏ ՄԱՀՈՒ ՏԵՍԻԼԲ

Այժմեր գոց ու սրտիս մէջ տխրութիւն մը խորունկ,
Մարմինիս վրայ խաղաղութիւն մ'անսահման,
Կը մտածեմ ես հեռաւոր այն օրուման
Եւ օրերուն դեռ յաջորդ՝
Որոնց պայծառ արեւին պիտի ըլլամ անհաղորդ...

Կը մտածեմ վայրկեանին, ակընթարթին գերագոյն,
Հակառակորդ երբ անին իր թաւալքին հետ վերջին,
Պիտի մարմինըս հողին, մեռել հողիս՝ աստղերուն...
Պայծառափայլ, տաք իրիկուն մը ամրան,
Տուններուն բարձր մասին՝ մեռնող շողերն արեւուն.

digitised by A.R.A.R.@

Միջոցին մէջ բռնու մներ, ծիծեռնակի նոռուղիւն,
 Մութացիկի մը պաղատանք տխուր,
 Զուարթածայն մանուկներու ճիչը սուր:
 Դառերու շարքը անշարժ գով հովերու կարօտով՝
 Թեւատարած սպասում...
 Մայրերուն վրայ բազմութիւն, տենդ, երթեւեկ ու յուզում...
 Ու յամբարնաց, լուռ թափօրի մը առջեւ,
 Դագաղըս ո՛րք՝ հին ծածկոյթի մը տակ սեւ...

Աչքերս գոց կը տեսնեմ...
 Բարի անցորդ մը, յանկարծ,
 Մայրին վրայ կ'անշարժանայ գլխաբաց,
 Ու անախորժ հանդիպումէն այդ դժգոհ
 Քովի մարդուն՝ ծանր ու լուրջ, կու տայ հարց.
 — Ո՞վ է մեկնողն այս անդարձ...

Յապաղումէն իր ամսկոտ,
 Կ'երթայ նայուածքը մարդուն որոնել դէմք մը ծանօթ
 Թափօրին մէջ յամբարնայլ.
 Ետ կը դառնայ անայլայլ,
 Պատասխանի սպասող լուռ անցորդին,
 Եւ ցնցումով մը ուսերու անտարբեր՝
 Կ'ըսէ մեղմիւ.— Զեմ գիտեր...

Կ'անցնի դագաղըս այսպէս նայուածքներու տակ օտար,
 Անցաւ իմ կեանքս՝ ինչպէս ձմրան գիշեր մը խաւար...
 Ու կը հասնի, պահ մը վերջ, կեանքէն ի մահ ընթացող,
 Այլ դէպի տուն, ապահով դարձին զուարթ ու շէնչող
 Քաղցր հեշտանքը սրտերնուն մէջ կրող
 Մարդոց թափօրը լռին՝
 Մեռելներու յանձնարարութեան քաղաքին...

Արմկայեց բրիչին ու խոնջէնքէն քրտնաթոր,
 Ի պաշտօնէ՛ս սգաւոր
 Մեռելաթաղն՝ անհամբեր...
 Փոս մը, աղօթք ու տէրտէք.
 Քիչ մը արցունք, փսոսանք, ու նաեւ կեղծ ծաղիկներ.
 Բարեկամի մը կողմէ,
 Յիշատակիս յանձնարած վեհանձն հառ մը գուցէ...

Տախտակներուն վրայ խոհի հողին աղմուկը քափուռող...
Շիրիմներու մէջ հարուստ, դամբաններու խոփ մարմար՝
Նոր հողակոյտ մը ազգատու հանգչող կեանք մը թշուառ...

Աչքերս գոց կը տեսնեմ...
Ստուերներուն հետ մօտեցող գիշերուան,
հումք մը մարդիկ թաղումէն տուն կը դառնան:
— Ազատուեցա՛ւ հէֆ տղան... — կը խօսի մէկը կամաց,
— Երիտասարդ էր թէեւ՝ բայց բռնութիւն ծե՛ր գնաց... —
Կ'ըսէ ուրիշ մը բովէն:
Շարժապատկեր մը ինչպէս կը փակուի կեանքս արդէն,
Կ'անցնին օրերըս տրտում մշուշներէն իրենց մերկ,
Կ'ըլլայ հեֆիաթ մը յայնժամ՝ կեանքը որ ի՛մս էր երէկ...

Կ'ըլլայ հեֆիաթ ու մշուշ, ու կ'ըլլայ վէն ու գրոյց,
Բարին ու չար, լաւն ու վատ կ'ըլլան անվերջ մատնացոյց-
Կը պատմէ մէկը կեանքէս, կ'ընէ ուրիշ մը ճշդում,
Մէկն ունի քէն մը շատ հին, երկրորդն՝ յուշեր անհատնում...
— Աստուածներէն պատուհաս՝ ունենար ցաւ մը իրբեւ...
Աչքերուն մէջ կար արցունք, մերթ փոքորիկ, մերթ արեւ-
Ականջներուն մէջ հնչէր միշտ կարծես ձայն մը գուժկան,
Մոգաւանջներ հալածող այսահարի էր նման...

— Կը սիրէր ձեռն ի ծնօտ նստիլ ֆարի մը վրայ,
Ունկընդիր լոկ պարապին եւ ինքն իրմէ բացակայ-
Կամ միայնակ ու գինով,
Մագերն անկարգ գեփիւռի մը յանձնած խօլ քմայքին,
Կը յամենար գիշերին ու մայրերուն երկայնքին-
Կարսուած սէ՛ր մը արդեօք, անյագ կարօ՞տ մը ծածուկ,
Կուրծքին տակ վերք մը գուցէ՝ անբուժելի ու խորունկ...

— Մըրիկ՝ օրերն իր բրաւ ու սիրտը լայն ռազմադաշտ-
Ունէր ռիսեր բիրակերպ, ատելավառ ու անհաշտ-
Բարեկամներ՝ խիստ սակաւ, թշնամիներ՝ անհամար,
Կարծես արիւնն անհանդարտ երակներուն մէջ կ'եռար...
Սպանեց կեանքն անհաշիւ պայքարներու մէջ ունայն,
Խենթ ու գինով այս տղան...

— Եղաւ մահուան դէմ անփոյթ, նակատագրին դէմ անհոգ,

Ու եղաւ կեանքն իրեն դէմ՝ մօր մը պէս խորթ, անողոք...
Աչքերս գոց կը տեսնեմ...
Ամառնական մեղմ ու անձը իրիկուն,
Ձայներ՝ զուարթ ու հնչեղ...
Կը հասնի խումբը փառաբան լոյսերուն
Ու կ'անցնէ կանգ՝ փառաբանի մը մէջտեղ...

Ֆանկարծօրէն կը յիշէ մէկն.— այս գիշեր,
Կար խնճախի՞ հրաւեր...
Գինեւեղան, ծափ ու ծիծաղ, երգ ու պար...
— Ա՛հ, քաղումն այս քէ չըլլա՛ր... —
Ուշ է արդէն: Հարկ է շուտով տուն հասնէր.
— Գիշեր քարի՛, ընկերներ...

Գիշեր քարի՛ եւ ուրիշ մը կը յիշէ եռանդով,
Թէ քիչ յետոյ, տեղ մը ունի ինք ժողով
Ու կարեւոր օրակարգ...
Հարկ է հասնիլ, մետուիլ իսկոյն հանրակառք.
— Տեսնուքի՛ւն, ընկերներ...

Լոյսերու մէջ կը հոսի փողոցն ալիք առ ալիք,
Բազմութիւններ կը փրփրին, կ'անցնին գոյգեր երջանիկ.
Կը խայտայ կեանքն ալեկոծ ու խռով,
Հայնատարած, ամենակուլ յարպէս ծով:
Ալիքներուն մէջ անսահման այդ ծովուն,
Կ'անհետանան, կը լուծուին՝
Յիշատակիս դեռ կառչող քարեկամներս վերջին...
Աչքերս գոց կը տեսնեմ...
Մեկնող խումբէն, փառաբանի մէջտեղ, լո՛ւռ
Երկու հագի, դեռ անորոշ ու տխուր,
Կը մտածեն քիչ առաջ իրենց ճեղքով հոգերուն
Տրուած տղու մը մասին, որ ամէն օր, այդ պահուն
Կ'ըլլար իրենց ուղեկից, կը փախէր նոյն ճամբայէն,
Ու կը խօսէր, կը ժպտէր, մերթ լուսկեաց ու մերթ շէն...

Կը շարժի բան մը սրտերնուն մէջ շատ տաք...
Ունին խռովք, ու յոգնութիւն, ու պապակ...
Ու կը փայլեն քովէ քով խորասուզուած ու դանդաղ,
Դէպի մեր հի՛ն ժամադրաւոր խաղաղ...

digitised by A.R.A.R.®

Կր մտնեն ներս ու անշշուկ կը նստին,
Մեր մտերիմ անկիւնին սեղանին շուրջ սիրելի...
Շիշ մ'աղմուկով կը բացուի,
Ու բաժակներ կարկաշատայն կը լեցունին...

Երկու հոգի, կը մային պահ մը երկար
Պարապ ու ռրբ աթռոխն՝ ուր նստիլ մէկը կրնար...
Երկու բաժակ կը բարձրանան, կը բախին՝
Խաղաղութեանը համար բացակային հոգիին.
Ու քիչ մը դա՛ռքն անշուշտ, քիչ մը գծաւար ու տխուր՝
Կը պարպուին ցմրուր...



ԾԱՂԿՈՑ



Մեծ դէպքը պատահեցաւ անակնկալօրէն ու կազմեց դարձակէտ մը
Մանկապարտէզի կեանքին մէջ: Իրիկուն մը նոր որբեր բերին, պզտուտ,
ածգոյն, պատուաւոր հագուստներով սղոց բողբոջներէն մը: Մեզ շարեցին
չորս-չորս, հասակի կարգով, ու ճիշդ կէսէն կարեցին շարքը: Պոչը մնաց Ման-
կապարտէզ, իսկ մեծերուն յայտարարուեցաւ, թէ պիտի մեկնին ուրիշ շէնք մը,
տեղ բանալու համար նորեկներուն:

Շաղկեցինք անկողինները ու գացինք մեր նոր տունը, ուր կային արդէն
ուրիշներ, մեզմէ աւելի հասակաւոր աղաք: Այդ շէնքը կը կոչուէր Մաղկոց եւ
փոխանցման կայան մըն էր Մանկապարտէզին եւ մեծ տղոց բաժիններուն մի-
ջեւ: Մաղկոցին բնակիչ դառնալու հանգամանքը ինքնաբերաբար կը բաժնէր
մեզ Մանկապարտէզէն, մէկ օրուան մէջ մեծցնելով մեր տարիքն ու հասակը:
Բակը պզտիկ էր, բայց ընդարձակ սենեակներ կային: Երեսուն-քառասուն հո-
գի հանգիստ տեղաւորուեցանք ամէն մէկ սենեակի մէջ, առանց խնդոյթի:
Հիները, որոնք մասամբ զպրոցականներ էին, գրաւած էին վերնայարկի լա-
ւազոյն երեք սենեակները: Նախընտրելի էր անշուշտ վերը պառկել, բայց մեր
բոլոր փորձերը անյաջող անցան ու չկրցանք թափանցում կատարել անոնց
կալուածէն ներս:

Շուտով հասկցուեցաւ, թէ Մաղկոցը մեզի համար պիտի ըլլայ ազատու-
թեան օրրան մը: Մայրիկ մը ունէինք, որ ցերեկը կը մնար Մաղկոցին մէջ, բայց
գիշերը կ'երթար իր տունը: Հսկիչները չունէին Մանկապարտէզի հսկիչներուն
խստութիւնը, ոչ ալ հեղինակութիւնը: Ծաշի եւ քանալու զանգակները կը
զարնուէին, կարծես, յարգելու համար ձեւականութիւնը: Հսկիչները կ'եր-
թային զպրոցականներուն հետ, ու ամբողջ օրը ազատ էինք: Բակին պզտի-
կութեան պատճառով արտօնուած էինք խաղալու դուրսը, մեր առջեւի փողո-

ցին մէջ: Կարճատեւ շրջան մը տեւեց ազատութիւնը, Հագիւ քանի մը ամիս: Յետոյ փոխուեցաւ: Մաղկոցին շէնքը, նաեւ վարչաձեւը: Բայց այդ կարճ ժամանակը բաւեց, որ անխնայութեան սերմերը առատօրէն ծլարձակին մեր մէջ, եւ անկարգապահութեան ճաշակը այլեւս անբաժան ըլլայ մեզմէ, որքանոցի աճողը տեւողութեան եւ, ոմանց համար, նաեւ իրենց ամբողջ կեանքին ընթացքին...

Նախ, վար տոհմը Մաղկոցի պատուհաններուն բոլոր ապակիները: Երկրորդ օրը կարգը հասաւ շրջակայ փողոցներու թաղապետական լապտերներուն: Այդպէս նշանաւորութիւններով, քուրջէ մեր ծանր պնդակները վերջ տուին թաղին լուսաւորութեան: Վարանումով, վախով՝ բայց հետզհետէ ընդարձակեցինք զործունէութեան մեր սահմանները ու բնական դարձաւ այլեւս շրջիկ քաղաքին մէջ եւ վերադառնալ ճաշի պահերուն:

Մէջտեղ ելան արշաւախումբեր, որոնք կազմակերպուած գործունէութեամբ եւ շահակցական ընկերութիւններու հիմունքով Մաղկոց կը բերէին քաղաքին հեռաւոր մասերէն հզօտուած առարկաներ ու կը ծախէին միւսնեան: Ամենէն գործունեայ եւ զօրաւոր խումբը Ձէշոտ Կարպիսինն էր: Կատարեալ հրոսախումբ մը, որ մինչեւ կայարան կը հասնէր եւ զինուորական վրաններէն ու զօրանոցէն ձեռք կ'անցընէր թիթեղէ տուփերով պահածոյ միս, ձուկ, անուշեղէն, ածելիի լեզր, չապիկ, գուլպայ եւ, մանաւանդ՝ սպունգի պէս ծակ-ծուկ, բայց շատ ճերմակ հացեր, ահապէն մեծու թխումը: Ամբողջ պահարան մը վերածած էին խանութի: Իրենց ապրանքը դպրոցականներուն կը ծախէին գիրքով: Գիրքերը կը ծախէին գրավաճառին՝ գրամով: Դրամը կը պահէին: Ծառ մը դպրոցականներու պայուսակները այսպէս պարպուեցան, լեցնելով Կարպիսին եւ ընկերներուն գրպանները մեծ ու պղտիկ պարզուտներով: Կարպիսին խանութը առեւտուր կ'ընէր նոյնիսկ հսկիչներուն եւ Մայր բիկին հետ:

Կային ուրիշ խումբեր ալ, բայց ոչ մէկը կը հասնէր Կարպիսին տոց քարգաւաճութեան: Մեր խումբը մանաւանդ, միշտ կը դառնար ճշմօտ արդիւնքով: Սր մը հասանք մինչեւ կայարանին շրջակայքը, որ զինուորներուն տեղն էր: Կը կարծէինք, թէ զժուարը հոն հասնելն էր եւ անգամ մը վրաններուն մօտենալէ ետք, ամէն բան աստ ոյիտի պտնէնք մեր ոտքի: Մնացինք ձեռնու նայն: Փշաթելերու ցանկապատ մը կար, որմէ ներս երբեք չհամարձակեցանք մտնել: Ժամերով թափառեցանք փշաթելերուն քով: Ամէն կողմ թիթեղէ պարապ տուփեր, բանջարեղէնի մնացորդներ եւ աղբիւս: Ծնորհիւ Պետրոսին, մասամբ արգիւնաւորուեցաւ սակայն մեր յանդուզն ճամբորդութեանը: Թիթեղէ տուփերէն շատերուն՝ մնացած էին բանալիները: Պետրոս յայտնեց, թէ ատոնք արժէք ունին եւ քսան հատը կրնանք ծախել մէկ պարզուտ տի:

Սկսանք տեղադիրներէն բանալիներ փնտռել եւ հաւաքել: Երբեմն թիթեղին բացուած շերտը շատ ամուր ոլորուած կ'ըլլար բանալիին վրայ, զժուարութեամբ կը քակէինք ամուր ոլորները եւ մեր մատները կ'արիւնէին արածայր թիթեղներէն, բայց կարեւորութիւն չէինք տար: Հարիւրաւոր բանալիներ հաւաքեցինք աղբակոյտներուն մէջէն, շարեցինք թելի մը վրայ եւ ինկանք լուսկաները: Ոչ ոք ուզեց պնել: Ոմանք կը մերժէին անտարբերութեամբ, ուրիշներ կը փոխէին: Արդէն խանութպաններուն համար քաղաքին մէջ վիտացող որբերուն տեսքը անհաճոյ էր ամբան ճանճերուն պէս, յաճախ աւելի նեղացուցիչ եւ վտանգաւոր: Ի վերջոյ յաջողեցանք ծախել մեր բանալիները մէկ օխտ վաւրու նպով:

Ինչպի որբանոց դարձի մեր ճամբուն վրայ հանդիպեցանք Կարպիսին խումբին ու պատահաբար ակամատեսա եղանք տնոնց յիշատակելի մէկ սիրտ-զործութեան: Հիացումով ու սոսկումով սորվեցանք այդ օր Կարպիսին եւ ընկերներուն գործունէութեան գաղտնիքը: Մեր աչքերով տեսանք, թէ որքա՞ն սուղ կը վաճառէին անոնք իրենց խանութին ճոխութիւնը: Ռազմավարութիւնը հետեւեալն էր.— Կարպիս երկու-երեք ընկերներով յարձակում էր գործէր միակ կէտի մը վրայ, ընդհանրապէս մեկուսի խանութ մը: Ամէն մէկը բան մը խլելով խոյս կու տար տարբեր ուղղութեամբ: Խանութպանը ստիպուած էր հետապնդել մէկը միայն, լքելով միւսները, որոնք կը յաջողէին անհետանալ իրենց գողօններով: Հալածուողը կրնար բռնուիլ, ծեծուիլ, գողցածը կորսնցնել, բայց ատիկա նշանակութիւն չուներ իրեն համար: Գիտէր, որ ազատ-ւած ընկերները երբեք պիտի չփորձեն իւրացնել իր բաժինը: Մէկը բոլորին եւ բոլորը մէկին համար: Կարպիսին խումբը տառացիօրէն կը գործադրէր այս գեղեցիկ սկզբունքը, ամէնէն տգեղ գործունէութեան մէջ իսկ...

Այդ օրուան յարձակումը գործուեցաւ որբանոցին մօտիկ շուկային մէջ, ծայրի նպարտմանաւր վրայ: Մենք ո՛չ միայն կրցանք զիտել մօտէն, այլեւ դէր մը վիճակուեցաւ մեր խումբին: Ակամայ կատարեցինք յետապահի պարտականութիւնը, օգնելով Հերթական արկածեալին: Կարպիս եւ իր երեք ընկերները կայծակի արագութեամբ ինկան խանութի վրայ ու նա-հանջեցին նոյն թափով: Ըստ սովորութեան, ամէն մէկը բռնեց միւսին ներհակ ուղղութիւն մը: Գործողութեան վայրը քառուղիի մը բերանն էր ու մեծապէս կը նպաստէր Կարպիսին ռազմագիտական ծրագրին: Խանութպանը, յաղթանդամ արար երիտասարդ մը, ինկաւ Միսակին ետեւէն, որ կը վազէր մեր կողմը: Որոշ էր, թէ Միսակ պիտի բռնուէր: Ձեռքերուն մէջ խոշոր կոյտ մը ար-մաւ կար, որ կ'արգիլէր իր ազատ վազքը: Արարը կը մօտենար հայհոյելով, եւ ձեռքի կշիռը շարժելով: Միսակ նետեց արմաւը, թափ առաւ, բայց չկրցաւ հե-ռուն երթալ: Խանութպանը հասած էր: Երկաթէ կշիռքին թեւով, բազմաթիւ հարուածներ իջնալ: Միսակ սկսաւ լալ, պաղատիլ, ոռնալ: Անօգուտ: Սոսկալի ծեծ մը կերաւ: Մարդը յետոյ հաւաքեց քիչ մը անդին ինկած արմաւը ու գնաց իր խանութը:

Արար միւս խանութպանները չէզոք դիտողի դերը մը պահեցին, Միսակին խոշտանգուած պահուն: Բայց միւսին մեկնումէն ետք, երբ տեսան արիւնդուայ վիճակը, չբնապատեցին Միսակը՝ ետ՝ հարաւ, ետ՝ հարաւ թա-ցազանչութիւններով: Օգնեցին մեզի, որ չայկենք Միսակը եւ բերենք տուն, մեծ գիւտարութեամբ: Իրիկունը հիւանդանոց տարուեցաւ Միսակ: Մէկ սրունքը ջախջախուած էր: Հիւանդանոցէն կլլելէ ետք ալ, դեռ երկար ատեն անթարցուպով կը քալէր:

Այս դէպքին պատճառով, Մաղկոցի աղատութիւնները մասամբ կաշ-կանդուեցան: Դոնապան մը դրին, դուրս ելլելը արգիլեցին, բայց անօգուտ: Բարի եւ անճարակ ծերուկ մըն էր գոնապանը: Որեւէ մեւով կը յաղկէինք սիրտը շահիլ եւ դուրս ելլել:

Թութի եղանակն էր: Հոսանք մը կար Մաղկոցին մէջ առատն կանուխ պարտէզները երթալու: Պատիկ պարզուտ մը կու տայինք պարտիզպանին, եր-կու հողիի համար, եւ ազատօրէն կը բարձրանայինք մեր ուղած թութի ծառը: Կրնայինք ուտել այնքան, որքան որ կարելի էր, բայց իրաւունք չունէինք հե-տերնիս թութ տանելու: Մեզմէ մաս մը կը մտնէր պարտէզ, վճարելով: Միւս-ները կը սպասէին գուրսը եւ յարմար բոպէին կը յաջողէին սպրդել ներս եւ շուլլուել ծառէ մը վեր: Պարտիզպանները առհասարակ բարեացակամ էին: Կը բաւէր, որ քանի մը հողի վճարող գտնուէր: Աչք կը գոցէին միւսներուն:

Օր մը սահայն մեծ խուճրով մտանք պարտէզ մը: Պարտիզպանը մէջտեղ չկար: Ամէն մէկն ծառի մը վրայ, լուռ եւ գոգունի, արագ-արագ, կը լափէինք մեղրահամ թութիւնք: Փունի մը գորոցականներ կային մեզի հետ, մեծերէն: Բաւական տեսք մեր ապաստ վայելքը: Վերջապէս հետուէն երեւցաւ պարտիզ-պանը պոռչաւոր քներով: Մենք յաջողեցանք փախուստ տալ անանց բռնուելու: Բայց կարգ մը ձախողութիւններ պատճառ դարձան, որ նոյն օրն իսկ Հայրիկը Մաղկոց այցելէ ու, ծանրակշիռ դէպքերով լեցուն մթնոլորտի մը մէջ, վերջ գրուի թութի արշաւներուն:

Քովի պարտէզը մանուշ խուճրէն իջնա Արբանձակին աշտին քար մը հանդիպած էր, փախուստի պահուն: Վերաւ որում էր նաեւ ոտքը՝ պատէն ցատկած պահուն: Ոտքը բուժուեցաւ, բայց մէկ ուշքը կոյր մնաց: Մեր խումբ-րէն, գորոցական Յարութիւնը, անապարանքին մէջ պայուսակը մոռցած էր ծառին տակ: Ամէնէն գեղեցիկ պայուսակն էր իրը, դիրքերով եւ տեսարանն-բով լեցուն: Հայրիկը երբ հեռանդանցէն Մաղկոց եկաւ, բոլորս այլ հասկանք անմիջապէս, թէ անտոյր բան մը պիտի պատահի: Երբեք այդպէս զայրացած չէինք տեսած Հայրիկը: Որոշ էր, թէ Արբանձակին վիճակն էր դժբախտ պատճառ-ը իր զայրոյթին: Քննութիւն մը բացաւ, ճշդեց պարտէզ մանուշները: Ու երբ յայտնի եղաւ, թէ Յարութիւն պայուսակը հոն թողած է, մոռցաւ մեզ ու կա-տաղութիւնը թափեց անոր վրայ: Ձէինք տեսած Հայրիկին ծեծելը: Ձտեսանք նաեւ այն օրէն յետոյ: Բայց ինչ որ պատահեցաւ Յարութիւնին, բաւեց, որ հաւանաբար բոլորս ալ, թէ Հայրիկին մարակը պարզ խաղալիք մը չէ իր ձեռքին մէջ:

Երկու հակիչները անշարժացուցին Յարութիւնը, ձեռքերէն ու ոտքե-րէն, Հայրիկը սկսաւ հարուածել մէջքին ու յետոյքին, երբեմն կանգ առնելով, բայց կրկին հարուածելով, առանց մեղմացնելու ծեծին սաստկութիւնը: Այն-քան ծեծ կերաւ Յարութիւն, որ Հայրիկին մեկնումէն ետք չկրցաւ բարձրանալ վերնայարկի իր սենեակը ու քաշկոտուեցաւ մեր քով:

Անկողինները փռեցինք եւ այդ ծանր օրուան խոնջիւնքին եւ տիրու-թեան հնչումով սկսանք պառկել: Յարութիւն երկնցած էր իմ անկողնիս քով, գետիւնը: Պառկած էր փորին վրայ, թեւերը դիտուն տակ բարձ ըրած, եւ կու-լար:

Անտանելիօրէն տաք գիշեր մըն էր: Փունս չէր գար: Մուկներու եւ ջրափնէի մէջ, տեսարար կը գտնայի ալ ու ձախ, ժամեր շարունակ, բայց չէի յաջողութիւն քնանալ: Յարութիւն այլեւ չէր լար, բայց կը պահէր նոյն դիրքը: Խոզ Յովհաննէսը սկսած էր խոկալ: Կը նշանակէ, թէ այլեւս արթուն մարդ չկար սենեակին մէջ: Եթէ զանգակը պառկելու ազդանշանն էր, Յովհաննէսին խոկոցը ապացոյցը կարելի էր նկատել, թէ սենեակը քունի մէջ է: Այդ ազան-բոլոր սենեակներէն քունած էր խոկոցին համար ու ինչպէս էր մեր սենեակը: Եթէ փորձուէր ուրիշներէն առաջ քնանալ, արթուն եղողները կը ժայնէին:

— Խոզը սկսաւ...

— Բարձը իջեցուր...

— Ջուր թափեցէք...

Այնքան շարժարած էին խեղճը, որ վախէն կը սպասէր, որ միւսները քնանան, որպէսզի այլեւս գինջ նեղող լըլըլայ: Համեստ եւ լաւ ազայ մըն էր Յովհաննէս ու խոզը յիշեցնող օրեւէ բան չուէր վրան: Հաւանաբար այդ մակդիրը արուած էր իրեն խոկալուն համար: Յարութիւն իր տեղն էր գնաւ, ինձէ երկու թիզ անդին: Ձայն տուի:

— Աղբարիկ, արթուն ես...

— Արթուն եմ...

— Կը ցաւի...



Հիմարանի տոպիկ շէնքը (Քանթարի)

Պատասխանի փոխարեն՝ շարժեց սրունքները, ձեռքը հստակ տարաւ ու տքալով ետ քաշեց: Քանի մը անգամ «ա՛խ» ըրաւ, փորձեց շտկուիլ, բայց չկրցաւ: Յայտնապէս ցաւերը արգելք էին նստելուն:

Յարութիւն քանի մը տարիով մեծ էր ինձմէ: Հայրենակիցներ էինք եւ իրարու հաղորդիկ էինք: Երբ դպրոցէն դար, պայուսակը կը յանձնէր ինձի ու ես ազատ էի գիտելու գիրքերուն պատկերները: Օր մը տետրակ մը տուաւ ինձի, որուն մէջ գունաւոր մատիտով շատ մը պատկերներ գծած էր, մասնաւորաբար կամաւոր Հայ գինուորներ, ճիւղաւոր զլխարկներով:

Գիշերը կ'առաջանար խոզ Յովհաննէսին խոզոցին կշռոյթով: Նստած էի Յարութիւնին քով, բայց չէինք խօսեր: Բան մը ըսած ըլլալու համար, հարցունքի:

— Զուր կ'ուզե՞ս, աղբարիկ...

— Կ'ուզեմ...

Գացի շուր բերի խոհանոցէն. խմեց: Մալոր ունէի, տուի, կերաւ: Վերմակիս մէկ ծայրը նետեցի վրան, թէեւ տաք էր: Ձրուղոցեց: Այդպէս քնացանք այդ գիշեր:

Առտուն, Հայրիկին կողմէ հակիչ մը դրած տարաւ պարտիզպանին, բայց պայուսակը չգտնուեցաւ: Յարութիւն քանի մը օր նստելու դժուարութիւն կրեց եւ այլեւս դպրոց չգնաց: Գիրք չառաւ ձեռքը, նոյնիսկ որբանոցէն ետք: Միաց անդրադալաւ եւ անուս: Գիրքի փոխարէն միշտ մատիտ-տետրակ կար ձեռքը ու կը գծէր: Կամաւոր գինուորներուն տեղ, հիմա իր գլխաւոր նիւթն էր Հայրիկը: Կախուած մարդ մը գծած էր, որուն գլուխը Հայրիկին կը նմանէր: Էշ մը՝ Հայրիկին գլուխով: Մտրակով ծեծուող մարդ մը կար ուրիշ էջի մը վրայ. ծեծողը ինք չէր՝ բայց ծեծուողը Հայրիկն էր: Ուրիշ տեղ մը կոտորներ գրած էր Հայրիկին գլխուն, պոչ մը, կուզ մը լինած էր կոնակին վրայ: Յարութիւն կը յաջողէր զարմանալի նմանութիւն մը տալ իր գծած պատկերներուն: Գծագրութիւնը դարձած էր աւտոբիոյ իր միակ գրազույցը: Տասը տարեկանին յայտնի էր արդէն, թէ ուժեղ բան մը կը խլրտի իր մէջ, որովհետեւ այդ մանչուն կը կոչուած էր ըլլալու Կայենց նկարիչը...

Տարիներ անցան ու տասնամեակներ: Մեծցանք, հասունցանք, բայց մնացինք միեւնոյն հաղբարիկները: Թափառեցաւ Յարութիւն արաբական բոլոր գիւղերն ու քաղաքները: Տառապեցաւ, զրկանքի եւ դառնութեան օրեր անցուց, բայց երբեք չզազրեցաւ նկարելէ: Բացառիկ տաղանդով, ու բացառիկ կերպով հեղինակութեամբ տղայ մըն էր Յարութիւն: Կարդալ հազիւ կրնար — բայց կը նկարէր: Ուսում չուներ — կը նկարէր: Իրաւ չուներ — կը նկարէր: Իսկ երբ ցուցահանդէս մը տար, ծախուած իր նկարներուն առնուազն կէսը գնուած կ'ըլլար ուրիշ նկարչներու կողմէ...: Նկարչներո՛ւն նկարիչն էր Յարութիւն:

Ամուսնացաւ Յարութիւն եւ ունեցաւ աշխարհի ամէնէն սիրուն մանչուկը, որուն անունը դրաւ Արամ: Այն օրէն, երբ աշխարհ էկաւ Արամը, Յարութիւնին համար աշխարհը ամփոփուեցաւ, պզտիկցաւ ու խտացաւ Արամին շուրկներուն մէջ, Արամին թաթիկներուն: Կեանքը եղաւ Արամ ու Արամը եղաւ իր կեանքին միակ իմաստը:

Վերջին անգամ միասին էինք ճիշդ երեք տարի առաջ: Այդ հանդիպումը եղաւ այսպէս: Նստած էինք ծովկերեայ սրճարան մը, բարձր ժայռի մը կատարին: Մեզմէ վար՝ ցից խառակներն էին ու դէմը, հորիզոնի բացերուն, հանգչող փերլայտը: Խաղաղ էր ծովը, խաղաղ՝ երկինքը, խաղաղ՝ իրիկնային պահը: Խաղաղ չէին, միայն, մեր հոգիները: Տաճանիկի վեճէ մը ետք, մեր մի-

Չեւ տիրող լուսթիւնը վերածուած էր ներքին փոթորիկի: Հսկայ նաւ մը կար տեղ մը, նաւահանգիստին մէջ: Մեր նստած տեղէն շէնք տեսներ նաւը, բայց անոր ձեւը մեր աչքերուն մէջ էր, հոգիներուն:

Նաւ մը՝ որ եկած էր Հայաստան տանելու հայերը...

Ծաղկոցի շոր գետիկներէն մինչեւ այդ վերջալոյսը «աղբարիկ» էինք Յարութիւնին հետ եւ մնացած էինք այդպէս: Միշտ հասկցած էինք իրար, կէս բառերով կամ լուսթիւններու լեզուով: Բաժնած էինք իրարու հետ Ծաղկոցի վերմակներէն մինչեւ երիտասարդական օրերու մեր դառնութիւնները, հազարաւոր ուրախութիւնները: Բայց այդ օր, շէնք հասկնար իրար: Անտեսանելի ծուխի սեւ ամպեր կարծես կը խուժէին անձանքիս նաւուն ծխակոյղնէրէն, կը սողային դէպի մեր անկիւնը ու կը բաժնէին մեզ: Ինք եղաւ առաջին խոսողը:

— Ի՞նչ կ'ուզեն ըսեն՝ ես պիտի երթամ...

— Գնա՛...

— Դուն ալ չե՞ս գար...

— Ձեմ դար: Արդէն չեն տանիր...

— Եթէ տանին, կու գաս...

— Ձեմ դար: Առաջ կ'ուզէի՝ չտարին, ըսին՝ կանուխ է: Հիմա կը տանին՝ չեմ երթար, որովհետեւ ուշ է...: Միշտ այդպէս է իմ կեանքիս մէջ: Կամ շատ կանուխ, կամ շատ ուշ, բայց երբեք ժամանակին...

— Ես պիտի երթամ...

— Գնա՛: Դուն կուսակցական չես, եւ այդ խնդիրներէն բան չես հասկընար: Գնա՛: Ու յետոյ, զուէն Արամ ունիս...

Աչքերը շողացին: Արամը: Յարութիւնին համար՝ Հայաստանն ալ դարձած էր Արամ...

Երբ բաժնուեցանք Համբարումէի ետք, ստուերները կ'իջնէին արդէն: Վերջին խօսքս եղաւ իրեն.

— Տար պզտիկ Արամդ Մեծ Արամին երկիրը եւ Աստուած հետդ ըլլալ...

Չհասկցաւ բառախաղին իմաստը: Պատմութիւն չէր գիտեր Յարութիւն: Գիտէր միայն նկարել: Կախեց գլուխը ու գնաց տուն, բռնեց կապեղնու...

✱

Յարութիւնին կրտսեր եղբայրը, Հայկը պիտի մեկնէր իրեն հետ, միեւնոյն նաւով: Վառվառն ու դադափորական տղայ մըն էր Հայկ, հաւատարմորդ կուսակցական մը: Պայման դրին, որ մեկնելէն առաջ ստորագրէ հրաժարականը: Հայկ բնորոշեց պայմանը, յանձն առաւ հրաժարիլ, բայց առանց նուաստացումի, առանց նախատելու իր պաշտած դրօշը, մեղեկները եւ, իր կարգին, պայման դրաւ, որ հրաժարականը երբեք չյանձնուի ժամուրի: Խոստում տուին:

Ձորէջարթի մը նաւ մասն: Խորիւսը պիտի վերնար յաջորդ օրը: Բայց նաւը չմեկնեցաւ: Երկու օրով յապաղեցաւ մեկնումը, նոր հասնելէք ճամբորդներու պատճառով: Վերջին պահուն, նաւ բերում տեղական թերթի մը մէջ Հայկ տեսաւ իր հրաժարականը: Զայրոյթէն դողահար առաւ գոյքերը եւ իջաւ վար...

Նրկու եղբայրներէն մէկը մեկնեցաւ ու միւսը մնաց: Մէկը գնաց, սեղ-
մած իր Աբամը կուրծքին վրայ, ու միւսը մնաց, փայփայելով ի՛ր Աբամը
կուրծքին տակ...

Ուշ գիշեր է հիմա, երբ այս առդերը կը գրեմ: Գրասեղանիս դէմ, պատին
վրայ, կայ Յարութիւնին նկարը, արտում ու անժպիտ: Կը վերակոչեմ հին ու
մօտիկ անցեալը ու սիրաս կը ճմլուի: Այս քաղաքին այսպէս տաք գիշերներէն
մէկն էր Մաղկոցի այն հեռաւոր գիշերը, երբ Յարութիւն ցաւէն կը հռնդար ու
կը ճանկէր գետին խտրը: Կարծես երկու եղբայրները ներկայ են սենեակիս
մէջ, ու անողական պատրանքով մը կը փորձեմ միացնել բաժնուած անոնց
հակառակընդէրը, քով քովի բերել Յարութիւնը, որ հոն է եւ Հայկը, որ հոն չէ:
Հարցում մը կը դողայ գրչիս ծայրը ու չեմ կրնար յաղթել փորձութեան, չնչնա-
լու ես ինծի:

— Յարութիւն, դո՛ւն լաւ ըրիր մեկնելով այնտեղ, թէ լաւ ըրաւ Հայկը,
որ մնաց այստեղ...

Հարցում մը, որ ինծի հետ գիտեմ, թէ կրնան ընել հիմա հարիւր հազա-
րաւ որ հայեր, աշխարհի բոլոր անկիւններէն, բայց քիչեր կրնան գտնել հիշդ ու
արգար պատասխան մը, առանց ծամծմելու բառերը, եղծելու, խեղաթիւրելու:

Բայց այսպէս ուշ գիշերներ կան եւ այսպէս խորունկ պահեր, երբ Մաղ-
կոցի հին աղան կ'արթննայ մէջն ու կը թօթուէ իր ամբարած իմաստութիւն-
ներուն, իմաստակութիւններուն եւ նախապաշարումներուն ծանր բեռը, ինչ-
պէս երբեմն կը թօթուէր ծառերը, ինչպէս վար կ'առնէր թաղին լապ-
տերները, կը փչրէր ապակիները, Մաղկոցի թշուառ, այլ մաքուր աղեկը, որ ես
էի ու չեմ հիմա, կրնայ տալ հարցումին պատասխանը այնպէ՛ս՝ ինչպէս գիտեն
տալ բանտին մէջ հայր մը թաղող եւ աւազներուն մէջ քոյր մը կորսնցնող
սղաքը միայն: Պիտի ուզէի, Մաղկոցի բոլոր ընկերներուն անունով, մեռած-
ներուն անունով, ինծի գաղափարակից եւ ինծի թշնամի բոլոր հայ մարդոց
համար, կրկնել լաւ խտենական ճշմարտութիւնը, որ պատասխանն է բոլոր ան-
ցաւոր հարցումներուն:

— Լա՛ւ բրբր, Յարութիւն: Թերեւս սեւ է հացդ, ներկի տուփդ՝ պարսպ,
բայց լաւ ըրիր: Գուցէ ծանր թաթ մը կայ դաստակիդ վրայ, որ վրձինդ կը մզէ
միայն կարմիր գոյներուն — դու ն որ այնքա՞ն կը սիրէիր հրաշալի ալլազա-
նութիւնը ծիածանին — բայց լաւ ըրիր: Գիտէ՛ ու ռճացող հասակը մատուշ
Աբամիդ ու պատմէ անոր մեր որբանոցին սեւ օրերէն, որպէսզի գիտնայ, թէ իր
ամէնէն մօտը օրը աւելի պայծառ է, քան հօրը ապրած որբանոցի օրերուն
արեւոտ Կիրակին...

— Ու լա՛ւ ըրաւ Հայկը, Յարութիւն: Քէն մի պահեր իրեն դէմ ու մի
մեղադրեր, որ նաւէն վար իջաւ, վերջին ըուպէին: Հայկը այնքան կը սիրէր հայ-
բնէիքը, որքան դուն կը սիրէիր Աբամիդ: Զուգեց իր անձով հայրենիք տանել
գաղափարագութիւն մարդկային խլեակ մը, ինչպէս դու ն պիտի չու գէթի Աբամիդ
տալ խաթարուած պատու մը...: Զեր նաւը բաւական խեղճեք տարաւ արդէն,
որոնք ծովով գացին ու ցամաքով ետ եկան...: Լա՛ւ ըրաւ Հայկը, որովհետեւ
իրեն համար Հայաստանը թոնիրի հաց չէր, վարդազոյն տուփով կառուց-
ւած շէնքեր չէին, քառալուկի գործրանք չէր: Հայկին համար, բոլոր Հայկերուն
համար, Հայաստանը լայնալիճ ազնկով նախահայր հակայ Հայկին գտած հիւ-
սիսային ցուրտ երկիրն էր, ուր չեղնէր ամբողջը կը բարձրանան ուրիշ

լեռներու վրայ, ուր անօթութիւնը կը կազկանձէ, արիւնը կը հոսի, բայց ուր, խաւար ձմեռներու ն թէ՛ դարնան պայծառ արեւածագերու ն՝ ազատութիւնը կը զօղանջէ տաճարներուն խուլ զանգերով, ուր ամէն բան կրնայ քանդուիլ, տրորուիլ, ուր վոհմակներ կրնան արշաւել հիւսիսէն հարաւ եւ քար քարի վրայ չթողուլ, բայց շին կրնար լուեցնել զանգերուն զօղանջը, որ կ'երկարի տասնվեց անգամ հարիւր տարիներէ ի վեր, մեր հոյիտներուն վրայ, մեր անտառներուն: Ու եթէ փլին տաճարները, թաղութի զանգերը, կը շարունակուի անոնց թրթրոնը հողիներուն մէջ, լուսթիւններու թաքուն կշռոյթով...

Օ՛, դու նայաբոլորը գիտե՛մ թէ չես հասկնար, Յարութիւն: Պէտք չունիս հասկնալու: Գիտցիր միայն, թէ Հայկը ծնած էր ազատ եւ սահմանուած էր մէջքը ուղիղ քայլելու, հայրենիքէն մէջ կամ հայրենիքէն դուրս, մինչեւ գերեզման: Ու երբ նաւու ն մէջ տեսաւ այն զարչելի թերթը, որուն մէջ իր հրաժարականը ապուած էր, զգաց, թէ տաք երկաթով կ'ուզեն խաբանել ստրկութիւնը իր ճակատին: Ահա թէ ինչչաւ ընդմիջեցաւ եւ իջաւ վար: Եթէ չիջնէր, իջած պիտի ըլլար շատ աւելի վար տեղ մը, ուր մարդուն արժանաւորութեան սահմանը վերջ կը գտնէ եւ կը սկսի անբան արարածինը: Հայկը անբան արարած մը չէր: Հայկը՝ Հայկ մըն էր...

Դու ն չես հասկնար, բայց սր մը Արամը պիտի հասկնայ, երբ աճուր կրունկներով սկսի քայլել հայրենի հողին վրայէն: Դու ն բան մը պիտի չըսես իրեն, որովհետեւ բան չես գիտեր արդէն, բայց պիտի գտնուի մէկը, մեր անտառներէն յայտնուած աղի մը գուցէ, լեռներէն իջնող ստուեր մը թերեւս, բայց անպայման պիտի գտնուի մէկը, որ չնչնայ Արամիդ ականջին, թէ նուէն իջնող Հայկին՝ Արամն էր, որ ստեղծեց այդ երկիրը քառսէն: Դու ն չհասկցար, բայց Արամը պիտի հասկնայ: Արամները միշտ կը հասկնան իրար...

Իսկ դու ն, Հէ՛յ հեռաւոր ազրարիկ, կրկնե՛մ անգամ մըն ալ, ու երկրորդ անգամ, ու հարի՛ւր անգամ՝ լա՛ւ ըրիր...

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ



Մ. ԻՇԽԱՆ

Առաջին շրջանում արտերկրյա՝ 1933-ին Ռուս առևտրի Մուշեղ ձեռնարկեցին, ծնած է 1913-ին, Սիմֆերոպոլի մէջ (Անդաբա): Նախնական կրթութիւնը կը ստանայ Դամասկոսի Ազգ. Միաց-

եայ փորձարարին մէջ, աւելի շրջանում արտ. բլայէ կար, մկտ կէտ տարի կը յաճախէր Կիւղոսի Միջոյն-եան կրթական հաստատութիւնը: 1930-ին, կը գտնուէր Հայ ձեռնարանի առաջին աշակերտներէն, իսկ 1935-ին՝ առաջին շրջանում արտերկրյա:

Շրջանում արտ. բլայէ կար, երբ տարի կը պաշտոնափոխէր ձեռնարանի մէջ՝ իրեն ուսուցիչ հայ լեզուի եւ հայոց պատմութեան: 1938-1940 տարիներուն կը հետեւի Պրի. քոլէի համալսարանի մանկագործութեան եւ գրականութեան դասընթացներուն: Յրկրորդ աշխարհամարտի հետեւանքով՝ 1940-ին հարկադրաբար կը փրկուի Հայ Պաշտոնի, ուր աւելի քան քառասունհինգ տարիներէ ի վեր կը պաշտոնափոխէր ձեռնարանի մէջ:

Դպրոցական գրականներէն սկսած՝ Մ. Իշխան գրածուի իմ Կ'աշխատակցի ափսոսանք մամուլին: 1936-ին Մ. Իշխան կը հրատարակէ իր առիթնէկ գործը՝ «Ցունկրու երգը» քերթողագիրքը, որուն կը շարորդէն «Կրակի քերթուածներ» հատորը (1938), «Հայաստան» (1946) եւ «Կեանք եւ ծրագր» (1949) քանդակագործութիւններու ժողովածուները, «Հացի եւ լոյսի համար» վեպը (1951), «Յիշեմ մեծ հայեր» գիծատու երեքտեղ (1952), «Հացի եւ սիրոյ համար» վեպը (1956), «Ողջոյն Բեզ կեանք» (1958), «Ոսկի աշուն» (1963), «Տառապանք» (1968), «Երթողագիրքեր», «Մեծ իւր որ-եան դժուար» էս թատերախաղը (1971), «Մոտաբար» մանկութիւն» յուշագրութիւնը (1974), «Սպասում» վեպերը (1977), «Թատերախաղեր» հատորը (1980), «Իմ ուսուցիչներ» գիծատու երեքտեղ ժողովածու (1984), եւ «Արեւմտեան քերթողագիրք» (1986):

Ներկայիս Մ. Իշխան Կ'ապրի Պէրուի մէջ:

Մ. ԻՇԽԱՆ

ԵՐԲ ԴՈՒՆ ԶԿԱՅԻՐ

Ո՞ւր էր խնդութեամբ գուարթ մեղեդիւն,
Երբ դուն չկայիր.
Թռչունի դայլայլ եւ արեւծագիւն
Ժպիտն եւ կարմիր.
Տունս կը յորդի մանկութեամբ անհուն,
Իմ անուշ գարուն.
Ժպտա՞ծ եմ երբեք, երբ դուն չկայիր...

Ո՞ւր էր հմայիչ պատկերը մարդուն,
Երբ դուն չկայիր
digitised by A.R.A.R. @

Մարդացած երկինք, անթեւ գուարթում,
Դու ինձի բերի
Գիշերն աստղազարդ գեղեցկութեան շէջ՝
Աչուքներուդ մէջ.
Սիրած եմ երբեք, երբ դու չկայիր...

Ո՞ր էր ուժերու ջրվէժը վնիտ,
երբ դու չկայիր,
Փոքրիկ քեւերուդ, բնուշ քաթիկիդ
հոյանքով անծիր
Նոր ես ամէն օր, անոց յաղթանակ
Ու շարժում բանակ.
Յաղթած եմ երբեք, երբ դու չկայիր...

Ո՞ր էր լուսաշող իմաստը կեանքին,
երբ դու չկայիր.
Հարուստ եմ հիմա զանգերով անգին
երկինք ու երկիր,
Եւ ինձ հետ կ'երգէ գոհութեան սաղմոս
Ամէն իր անխօս.
Ապրած եմ երբեք, երբ դու չկայիր...

Ո՞ր էր իմ հօր, իմ անմահ հոգիս,
երբ դու չկայիր.
Իմ անո՞շ հոգեակ, կը գրկեմ կուրծքիս
Քեզ կարօտալիր
Եւ կը զգամ, որ կամ երբին մէջ օրուան
Ու յաւերժութեան.
Ո՞ր էր իմ հոգիս, երբ դու չկայիր...

Մ. ԻՇԽԱՆ

Մ. ԻՇԽԱՆ

ՊՈՒՐՍԱ

..... *

Պուրսան մանկու թեան աշխարհիս մէջ տեղ կը գրաւէ նախ իր մետաքսի մանարաններով, որոնց մօտ կը գտնուի մեր վարժած բնակարանը: Որքան կը յիշեմ՝ քաղաքի ծայրամասը, բարձրագոյն բլուրի մը կողին: Ամէն առաւօտ, մութն ու յուսուին, անկողինիս մէջէն կը լսեմ մետաքսի գործատուններուն տխուր սուլոցը, որ տարբեր է շոքեկատքի սուլէն: Այս մէկը ասելի խիստ է, աւելի ճշան ու կարուկ: Մեզ կ'արթնցնէ անուշ քունէն եւ կը ստիպէ, որ ճրագը վառենք, տան մէջ երթիւնկը սկսի եւ քանի մը վայրկեան հտք հանի մաման եւ հօրաքրոջ աղջիկը պորձատուն վազեն աշխատելու: Իրիկունը կը վերադառնան տաք ջուրէն խաշած մատներով: Որքան կը հասկնամ իրենց կցկտուր պատմածներէն՝ ամբողջ օրը մետաքսի թիւեր կը քաշեն հոսացած ջուրին մէջ մահացող շերտի բոժոժներէն: Ես քանի մը բոժոժներ ունիմ եւ անոնք իմ խաղալիքներուս աղքատիկ պայտարին մաս կը կազմեն: Ամէն անգամ, որ հանի մաման գործէն վարձին գանոնք կը տեսնէ ձեռքս, իր գոպուած դառնութիւնը կը թափէ՝ բացազանչելով:

— Քէօժերնին շորնար, մեզ այլ պիտի չորցնեն...

— Կ'անցնին, այս օրերն այլ կ'անցնին, քիչ մը ակուանիս սեղմենք,— կը մխիթարէ մայրիկը:

Այս օրերը ինչպէ՞ս պիտի անցնին՝ ոչ ոք պիտէ:

Մայրիկի մէջքին Բեմեր մը կայ, բայց հայելու վրայ է: Երբեմն—երբեմն գրամ կ'ուզարկէ հայրիկին, որպէսզի ան իր հետաւոր արտորափայլին մէջ փնթուշաւ չմնայ: Ատկէ վատ՝ մայրիկի ուսերուն կը ծանրանայ եօթը հոգինոց բնատանիքի մը ամբողջ բեռը: Ինքն է գնումներ բնոցը, ճաշ պատրաստողը, վրայ—գլուխ հողացողը: Եթէ տունը մէկ—երկու գրուշ չմտնէ, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը: Այս խօսքերն ու խորհրդածութիւնները յաճախ չըջան կ'ընեն մայրիկի շրթներուն վրայ եւ միշտ կը յանգին նոյն կզրակացութեան:

— Պատրաստ ու տոպին՝ լինները չեն գիժանար:

Պուրսան նաեւ կողով—կողով վաճառուող դեղձ է, շապանակ, փշաւ եւ, մա՞նուանդ՝ շաքարահամ խոշոր ու սպիտակ թուի: Ես նոր կը տեսնեմ, որ աշխարհիս երեսին տասնկ հրաշալիքներ կան: Մեր աւջիւ իր ճիւղերը տարաժան է մեծ թթլնի մը — այնքա՞ն շատ են թութի-ծառերը ամէն կողմ —, որուն ստուերին տակ կ'անցընենք մեր օրը եւ, քոյրս եւ եղբայրս: Թութերը մեր վե՞րն կը հասունան եւ կը խոշորնան կարծես ժամէ ժամ: Թոշուիները կու գան

digitised by A.R.A.R.®

և, կը կոցեն աննոցս՝ ամէնէն համեղները: Մէր գլխուն և, գէնքին վրայ թուրի հառիկներ կը կարին յաճախ:

Եւ ահա օր մըն ալ — ի՞նչ ուրախ տօնախմբութիւն — մայրիկը և հաճի մաման մէջ տաւան մը կը փուն թխեննինն տակ, հօգաբորն աղմկել և, դրացի տղայ մը վկր կը մաղկին ու թափ կու տան ճիւղերուն: Թուրի անհամար հառաքիներ օրհնու թխան անձրէն, ի պէս կը տեղան վար, սաւ անի և, գետնի խառնութիւն վրայ, մեր ուսին և, ձեռքերուն վրայ: Սաւ անը կը յորդի՝ և, մեր գիւնդիլը կը գիծոփան թուրի քաղցրութենէն...

Անխորհրդ գեղեցիկ է, և, կեանքը՝ թուրի լափ անուշ: Կարծես ո՛չ քաղց եղած է, ո՛չ մահախորհմանց փափրուտ, ո՛չ հայրիկը աքսորուած է և, ոչ ալ թուրք բարւաճ գահէն գոյրութիւն ունի որեւէ տեղ...

— Հաճի մամա, միշտ հոս պիտի մնանք, այնպէս չէ՛:

— Յայրանք չի, Ես՝ լուս, բան մը յայտնի չի:

— Մնանք, մամա, հոս շատ աղէկ է:

— Կը մնանք՝ երբէ՛ք ձեզ և:

Պարտան տակալին ծափու պէս խորունկ և, թանձրափա կանոններ: — Քեամք յորդող պարտէկ է: Մեր բնակարանն զիւ մը անդին կը տարածուի այդ պարտէկներէն մին, լքնապատուած ցած պարիսպներով: Խորհրդաւոր և, մոռցիկ քաղցրակաւոր թիւն մը ու նին բարձրալաց ծառերը, որոնք թիւս շարքերով գէպի եղկինք կը նետուեն՝ պարիսպին ներս և, անոր գոգազան: Ամէն անգամ, որ պարտէկին երկփեղկանի հակադրուող լիցայ, կը փաղած հոն՝ ներս մտնելու հաստատ ողորտ մով: Սակայն դրան առջև, կանց կ'առնեմ քարանձառ: Պահակ չկայ, աղկեր չկայ: Մենք մտորիկ երբեմն կը մտնեն ու կ'սկսեն: Ես շեմ համարձակիր: Հիացումով խառն փախ մը կը կարէ տաքիս: Ինձի կը թուի, թէ մտադէն գէպի պարտէկի խորհրդը առաջնորդող արանհող երբէր րոնեմ և, առաջանում հաստարուն ծառերու, ջոյզ շարքին մէջէն՝ պիտի հասնիմ կտրաքանդու ալիսարել, ուրկի անկարելի է դուրս գալ: Ի՛նչ՝ կը փափաքեմ մտնել, թէ՛ կը զգուշանամ: Սարկերէն չէ վախի, ալ՝ ծառերին, թուրիներ, ա՛յն խորունկ և, թաւային կանչակն, որ քարմանալի ուժով կը քաշէ քեզ գէպի հմայիկ փտանգները կը անծածթ լնդ եղբներուն: Սկիւրի-Հիւսիսի չոր ծառերէն է և, քաջ, այս յորդ առատ կանաչութիւնը նոր յայտնող ործում մըն է ինձի համար: Սիրտս կը արտապա ծառերու տառերուն պէս: Կ'ազնեմ սէկուն արտապա՝ տեղ զգացու մենքու: Կ'ազնեմ բանի, թէ ևս այս պարտէկը շատ կը սիրեմ և, նոյն տանն շատ կը վախճամ անկէ: Ձիւս կը նայ ներս քաղկ և, գերի րոնել:

Անխորհի՛րդ գէնքը լուսաւորող տառքին գեղեցիկութիւնը լուսինն էր, որուն գլխաւոր լրբի գէպի ձնեղափայլութեան համբուն վրայ, հանգաւորելն թուր ալող կատրի մը մէջէն:

Մըկորդը ահա այս պարտէկն է, կը առատակալան իրականութեամբ և, չնչաւոր ու չնչնոց իր ծառերով: Որո՞նք բան, ինչպէ՞ս բացատրենք գլխ տնան անձան հարստութիւնն ու կարեւորութիւնը:

— Հաճի մամա, — կ'ըսեմ օր մը, — դու ն տեսա՞՞ Ես մեն պարտէկը:

— Ո՞ր պարտէկը:

— Մեր տունէն քիչ մը վաք, մենք դուռով:

— Հա՛, կարծեմ գալալի մը պարտէկը եղած է:

— Այդուրդ չի՞:

— Այդուրդ է: Պարտալ տեղ չի, որ բաճ Ես՝ «Ծիլ» Պարտալ:

Կը լուեն: Հարեպէս դժգոհ և, ճշայնացած, որ չեմ կրնար արտապա՝ տեղ այն ինչ որ կ'ազնեմ բանի: Կը խորհով, թէ պիտի եմ, պարտ չեմ գալած և,

տառը համար չեմ կրնար բացառել, ծաղիկային հողի կրող հակոց ծառիկու և խղճուրդը: Հիմա՝ որ մեծցած եմ եւ պղտը այդ տղան՝ կը գլուխ, թէ պարկայ անկարող կը մեռն ողորդարկուր մանկական աղբիւնքուս այդ ապրու Ժնեքը: Ո՛վ բառ, թէ մանու կ'ստանիր անապարհը է բնու թիւան պանծկուր և հանգէտ:

Իմ գծրաբառ մանկու թիւան ամէնէն անուշ յուրս մեկըր բնու թիւնէն կուր պան:

ՍՈՒԹԱՆՆԵՐԸ ԿԸ ՔՆԱՆԱՆ

— Կ'ուզե՞ս սուլթան տեսնել, թաղով, պանկով:

Պալատան է գործնայ, որ խելթիս հետ կը խաղայ: Քանի՞ անգամ մայրիկը գլուշացուցած էր գիտ, պատուիրկով, որ անոր ամէն բանին չհաստատամ, հետք ամէն անգ չեմբամ. սժը մը փորձանք պիտի բիւն գլխուդ, փորձանք: Անպիտանը մօրը մանածը չուկան ծաղող տեսնիչն է: Ես չեմ հասկընար, թէ մայրը ինչ է մանած եւ ինք ի՞նչ ծախած: Քիտեմ մէայն, թէ ճարտիկ լինում ծախող է եւ մեր թաղերու և ծախն ու ծախը գիտէ:

— Կ'ուզե՞ս սուլթան տեսնել, կը կրկնուի հարցումը:

— Ի՞նչ սուլթան, գա՛նի փայ խառա՞ծ, կը պարձանամ թերահուստ:

— Ո՛յ, պառկած, կ'ըսէ ամենայն լի՛ն, թիւամբ:

— Հայտն է՝ կը խաբուս կոր:

— Կը խաբե՞ր կոր, եկուր եւ աչքովդ տես...

Կ'ընթանք միասին, ինչք ատրն էն՝ յաղթական պարտիւրի մը պէտ, ես ետեւէն՝ վառկուտ դիմու որի մը նման: Կը մօտենանք մզկիթի մէջ, որուն քովէն ուրիշ անգամներ ալ անցած եմ: Կ'անցնիչք մզկիթին ետեւի կողմը, կը մաղրը՝ ցինջ պատի մը վրայ, որ գրեթէ կպած է մզկիթին: Ձեւ հասկնար, թէ սուլթանը ուրիշ՝ պիտի տեսնեմք: Սկրտա արագ-արագ կը ազդի յուրս մէտ: Կը պտուկինք փորի վրայ եւ մեր գէմքերը կ'ընդարձար դէպի մզկիթին ետեւի կողմէն բացուած պարիկ յուսմուտդ: Ես կ'ընեմ այն՝ որ Պալատ սար կը թիւաղրէ:

— Հիմա, կ'ըսէ, ներս նայէ՛, տես ինչե՞ր կան...

Պառկած տեղս կը սարսամ: Անդրեւ ակայակի պատկեր մը կը բացուի աչքիսուս ատրն: Ներսի կիսամբո թին մէջ շարուած են երկարուս ու անասու կանգ, ծածկուած ուկնդոծ կտուներով: Իրաքանիւրին դիմու կողմը պատկանողի աղաղակ մը կը բարձրանայ, մոլայանկար փաթկողին պէտ, բայց չտուսանի չեմ ու գանդուածային, ծառենակ մը սուլթաններ հոն կը ննջեն իրենց յախանական քուկով, կողք կողքի, հանգարտ, փեհայուք:

— Մեռած են, մի փոխար, ասանք իրենց զայաղնիւրն են, կը բացատրէ Պալատու:

Քիտեմ, թէ մեռած են. մահուան ինչ լրջայն ալ չտու լաւ գիտեմ. սակայն ինծի այնպէս կուր պայ, որ անոնցմէ մէկն ու մէկը կամաց մը պլուլը վեր պիտի ստանէ, պիտի նստի պալատին մէջ, պիտի նայի մեզի շանթարձակ աչքիւով եւ պիտի կանչէ դանձը...

— Այս մէկը, կը փախայ Պալատա ականջիւս, սուլթան Աւիւմէն է, այն մէկը՝ սուլթան Մահմուտ, քովինը՝ սուլթան Պալապիտ...

— Սրտեղէն գլխուս:

— Օճօ՛, ես հաս շատ եկած եմ, պապայկիս հետ ալ եկանք տնցած որ, պապաա բոլորն ալ կը ճանչնայ:



Էմիլ Զաքարյան

— Աստուք մեծ սուլթաններն են:

— Շատ մեծ, աստուք անտու կոմ ուկի ու նկին: Կը տեսնե՞ս իրենց զապազները, ամբողջ ոսկի է: Եթէ մէկը կարենայ սա ծակէն ներս սողալ եւ կտոր մը փրցնել՝ աշխարհի ամէնէն հարուստ մարդը կը դառնայ:

Ներս սողայու եւ սուլթաններու զապազներուն մասննայու պապափարն իսկ երկիրը կը լեցնէ սիրտս: Կը դիտեմ անկուշտ հետաքրքրութեամբ: Ներսի մթութիւնը հետզհետէ կը փարատի եւ մանրամասնութիւններ կը պարզուին աչքիս: Արեւ ու ճառագայթ մը ինկած է զապազներու շարքին վրայ, որոնց ոսկեհիւս ծածկոցները կը շողշողան երանգաւոր ճաճանչումով: Ես պատմութիւն չեմ գիտեր. զպրոց չեմ գացած, բայց երեւակայութեամբ կը փոխադրուիմ մզկիթի վերնայարկին մէջ քնացող սուլթաններու ն պալատը, գիւրենք կը տեսնեմ զաշի վրայ նստած, նոյն ապարօշները իրենց գլխուն, սեւամորթ պահակներ գահին երկու կողմերը եւ չեմ գիտեր ինչու, խեղճու կ'զերի մը ծուկին ինկած՝ զաշիճի սուրին ներքեւ: Այս գերին կը ճանչնամ, այդ գերին հայու զիմազիծ ունի:

— Ներսի սուլթանները շատ հայ մորթած են, — կը հարցնեմ Գալուստին, հագիւ լսելի չըտկով:

Գալուստ շուարած ինծի կը նայի եւ կը զարմանայ, որ նման կասկածներ կ'ուենամ պերճաւոր անկողիններու մէջ տոպալս խաղաղ քնացող սուլթաններէն:

— Ձեւ գիտեր, — կ'ըսէ պահ մը խորհելէ ետք, — երթանք պապայիս հարցնենք:

Ես կը սիրեմ Գալուստին պապան: Վարի փողոցին մէջ, տախտակով փակցուած խուցի պէս փոքր խանութ մը ճարած է եւ հոն կ'օշիկ կը կարէ: Աւելի ճիշդ՝ կ'օշիկներ կը նորոգէ, թէեւ, իր բռնիով, վարպետ կ'օշկակար է: Աստահ եմ ասոր: Մուրճը բռնելու եւ կաշիներու զարնելու ձեւ մը ունի, որ երաժշտութեան պէս հաճելի է ու ներդաշնակ: Բախտաւոր է Գալուստ: Իմ ճանչցած ողոց եւ աղջիկներուն մէջ միակն է, որ պապա ունի: Պապան չէ մորթուած, չէ կախուած, չէ մեռած, չէ աքաղուած: Ո՛չ միայն բնականից զուխն է, այլեւ խանութ ունի: Ի՞նչ հպարտութեամբ Գալուստ կ'արտասանէ յաճախ հետեւեալ բառերը. «Պապայիս խանութը կ'երթամ կոր»: Երանի՛ ես ալ կարենայի որ մը ըսել. «Պապայիս խանութը հաց կը տանիմ կոր»:

Պատին վրայէն վար կը ցատկենք եւ կ'ուղղուինք գէպի կ'օշկակարի կրպակը: Այնքա՞ն բաներ ունինք հարցնելիք: Գալուստին պապան հիանալի բնաւորութիւն ունի: Մեզի հետ կը խօսի այնպէս, իրրեւ թէ իր տարեկիցները ըլլայինք: Կը վիճի հետերնիս եւ երբ հեղինակաւոր կարծիքով մը մեզ պարտութեան մասնէ, անպայման կը սիրէ աւելցնել.

— Ծիչդ չէ՞ ըսածս... Ես ինչպիսի չեմ խօսիր, գիտեմ թէ ինչ կ'ըսեմ:

Կը հիանամ այս մարդուն վրայ, որ, կ'օշկակարի սեղանին առջեւ նստած՝ լուր ունի աշխարհի բոլոր բաներէն: Գիտէ, օրինակ, թէ ինկիլիզը աւելի զօրաւոր է, քան այմանը, քանի որ պարտուեցաւ: Ծիչդ չէ՞ ըսածը: Ես իրմէ կը սորվիմ, որ Մուսթաֆա Բեմալ թաղաւոր չէ, բայց թուրք վիճուորներուն մեծն է եւ կրնայ օր մը թաղաւոր դառնալ, եթէ յաղթէ: Ծիչդ չէ՞ ըսածը: Ես ալ իմ զրամպլուս ունիմ, հայրիկին ժառանգ մնացած եւ զայն մէջակ կը բերեմ յարմար ժամանակին. «Յոյները կը յաղթեն, եթէ ինկիլիզը ուզէ»: Ինք բոլորովին զէմ չէ այս կարծիքին, բայց ինկիլիզին վրայ վստահութիւն չունի:

— Ո՞ր էիք, — կը հարցնէ երբ ներս կը մտնենք խանութէն:

— Սուլթաններուն քով, — կ'ըլլայ Գալուստին պատասխանը:

— Մ'ընէք, օղլում, այդ կողմերը շատ մի երթաք, օրթալիսը լաւ չեմ տեսներ կոր...

Ու կը սկսի մեռի մօտը իջեցնել կոշիկի ներքանին՝ դիկ-տուկ, դիկ-գուկ:

Ի՞նչ սքունչիկի արհեստ: Միտքը դրած էմ անպարտական կոշիկակար բլլայ, թէն այս մասին տուկային բան չեմ բռնած ասոնք: Աշխարհի ամէնէն հաճելի գործն է: Կեանք կայ մէջը, շարժում, կշռոյթ: Գամերը կը պնէս բերանդ, կոշիկը կ'անցընէս երկուքէ սուրին, կաշին կ'ամբողջնէս ներքանին՝ եւ յետայ դիկ-գուկ, դիկ-գուկ...

— Ինչո՞ւ, պապա, օրթուլբուր յաւ չէ:

— Գրեցէք անդ մը Պուրտան ալ պիտի իշնայ, տասնկ երթայ նէ՝ Խզմերն ալ պիտի իշնայ... Մուսթաֆա Բեմալը կ'առաջնայ կոր:

— Յոյները նոր բանակ կը բերեն եւ կը յաղթեն, — կ'առաջնէմ եւ յաւ-ւած:

— Ուրիշ՞ պիտի բերեն, օղլու մ, լուր ու նի՞ս քի երկու կտոր եղած են — Կոստանդինի կողմը եւ Վենեզուելայ կողմը: Ազգ մը երբ երկու ճակատ կ'ըլլայ՝ չի գիտանար, ճիշդ չէ՞ ըսածս:

Ճիշդ է, պապ է՝ եւ չեմ գիտեր: Ես միայն մէկ բան կ'ուզեմ — յոյներու ն յաղթանակը: Կ'ուզեմ, որ թուրք գիտնորները փախչին ու երթան հեռո՞ւն, չա՞տ հեռու եւ մենք յատկապէս գարձեալ գաղթելու:

ՅԱԼԵՐԺԱԼԱՐՍԵՐՈՒ ՀԵՏ

Քանի կը յիշեմ՝ կէս հիւսնդ եմ միշտ: Իմ հասակի տղոց ո՛չ ճարպիկու-թիւնը ունիմ, ոչ ալ կրակն ու բոցը: Նազի՞՞ք ծնած էմ, թէ նազիք մեծցած՝ զօնար է որոշել: Մէկ տարեկան գրկի երեխայ՝ եղած ենք աքսոր: Այնու հետեւ յայտնի են պայմանները. ամբողջ Եղեռնը՝ իր հայաջինջ սարսափներով: Մօրս կաթը կը քաշուի, զեղ ու սնու նդ անպատանելի կը դառնան. չոր գետններու պաղը մարմնիս եւ հոգիիս մէջ կը թափանցէ: Բացի «ծածուկ ջերմ»էն, որ պարբերաբար կ'այցիլէ ինծի, դողով եւ քարձը տաքութեամբ, կը տառապիմ նաեւ յաճախակի միգրացիայով: Տեղ մը քար մը կայ պահուած, որ չ'իշնար: Երկու մայրիկները, դրացիներու թելադրանքով, որքա՞ն խոտեր եւ արմատներ խաշած ու խմցուցած են ինծի: Ոչ մէկուս հրաշագործ գորութիւնը կրցած է քարը տեղէն չարժել:

Հոգեպէս աւելի կը տառապիմ, քան Ֆիդիքապէս: Ամէն խաղի մէջ ես կը մնամ ընկերներէս: Պարտադիր զգուշացուած թիւն մը կը կաշկանդէ շարժումս. ներս: Գալուստը, օրինակ, կատուի ճարպիկութեամբ ծառ կը մագլցի, առու — ներս: Վրայէն կը ցատկէ, թուրք յաճերու հետ կուտի կը բռնուի եւ քարկոծելով կը փախցնի գանոնք, նետի պէս արագ կը վազէ, գլխուս վրայ կը գտնուայ ու — զածիւն չափ եւ բնա շիյոց նիր: Ես չեմ կրնար ընել այս քաջագործութիւնները. տկար եմ մանաւանդ ըմբռնմանով: Գալուստը մէկ ձեռքով զիս պետին կը նետէ եւ վրաս կը նստի: Վա՛յ որ մայրիկը տեսնէ իմ քրտնաթոր վիճակս. ան չի մտածեր բնա հոգեկան նուաստացումիս մասին եւ տեսարար մէկ յանկերգ ունի:

— Մի՛ վազեր, մի՛ ըներ, դուսն հիւսնդ ես:

Այս՛, ես հիւսնդ եմ: Հետզհետէ աւելի կը համոզուիմ, որ ես տկար արարած մըն եմ, բանի չեմ գար:

Նոր տապնապ մը իր աքցանին մէջ կը դալարէ զիս նորէն: Այս անգամ,

digitised by A.R.A.R.®

բոլոր բունիմոց պատաս կանանց, ճարերս ոտքի էլած՝ ճամբայ կը փնտռեն ու չեն գտներ: Ամէն կողմ խորհուրդ կու տան զիս տանից հանքային տաք ջուրերը, որոնք Պուրսայի մօտերն են: Այդ ջուրերը ճամէն տէրախ տերման են:»

Տան մէջ տեղի ունեցող խօսակցութիւններէն կ'եկրակացնեմ, թէ զիս որին չէ հանքային բազմութիւնը երթալ եւ զոնէ 8-10 օր մնալ: Այս բոլորը ծախսերու հետ կապուած են: Բայց պիտի երթանք, որոշուած է:

Յաւերս կը մեկմանան կարծես: Պուրսայի հեքիաթային կեանքը իր նկարագրող գիրքին նոր մէկ էջը պիտի բանայ աչքերուս առջեւ: Բազմութեանը հրաշադան նկարագրութիւնը, օրեր առաջ, մոզական երազանքով լեցուցած է արդէն հոգիս: Սինիմային հրաշալիքը կը շարու նակուի:

Զիս որդեգրող մայրիկն է կարգադրութիւններու վարիչը: Ես իր մէկ հատիկն եմ, իր չունեցած գաւկին մարմնացու մը, իր անգին դանձը, որուն համար պատրաստ է կեանքն իսկ զոհելու: Մաման՝ այսինքն հարազատ մայրս, որ այնքան հեղ է ու բարի, արտուժ աչքերով կը դիտէ զիս եւ չի խօսիր: Ես իր ձեռքէն ելած եմ եւ մայր փոխած: Կը տառապի՝ արդեօք: Ոչ մէկ օր չեմ տեսած, որ ան զրկէ զիս, սեղմէ կուրծքին, համբուրէ եւ ըսէ՝. «Տղաս, հոգի՛ս»: Այս բաները ընողը զիս որդեգրող մայրիկն է: Ու կամաց-կամաց հարազատութեան զգացումն ալ գոյն եւ ուզողութիւն կը փոխէ մեր տան մէջ, կեանքի կերպին եւ արտայայտութեան ձեւերուն զուգընթաց:

Մայրիկը իր ոսկեղէններէն մէկն ալ կը ծախէ, որպէսզի զիս հանքային ջուրերը տանի: Կառք մը կը վարձենք ու երկուքով ճամբայ կ'իյնանք: Հետեւնիս առած ենք կողով մը ու տելու պաշար եւ ծածկոցներ:

Երբ աչքերս կը փակեմ եւ կէս դարու հեռաւորութենէն կը փորձեմ դարձալ վերակոչել առաջին բազմութիւն իմ առաջին լողանքս, վաղուց լսուած ոսկի հեքիաթի մը պատկերները կը ներկայանան նայու ամբիս: Մարմարէ յատակ, աստղագրող գմբէթ, նաշխուն զոռեր եւ տաք ջուրով լեցուն խողոր անազան մը, ուրիշ շողի կը բարձրանայ: Ու տակաւին հարսեր ու աղջիկներ՝ մարմարի պէս սպիտակ մարմիններով՝ սեւ մազերու ջրվճիխ տակ...

Ես ուղղակի չլսած եմ: Կեանքիս մէջ բազմութիւն չեմ տեսած: Զիս լողցուցած են տունը, տաշտի մը մէջ, երկու գոյլ ջուրով: Մտքիս մէջ կը զառնան Գալու ստի մօր պատմած մէկ հեքիաթին բառերը. «Թագաւորին տղան... Թագաւորին աղջիկը... մարմարէ պալատ...»:

Թագաւորին աղջիկը որոշ է, սա մէկը ըլլալու է, որ ոսկեզօծ սանտալներ հագած՝ նաղանքով կ'առաջնայ գէպի աւազանը: Ոտքին եւ ձեռքին մատները կարմիր ներկուած են: Իրանը մերկ է ամբողջապէս: Աչքերս կ'իյնան անոր սարսուռն ստիներէն ու վրայ ու չեն ու գեր բաժնուիլ: Կ'ամէնամ նայլու, կը կարմրիմ շատ հաւանօրէն, բայց կը զգամ, որ դժուար է շնայիլ անոնց: Կանաչի մարմնի մերկութեան պատճառած առաջին սարսուռը կը թափանցէ էութեանն ներս:

Այո՛, Թագաւորին աղջիկը ան է անպայման, ամէնէն զեղեցիկը, ամէնէն քնքուշը, բայց ո՞րն է Թագաւորին տղան: Կը նայիմ շուրջս. բոլորն ալ կիներ են, մէկ-մէկ լաթ կապած իրենց մէջքին: Ինձմէլ դատ տղայ չկայ: Իսկ ես Թագաւորին հովիւն անգամ չեմ կրնար ըլլալ՝ կողերս խաբազանող սաքաւ երով:

— Քալէ՛, — կ'ըսէ մայրիկը՝ ձեռքէս բռնելով, — այդ աղջկան հետ դու նալ հաւուզը մտի, որ մարմինդ կակու զնայ, քարերդ հային:

— Թագաւորին աղջկան հետ, — կը խաղաղանջեմ մեքենաբար:

— Ի՞նչ Թագաւորի աղջիկ, անիկա նոր հարս է, չե՞ս տեսներ՝ ձեռքերուն եւ ոտքերուն հիմա դրած է:

Աւազանի ջուրը շատ տաք է. կարիք ունեցողները միայն կ'իջնեն հոն:

digitised by A.R.A.R.®

Մայրիկը կը խնդրէ գեղունահան, որ օգնէ ինծի աւագան իջնելու եւ հոն պահ մը մնալու համար:

— Դու հոգ մի բնեք, հաճում,— կ'ըսէ թրքուհին քաղցր ձայնով մը,— չոնուխը ինծի տուր, ես կը նայիմ:

«Ձոնուխ» քաղցր առաջին անգամ ըլլալով հաճելի չի թուիր ինծի: Եթէ գիտնա՞ր, թէ արքայական ի՞նչ ապուստներ կ'ալեկոծէին կուրծքիս տակ՝ իր գեղեցկութեան, իր անուշութեան եւ իր քաղցրական ուժին պատճառով: Ես եւ թրքուհին կեցած ենք ձեռք ձեռքի աւագանին մէկ անկիւնը: Մայրիկը դուրսն է եւ կը հրճուի հրաշագործ բուժումիս հեռանկարով: Երախտագիտութեամբ կը ժպտի նոր հարսին, որ այնքա՞ն սիրալիր է ինծի հանդէպ:

— Մի շարժիր,— կ'ըսէ թրքուհին ինծի,— որքան շարժիս՝ ջուրը այնքան աւելի կ'այրէ:

Ջուրը շատ տաք է իսկապէս: Պէտք է դիմանամ, որ քարերս հալին: Բայց ջուրին պէս ուրիշ տաք հոսանք մը «թաղաւորին աղջկան» մասներէն կը փոխանցուի ինծի եւ երանութեամբ կ'ողողէ զիս: Պիտի մարիմ կարծես: Ջուրը մինչեւ ուսերս կը բարձրանայ, նոյն իսկ աղջկան մինչեւ կուրծքը: Ակամայ կը շարժիմ շարունակ՝ իրեն աւելի ծօտ ըլլալու, իր մերկ մարմնին հպելու անմէկ-նեկի մզու մով: Ու երբ թրքուհին վրաս կը հակի՝ զիս զգուշութեան հրաւիրելու համար, կուրծքերը կը ծփան աւագանի ջուրին վրայ, ինչպէս զոյգ մը...: Բայց պէ՞տք է անդայման բանի մը նմանցնել: Ես այն ատեն որիս է բանի չի կրնար նմանցնել, որովհետեւ անոնք նման էին միայն իրենց իրենց, հետեւաբար անման էին:

— Հանդարտ կեցիր, որ քիչ մըն ալ դիմանանք,— կ'ըսէ ժպտով մը, ուր թէ՛ յանդիմանութիւն կայ, թէ՛ խանդաղատանք:

— Դո՛ւն ալ քար ունիս,— կը համարձակիմ հարցնել, նայելով անոր աչքերու խորր, որոնք աւագանի ջուրին պէս տաք են:

— Ո՛չ,— կ'ըսէ,— իմ կոնակս կը ցաւի:

Բաղնիքին մէջ ուրիշ կիներ ալ կան, հասա ու բարակ մարմիններով եւ կամ յողացաւ ծոմած պատախ կերպարանքով: Իմ բնկերու հիս մէկ հատիկ է: Երկու-երեք օր մենք միասին ենք եւ ինքն է, որ կը գրկէ զիս ջուրէն դուրս հանելու եւ մայրիկին յանձնելու համար: Դիշերները զաղտնի կ'աղօթեմ, որ քարերս չիյնան եւ ես ու թրքուհին դեռ երկա՛ր ատեն միասին իջնենք երջան-կութեան աւագանը:

Աղօթքիս մէկ մասը միայն կը կատարուի: Քարերս չեն իյնար, բայց թագաւորին աղջիկը կ'անհետանայ ողեղէն սեսիլքի մը պէս: Բաղնիքին մարմարեայ գուռերն ու աւագանը մէկ անգամէն կ'անջնան եւ թագաւորին տղան, գլուխը կախ, տուն կը վերադառնայ իր մայրիկին հետ...

ՁԵՌԱԳԻՐ ԵՐԳԱՐԱՆԸ

Մետաքսի գործարանները կը շարունակեն մութն ու յուսուն իրենց տրամագիծն սոյլով խոռովել քունս ու երազներս: Կեանքին ձայնն է ան, իրակա-նութեան բիրտ յուշարարը: Հաճի մաման եւ երկրորդ քայլս (հորաքրոջս որը մնացած աղջիկը) կը շարունակեն աշխատանքի երթալ եւ ամէն իրիկուն կը

վերապատնան յողնարեկ ու բնկնուած տրամապարտութեամբ: Մայրիկը յունցու-
որի պէս կը զգայ ինքզինք, որ ստեղծուած է ասան վարժերով պրտովի եւ պարծա-
տան աշխատանքէն զերծ մնալ: Ուրիշ Հնարաւ որոյ թիւն չկայ. տու նր կէս ան-
գամայն ժեծ-մայր մը կայ եւ երեք տնչափահաս մանուկներ: Գործաւորուն
աշխատանքը յայտնապէս ծանր է եւ անախորժ: Երբեմն, երբ հովին ու զգու-
թիւնը փոխուի, եռացած ջուրի մէջ մեռնող խոզակներու ն պարզահոտութիւնը
մինչեւ մեր բակը կը հասնի:

— Ի՞նչ բնենք, պէտք է ակռանին սեղմենք քիչ մըն ալ. հեղիւք այս
օրերն ալ կ'անցնին,— կը խորհրդածէ մայրիկը:

Կը զարմանամ: Այս օրերը շատ լաւ օրեր են ինծի համար: Ազատ-հա-
մարձակ կը խաղամ փողոցները: Փախուստ չկայ, նկուզներու խաւարին մէջ
պահուած միայն սարսափը չկայ, ջարդի ու բռնական պոռոյտ չի գար մեր
գլխուն վերէն: Ընդհակառակն, նորանոր սքանչելիքներ կը յայտնադործուին
կենսաբան մէջ: Թէեւ դպրոց չեմ երթար եւ դիրք ու տեսարակ չատուց նետած եմ
մէկ կողմ, սակայն օրէ օր հոգիս կը հարստանայ եւ զգացումներս կը հասնու-
նան: Մտահոգը մայրիկն է:

— Ի՞նչ պիտի բլլայ քու վիճակդ, չռպանի պէս կը մեծնաս կոր: Ա՛խ,
գոնէ հայրիկը գլխուդ վրայ ըլլար...

Ես յաւատես եմ իմ վիճակիս մասին եւ յափազանց գոհ՝ կենսաբան ըն-
թացքէն: Որոշած եմ Գալուստի հօր նման կօշկակար ըլլալ: Դպրոց երթալու
պէտք չկար տոտր համար:

Հոգիս այնքա՞ն լեցու է անանուն ապրու մներով, որ սկսած եմ ցերեկ-
ներն ալ երազել յաճախ, կիսախուփ աչքերով, մեր տան քովի թթնիկին տակ
նստած: Երազանքը իմ ձրի եւ անսպաս հաճոյքն է: Սինեմայի փապա՝ էնին պէս
բան մը: Կ'երազեմ հեռագնաց ճամբորդութիւններ, կ'երազեմ հայրիկին վե-
րադարձը՝ մեր բնակիչուն վրայ նստած, կ'երազեմ սուլթաններու մարմարա-
կերտ պալատներ եւ, մա՛նաւանդ՝ բաղնիքի թրքուհին: Ընդհանրապէս իմ
երազանքներուս մէջ զեղեցիկ այդ ազնիւ կը ծանր վտանգի տակ կը ներկայա-
նայ, թուրք չէթէներու կողմէ առեւտնադուած: Հերոսական խոյանքով, ես կը
նետուիմ առաջ եւ կ'ազատեմ պինք հրեղէն ձիուս վրայ: Կէտ մը կայ սակայն,
որ կը խանգարէ երազիս ներդաշնակ զարգացումը: Աղջիկն ալ թուրք է: Չեմ
ուզեր հաւատալ, որ թուրք է եւ մտքիս մէջ կը հայացնեմ զայն:

•••

Շարաթ իրիկունը ամէնէն շատ սիրած պահն է: Խորհրդաւ որ մթնոլորտ
մը կը ստեղծուի մեր տան մէջ: Մենդալայի հին սովորութեամբ, մայրիկը
խունկ կը ծխէ: Ամէն Շարաթ օր ուշի ուշով կը հետեւիմ այս սուրբ եւ սրբաց-
նող արարողութեան: Պղինձէ փոքրիկ ամանի մը մէջ պտուղնց մը խունկ կը
դնէ եւ երկու կտոր վառած ածուխ: Խունկին քուլաները կը սկսին բարձրանալ
եւ անուշ բոյրով լեցնել մեր բնակարանը: Ընդհանրապէս տուն կու գայ կարծես:

Խնկամանը ձեռքին՝ մայրիկը կը մօտենայ կենդանի, որ ծալապատիկ
նստած է միտ իր բազմոցին վրայ, սեւ յալակը գլխուն: Մեծ մայրիկը ձեռքը

քանի մը անգամ կը ստանի աւ կը բերէ խունկի ոլորտը անմոռելի մէջ եւ կը խաչակնէ՛ք։

— Աստուած Հոգին յուսաւ որք Հոգին տակ պաշտօններուն, չէ՞օլերու մէջ տեղացի ինկածներուն, Աստուած մոռցողները պահէ, Աստուած աշխարհիս խաղաղութիւն առայ...։

Խնկամանը կարգով կ'անցնի բնականօրէն միւս անգամներուն առջեւ եւ բոլորս ալ խնկարոյր ձեռքերով կը խաչակնէ՛ք մեր երեսները։ Աղօթքներու շարքը կը շարունակուի շրթունքէ շրթունք։

— Աստուած զուրպէք եղողները սուսն դարձնէ, Աստուած մեր օլորտը—չօհորտը խնկի օրեր ցցնէ։

Ես հանդիպում կը ընձեմ աղօթքով եւ խունկով յաղեցած մեր տան միջոց—յորտը, որուն հմայքը կը տեսէ ամբողջ երեկոն։

Կան երեկոյներ, երբ խունկի հմայքին կը խառնուի նաեւ երգի հրապոյրը։ Բացառիկ են այդ պահերը։ Ես մտքէս կ'աղօթեմ, որ հաճի մամային տրամադրութիւնները յաւ բլլան եւ ան մեզ հաւաքէ սեղանին շուրջ, որուն վրայ կայ ձեռագիր հին երգարան մը։

Այդ երգարանին հետ մտերմացած եմ, բազմաթիւ անգամներ թղթատելով անոր գունաթափ էջերը։ Այսօր ալ, երբ աչքերս փակեմ, յստակ անոր յարգողոյն կողքը, մանր ձեռագիրով լիցուած էջերը, լայն լուսանցքները։ Կը տեսնեմ նոյնիսկ ընդօրինակողի զբոսն կաթած մեղանի բիծերը, որոնք տեղ—տեղ տարօրինակ նկարներու ձեւեր էին ստացած։

— Այդ երգարանին հետ մի խաղար, պապայիդ յիշատակն է։

Պապան, այսինքն՝ հարազատ հայրս, որ երկինք գացած է, իր ձեռքով ընդօրինակած է երգերու փունջը տետրակին մէջ։ Երկինք գացած եւ երգարանը ձգած է մամայիս։ Ատոր համար է, որ հաճի մաման աչքին լոյսին պէս կը գուրգուրայ վրան։

— Պապայիդ սնտուկ մը գիրքերէն աւ միայն մնաց,— կ'աւելցնէ ափսոսանքով։

— Ի՞նչ եղան միւսները։

— Վառեցինք, ի՞նչ պիտի ըլլայ, տանկներու վախէն վառեցինք բոլորն ալ...

Անհամբեր կը սպասեմ, որ պատրոյզին քիթը կտրէ, ճրագը վառէ եւ զնէ սեղանին վրայ, երգարանին քով։ Եթէ ինքն ալ նստաւ ու սկսաւ դանդաղ շարժումներով տետրակին էջերը դարձնել՝ լաւ նշան է։ Պիտի կարդայ երգելու պէս, նախ՝ կամաց, հազիւ լսելի հնչիւններով, ապա՝ քիչ մը աւելի եղանակաւոր։ Հետզհետէ իր վարանումները պիտի փարատին, մենք հաւաքուած պիտի ըլլանք սեղանին շուրջ եւ մամային շնորհները պիտի վերածուին խնկական երգի։

Մեղմ ու հանելի ձայն ունի հաճի մաման։ Գիտէ երգարանին քնացող տառերը կենդանացնել եւ վարակել ջերմութիւն մը փոխանցել մեզի։ Տխուր են իր երգերը, չա՛տ տխուր։ Աւելի ճիշդ՝ տխուր է երգելու եղանակը։ Ամէնէն աւելի միտքս մնացած են «Մայր Արաքսի», «Իբրեւ արծիւ» եւ յատկապէս մինակը տուն դարձող ձիւն երգը։

Այ՛ գիմ եկաւ, միմալ եկաւ,

Ա՛խ, իմ եարս տուն չեկաւ։

digitised by A.R.A.R.@

Ով սիրում Գի, դու ինձ ասա,
 Ո՞ւրտեղ թողիր իմ եարին,
 Ո՞ր քարին տակ, ո՞ր ձորին մէջ
 Անտէր թողիր իմ եարին...

Ամէն անգամ, որ կարգը կու գար այս երգին, սիրտս կը ճմլուէր անծանօթ բռունցքի մը սեղմումով: Ես կը տեսնէի կարմիր ձին, առանց ձիաւորի, դուռը կախ տուն վերադարձած: Կը տեսնէի մամայիս պէս երիտասարդ եւ ազուր կին մը, որ յուսահատ աչքերով պատու հանէն վար կը նայի ու չի գտնար իր եարը ձիու մէջքին: Լեռներ ու գաղտեր անդին, ձորի մը մէջ, ժայռի մը կողքին՝ ես կը տեսնէի նաեւ կուրծքէն վերաւոր եւ անշուշտ գետին փռուած հերոսը, սպառ կենդ զժապիտ եարը...

Մամային նախընտրած երգն էր ասիկա: Անորոշ կերպով կը զգայի, թէ հաճի մաման իր դատն ճակատագիրը կ'երգէր անոր բառերով:

Շատունց մոռցուած եւ երգարաններէն ինկած այս երգը որքա՞ն արփունք խլած է մեր աչքերէն:

Հայրիկիս ձեռագիր տետրակը, մամային ձայնով չնշաւորուած, այնքան խորունկ տպաւորութիւն ձգած է վրաս, որ մինչեւ այսօր ալ ես երգարան մը տպուած չեմ կրնար երեւակայել: Իրական երգարանը ձեռագիր պիտի ըլլայ...

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ



ԵՒՈՒՂԻՐԻ ՊՈՅԱՆՆԵԱՆ

Առաջին հեմորոյաններէն Քերտուարտ՝ 1935ին. Նոյնն է 1945ին, Մասսաչուսեթսի Թորք-սթիլի գիւղը: Ետեմական կրթութիւնը կը ստանայ ծննդավայրի ձիական փարժարաններուն մէջ: 1939ին կը յաւանքի Պլյուսիկ Զոյ հեմորոյանը, ուր եւ կը ստանայ իր երկրորդական ուսումը:

1935ին կը նկատուի կրթական մարզ եւ մինչեւ մահ կը ծառայէ ասպարէզին՝ իբրեւ Զոյ չեզուր եւ պրակտիկական ուսուցիչ:

Գործողական գրասեղաններէն սկսած՝ կ'աշխատակցի տփուքաւոյ մամուլին: Երբեմն մը կը պարծածի Արզաթրոս, Վազգէն Տրաքեան, Ե. Սարեան, Ե. Յովսէփեան պրշածունները: Մաս կը կազմէ «Բազմաւորութիւն խմբագրութեան, ամսագրին՝ Խմբագրութեան» մինչեւ իր մահը (Յունուար 1962 - 13 Հոկտեմբեր 1966):

Բանաստեղծական, տրամպ եւ քննադատական իր լինքը ամփոփում են եօթը հատորներու մէջ՝ «Սէր եւ վիշտ» (1944), «Էպոք» (1948), «Թուրք գրականութեան» (1961), «Տամար տարազութի» (1963), «Երկու մամուլներ» (1964), «Դեմքեր» (1966) և, «Թանգավայր կարասեալ» (1964):

Անոր ժեյի չի անդուլթեան հետեւեալով կարճ չրբան մը անկողնոյ ծառայելէ ետք, Եղ. Պոյաննեան կը մահանար 13 Հոկտեմբեր 1966ին, Պլյուսիկ:

ԵՒ. ՊՈՅԱՆՆԵԱՆ

ԿԸ ՍՊԱՍԵՄ

..... ●

Կը սպասեմ՝ որ աստղերը քրջեն Բեզ,
Զեփիւռները խաղան վրադ,
Գիշերը խորանա՛յ չորս դիդ.
Հաւախօսի առաջին պահն է.
... Դուն կը մեջես, դուն չես գիտեր.
Երկնային հարաւը իր նրագները կը մարէ
Ու հիւսիսի անտառները տխուր են ու յոռի
Եւ կէս-գիշերը հիմա արձագանգ մըն է միայն,
Գետառնափնի լայն, խոր, մսեմական կէս-գիշերը:
... Աղուոր բաներ կը մեկնին.

digitised by A.R.A.R.®

Եւ հոն՝ ուր գանգակ մը կայ, յդի է հրաժեշտի տխուր
 կոչնահարութեամբ
 Ու անսպառ ճրաստանին մատուռը կը սպասէ
 մենաւոր սուրբերու մուտքին
 Եւ քան հրեշտակներու պայծառ ամբարձման:
 Կայ ամէն կողմ թախիժ, կայ ամէն կողմ մեղամաղձութիւն,
 Կայ ամէն կողմ խորի՛մ ստուերաշարժութիւն:
 Հողը, մութին եւ բոլոր տրտմագորշ բաներուն մէջ ծրարուած
 Գետահովիտին ցանկատե՛նչ հողը՝
 Սանդուխներ դրած, ելած վեր՝ երկի՛նքը կը կոզուպտէ,
 Ու դուն կը ննջես, երազի կատարեալ փաղցրութիւն,
 Ու դուն կը ննջե՛ս տակաւին.
 Դուն ի՞նչ պիտի բերես վար երկնային մեծ բարձունքներուն
 շքեղ աւարէն,
 Ըսէ՛, առտու պիտի ըլլայ, դուն ի՞նչ պիտի բերես...

Ես ցայգաշրջիկ տղայ մըն եմ
 Եւ ցայգորդութեան ու արբեցումի ճառագայթափաղփ
 անեզրապահի մը
 Փշրած եմ երազանքի ամէն նշխարակուծ
 Ու թափառած ուղղութիւններովը սրտիս մեղմաւազ
 սլափահարութեանց:
 Ամէն դի օրօր կայ. ամէն դի հեւք, ամէն դի առանձնութիւն.
 Իմ հոգիս գիշերամուխ է ու ես թափառագնաց ոտներ ունիմ.
 Երկնքին ախտը վրաս է դեռ
 Ու վարակուած, տարափոխուած է ծուծս
 Գոյութեամբը յաւիտենական Անհունին:
 Կը սպասեմ, որ կոզուպտի գացող Հողը
 Նածուկ բան մը ըսէ ականջդ ի վար,
 Յանէ սրտիդ մէջ սրբասերմէն իմ մեծագոր բաղձանքներուն
 Ու դուն գայն իմանաս իմացումովը միայն քու անսպառ
 ենթագոյութեանդ:
 Ես, տարտղնուած հոգի, սփռուած մե՛ծ խաւարներու մէջ,
 Կը սպասեմ՝
 Որ երկնային շահատակութիւններէ դարձող Հողը,
 Բերէ ինծի այն բառը, որ դուն կըրսնցուցիր
 եօթ իրիկուն առաջ,

Զուարթաճանաչ աստղերու արեւելեան փունճին,
 Ու դուն չգիտնաս, այլ ներքմանս գայն միայն, ննջող,
 ննջող հոգի.
 Դուն գիտե՞ս, կրնայ բունը ըսել քեզի, թէ արեւը
 ի՞նչ թափօրներով
 ի՞նչ վայելչընթաց նոխութեամբ պիտի մտնէ
 երկրի այս մասին մէջ
 Ու հրապուրէ ամէն տեղիւ, ամէն նամբու
 քար ու ջուրի մասնիկ:
 Պիտի լիանայ նոյնիսկ ամէն անկիւն, ամէն գաղտնի խորշ
 Ու միջատներու հոգին պիտի լայննայ ու
 տարածուի՝ այն ատեն:
 Տե՛ս, ջուրերը արթուն են, ու գեղառուա՛կ առ գեղառուակ,
 Ուր կ'երթան արծաթ հեղուկները հիմա,
 ո՛ւր:
 Յամաճամասերուն համար գետերը ամէն բան
 պիտի ըսեն ռվկիանոսներուն
 Եւ ռվկիանոսները պիտի մոնչեն, հինգ ահեղ,
 ամենի ռվկիանոսները
 Պիտի մոնչեն.
 Եւ հոն տարերային պայքարը ոտքի պիտի ցատկէ
 Կայծակնագոր ու փառապանծ շէնգութեամբ ու
 մշտօրէն կատաղի.
 Որովհետեւ ռվկիանոսներուն գաղտնիք մը կը հազարդուի
 ամէն ժամ.
 Մա՛նաւանդ ամէն ցայգապահի:
 Դուն չե՞ս գիտեր, անթերի բարութիւն, որ ամէն շարժում
 երբ մըն է դէպի կռիւ, դէպի ռազմի դաշտ.
 Դուն չե՞ս գիտեր, որ ամէն տարրի, ամէն տարրամասնի մէջ
 Անվախեան ռազմի լման յատակագիծ մը կայ
 Ու կեա՛նքը՝
 Այս մեծ, խորունկ վա՛գքը դէպի Մահ,
 Գերեզման եւ անծանօթ արեւացումներ՝
 Թափանցում մըն է ամէնուն համար,
 Դէպի ամէնուն ռազմի խուլ, կոյր, մունջ յատակագիծը:
 Կեա՛նքը՝
 Զարհուրելի՛ հոսանք ու եղերակա՛ն վայրէջք,
 Կեա՛նքը՝
 Զարմանահրա՛շ նենգութիւն հոգի ու
 մանրամասնութեանց.
 Կեա՛նքը՝
 Անեզրախաւ երկինքներու անշշո՛ւկ
 խորագիտութիւն՝

Յատակագծերու փոխադարձ գողութեան փորձ մը.
Ճգնամբ մըն է միշտ,

Ու Մահը՝

Պարտութիւն մը բոլորին վրայ,

Եւ Լոյսը՝

Յաղթանակ մը ամէնուն մէջ...

* *

Դուն ննջած ես, ես կը սպասեմ:
Երկրորդ պահն է հաւախօսի.
Գիշերուան սեւ երիվարները կը վազեն դէպի Արեւմուտք,
Խենթ, փրփրոտ, հեւասպառ արշաւներու մէջ:
Ո՞վ լացաւ սակայն այսօր մահրութեամբ

խոտերուն ցօղունին

Վրայ, ննջած աղջիկ:

Եթէ մահը չըլլար, ո՞վ պիտի կրնար մահբանա՛լ,

Մահբանա՛լ այսօր:

Հիւանդութիւնները օճառ են ու բազմիմէ Մահը:

Ելի՛ր, տե՛ս,

Ինչ ծածուկ, ինչ աղու՛ր է ամէն բան, ինչ մահուր:

Մահը ներդաշնակած է ամէն ինչ:

Ան ներդաշնակած է կեանքը. հերիք է:

Ուրկէ՞ պիտի դիտէինք եւ ի՞նչ՝

Եթէ չըլլար Մահը:

Գոյացուց մեզ կեանքը տգեղ,

Ու տուաւ Աստուած Մահը իբրեւ արդուզարդի

հնարաւորութիւն.

Մահը ո՛չ թէ պատիժ է, այլ՝ արդուզարդի արտօնագիր՝

Տրուած մեզ նախախնամութեան կողմէ:

... Դուն ննջած ես:

Քունը շեշտած է բոլ մէջ ամէն զեղեցկութիւն,

Եւ սրբագրած է քեզ. աղուորացուցած:

Արեւը, ես ու մեծ Բանաստեղծութիւնը կեանքին՝

Շարունակութիւնն ենք Երագիդ,

Ու Սէ՛րը՝

Շարունակութիւնն է ամէնուն գոյութեան...

ԵԴՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

ԵԴ. ՊՕՅԱՅԵԱՆ

ՍԱՐԱՀԱՐԹԻՆ ԴԱՇՏԱՄՈՒԿԸ



Աշնանամուտի իրիկուններէն մէկը իր ցուրտ ստուերներուն զանգուածը կ'իջեցնէր բարձրաւանդակի հարթավայր գետնի մը խոզաններուն վրայ, երբ ես տեսայ մուկը, որ իր ծակէն քիչ մը հեռու, կը խոյանար բոլոր այն սնունդներուն դէմ, որոնք առաւել զօրութիւն մը եւ տեսականութիւն պիտի ապահովէին իր կեանքին:

Անօթի եւ հզօր մուկ մը: Գորշ հոգեբու գոյնով, գորշ իրիկուններու գոյնով: Ապրելու ուժեղ կամքով մը մտած էր կեանքին մէջ ու մեծցած: Իր չնչին ծաւալին մէջ կուտակուած էր ուտելու անսպառ եռանդ մը, յաղթական ախորժակ մը: Իր գորշ, գրեթէ անփայլ մորթը՝ ապրելու մօայլ ազդարարութիւն մը թուեցաւ ինծի, ուղղուած՝ կեանքին դէմ եւ անոր բազմաբովանդակ շրջապատին:

Կամակոր էր, պինդ, սրտնեղ: Սոսկալի արագութեամբ՝ կերաւ միջատ մը: Աննկարագրելի փոյթով մը՝ սուր քիթը միտքեց սատկած դօդօշի մը փորձութիւն մէջ: Ականջները տնկած, անհաւատալիօրէն զգայուն ամէն մանր շարժումի, ուշադրութեան եւ գոյատեւելու հզօր կամքի մը մէջ ձուլուած՝ խոզանի թանձր արմատ մը կը տեղափոխէր յետոյ դէպի իր ծակը:

Սիրեցի՝ այդ մուկը, ինքզինք ապրելու գորշ ջերմութեան մը, գրեթէ կրակի մը վերածած ըլլալուն համար: Որովհետեւ Սեպտեմբերի իրիկունը կը ծաւալէր անսահման հարթավայրին վրայ, եւ այդ փոքրիկ կենդանին՝ կեանքի հրալիր, այլ սեւ գնդակի մը պէս կը թաւալէր իր գոյութեան ապաստանը:

digitised by A.R.A.R.@

նարանին շուրջ՝ սուր քիթը մխրճած կեանքին ուղղակի որսին մէջ:

Պիրկ էր, կրֆոտ, յարաշարժ: Հոգը չէր՝ թէ պայծառ լուսնկաներ կան աշխարհի վրայ: Հոգը չէր՝ թէ ջուրերը մաւ գեղեցիկ են, եւ աշնան իրիկունները սարահարթներու վրայ՝ զմայլելի եւ տրտում: Գեղին ու ցուրտ խոզաններուն գիրկը նետուած՝ զգայնացած անօթութիւնն էր ան, անօթութեան վսեմ բարկութիւնը: Բայց մա՛նաւանդ, անպայմանօրէ՛ն ապրելու կրֆոտ ազդարարութիւն մըն էր Պեֆայի դաշտին այդ մուկը:

Կը քրթոար մարմինը, կը ճառագայթէր ուժ եւ ճարտարութիւն: Իր գորշ մորթին տակ մուկի միսէ աւելի, բնութեան շքեղ մէկ թիրիմացութեամբը, ան ունէր կարծես կատուի՛ միս, իր բուն թշնամիին իսկ միսէն: Որով վայել էր, որ ան կատուի՛ կտոր մը ըլլար, քան ամայի գետիններու վրայ թափառող թշուառ մուկի մը պզտիկ զանգուածը:

Բայց այդ մուկը տիեզերքին վեհագո՛յն բնագոյն էր անշուշտ, աշնան իրիկունն այդ խորունկ անօթութեան եւ անապահովութեան մէջ, ապրելու վերջնական ազդարարութիւն մը ըլլալուն:

Աստուած գինձ ստեղծած էր մանր եւ դրած... Անհունի՛ն մէջ: Երկու հարիւր կրամ միս ու ռսկորի մէջ՝ կեանքին խելացի ու խորհրդաւոր Արարիչը պատրաստած էր անսահմանութիւնը իր բոլոր երկնակամարներով: Եւ Պեֆայի մուկը մանր ժանիֆներով կը մաֆառէր ահա, իր տեսակին պահպանութեա՛նը համար:

Ճարպիկ էր, ճկուն, գեղեցիկ: Հոյակապ ու հերոսական: Իր աննշան մարմնի ծաւալին մէջ խտացած, տարօրինակ փայլ ու կարծրութիւն առած ըլլալու էր ուտելու, անօթի չմեռնելու անսպառ եռանդ մը, անկարեկիր բնագոյ մը: Լափող ախորժակի մը սեւ կորիզն էր այդ մուկը՝ մութ, մութ:

Կատաղի էր: Կրնար իր կեանքին պահպանութեան համար, եթէ հարկ ըլլար աւտը, ամբողջ երկրագունտը կրծել այդ գորշ, գէր, կայտառ ու կորովի մուկը: Մարմնով մուկ՝ բայց առի՛ւժ մը կը թուէր ապրելու իր տենդով:

Գորշ էր, գէր, վայրագ: Ու կրնար վախճալ անշուշտ: Իր մորթին սահմանէն դուրս՝ ամէն ինչ օտար էր, ամէն ինչ թշնամի, ամէն ինչ դժուարութիւն: Իր մորթին գորշ ստեղծանքէն դուրս՝ անմիջապէս կը սկսէր տարածուիլ ընդդէմ իրեն, ջարին անողորմ աստուածութիւնը, որ կրնար ամէն բոլէ կե-

ընդհանուր գիմօճի մը, կատուի մը, իրմէ զօրաւոր որեւէ ուրիշի մը: Իր ապահովութեան սահմաններն էին հետեւաբար պոչի ծայր մը, քիթի ծայր մը, ոտներու եւ ականջի ծայրեր: Ասոնցմէ դուրս կար եւ ասոնցմէ շա՛տ զօրաւոր աշխարհը կար, սնունդ՝ գոր հարկ էր ամէն օր շահիլ, վտանգելով ինքզինք: Ու թերեւս ապրելու այդ տարօրինակ առեղծուածին համար, ան, բարձր հարթավայրերու խոնարհ դաշտամուկը, կատաղած էր տակաւ, զօրացած ներքնապէս եւ, ի վերջոյ, սեփական վախին վրայ հաստատած ու պարգած անկախութեան դրօշակ մը: Մեծ ուժերու դէմ զգուշաւոր եւ խորամանկ՝ այլ բացարձակ անգթութեան մը կայծակը ըրած էր ինքզինք տկարներուն հանդէպ:

Ստեղծուած էր, պիտի ապրէ՛ր: Իր վրայի մորթը կ'ուզէ՛ր ատիկա, չսկորները կ'ուզէին՝ ատիկա: Պիտի ապրէր՝ ընդդէմ հոգին վրայ ու երկինքին մէջ գտնուող բոլոր զօրութիւններուն: Բախելով անոնց հետ: Չուզելով ընկնուիլ, պարտելիլ, մեռնիլ: Պարզ դաշտամուկ՝ ամենամեծի եւ վտանգաւոր խաղը պիտի խաղար ինք եւս՝ ինչպէս նանը, առիւծը, մարդը, փոքորիկը: Կեանքին վտանգաւոր խա՛ղը...

Բնագը էր ան, արիւ՛ն եւ Անյայտութենէն նետուած կեանքի կտոր: Ու կեանքը հրաման մըն էր, եւ ինք պիտի կատարէր այդ հրամանը, նոյնքան պատուով ու վեհութեամբ, որքան փիղը, որքան վագրը, որքան իր ցեղին թշնամին, — անհարկու դաժանութեանց թագակիր կատուն:

Ըստ այդ դաժանած, վեհացած մուկին՝ տրուած կեանքը լիովին ապրելէն դուրս՝ չկար ուրիշ օրէնք: Չկար անոր հաւասար ոչ մէկ ուրիշ նուիրականութիւն: Եւ ապրողները կ'ապրէին՝ ընդդէմ ամէնուն, ընդդէմ ամէն վտանգի, ամէն արհամարհանքի:

Կեցած էր քիչ ետք ճիշդ ծակին քով, քիթը տնկած օդին մէջ, կարծես կը փիլիսոփայէր նիցչեական այս մուկը.

— Վա՛յ անոր, որուն քիթին ծայրը բաւականաչափ խորամանկութիւն չկայ, ու եղունգներուն մէջ՝ ո՛ւժ:

— Վա՛յ անոր, որուն ականջը չունի Չարիքին ծածկագրութեանց բանալին: Վա՛յ այդ տեսակ անհատին, մա՛նաւանդ ժողովուրդին:

— Վա՛յ անոր, որ հեռու է իր ապաստանարանէն, ռազմադաշտէն, հողէ՛ն: Վա՛յ այդ տեսակ անձերուն, վա՛յ այդ տեսակ ազգերուն:

— Եթէ հեռու ըլլայի ապաստանարանէս, ռազմադաշտէս եւ հողէս՝ անխելք պիտի ըլլայի, պիտի վախճայի միշտ ու

տկարանայի: Մանր ու վերացական մուկերու պէս պիտի ըլլայի, մանր եւ օղային ժողովուրդներու պէս:

— Մեծ ու մենաւոր մուկ մըն եմ, գրեթէ աւագակ մուկ մը: Մուկի մորթիս տակ ունիմ գիս հալածող թշնամիիս միսէն, կատուի՝ միսէն: Տեսայ, որ այդպէս պէտք է: Անխելութիւնը կ'ատեմ: Անօթութիւնն ու վախն ալ: Կը սիրեմ իրիկունը, ստուերը, տարածութիւնն ու վտանգը:

— Ուրիշ մուկերու պէս չեմ: Զանգուածներու մասնիկը չեմ, անոնց փոշին չեմ: Գերի, տկար, վատթար չեմ: Ոչ մէկ ալիւր գիս կը կաշառէ եւ ոչ մէկ շաքար կը հմայէ: Կը խնդամ ջաղացպաններուն վրայ եւ կը պժգամ շաքարավառաններուն նենգաւոր ժպիտէն:

— Տես չեմ նաեւ այն մուկերէն, որոնք ջրանցքներու շուրջ կը տխմարանան եւ կամ առտուան արեւին տակ, անօթի, ծարաւ, երկչոտ՝ խմբական հաւաքոյթներ կը սարքեն, ժողով եւ միթիւն կը գումարեն: Աւերակի արուած հոգիով մուկ մը չեմ: Ճանկ ունիմ, քիթ եւ կամք. անոնց կը վստահիմ: Կը սիրեմ ազատութիւնը, նաեւ լոյսը կէսօրուան եւ տարածութիւնները կեանքին:

— Թող ասկէ ետք անհատներն ու ազգերը իրենց մորթին տակ աւելի՝ զօրաւոր բան մը կրեն, ինչ որ կրած են դարերու դժբախտութեան մէջ. թող հաւասարի իրենց մկանին զօրութիւնը թշնամի մկանին արիւնարբու զօրութեան, թող իւրացնեն թշնամիի՝ մկանը, թշնամիի՝ ջիզը, թշնամիի՝ քարկութիւնը: Եւ թող անոնց քիթին ծայրը՝ հեռաւոր հատանութիւններն ու նարտարութիւնը զան ու միասին բնակին:

ԵԴՈՒԱՐԴ ՊՅԱԶԵԱՆ



Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

1936 չրժանու արաներին: Մնած է 1915ին, Պաղ-տատ: Նախադրժու թիւ նր կր ստանայ Պաղտատի

ազգային վարժարանին մէջ, ուրիկ շրժանու արտ-րյալ էաթ, իրրէ: դիւերթիկ ու սանազ՝ կր յանաթիւ ձեմարան: Ապա կ'անցնի Պէյրութի Փրատանկան Համալսարանը, ուրիկ է: կր վկայուի իրրէ: րժիւի: Համալսարանական իր կրթու թիւ նր ստանալ էաթ, կր վերադառնայ Պաղտատ է: իր կործան մաս-նակցու թիւ նր կր րրիկ դազու թիւն ազգային է: մաս-կու թիւին կեանքին: Այս շրժանին մաս կր կազմէ՝ «Գոյամալա» շարաթաթերթի խմբադրական կազ-մին:

Վաթու նական թու սկաննէրու է կր վերադառ-նայ Պէյրութ է: 1962ին մաս կր կազմէ «Բաղիմ» աժադրի խմբադրութեան՝ մինչէ: 1973: 1969ին՝ կր ստանձնէ «Ազգակ» շարաթաթակ՝ ՝ դրոշակի վարիլ խմբադրի պաշտան, դոր կր վարէ մինչէ: 1976: 1983: Յու նու արին կր ոկսի Հրատարակել «Փարս» էրիւարաթերթի, որմէ յայս կր անանէն տասնմէկ թիւ էր:

Բճկական է: Հրապարակադրական աշխա-տանքներու ն աւրթեր՝ գործան մասնակցու թիւ ն կր րրիկ լիբանանայ ազգային-Հատարակական է: մշակու թիւին ու կրթական կեանքին:

Գորացական գրասեղաններն սկսած՝ Բ. Սէսկ գրանու նով թէ աւ ազանի անու նով սփիւռ թանայ մամուլին աշխատակցան Բ. Փափազեան Հրատա-րակած է էրիւր Հատարներ՝ «Պատմութիւն նկնդա-փոխութե» (1966), «Լուիսի Փիրանիլլա» (1968), է: «Թատերգութեան արուեստը» (1977):

Ներկայիս, կ'ապրի Պէյրութ:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ՈԳԻՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԹՆՈՂՈՐՏԸ

Կր մտածեմ, որ կար անկասկած գաղափարական մթնոլորտ մը ձեմա-րանի մէջ է: ձեմարանի յատուկ ոգի մը: Սակայն, երբ կր փնտռեմ ձեաւ ու-րու մը այդ գաղափարականին կամ ողիին, չեմ գտնէր պատերէն կախուած, ն:անախտութ մը գրկած տախտակներ: «Առաքինութիւնը մարդու ս մեծագոյն պէնքն է» կամ՝ «Ուղղամտութիւնը առաջին առաքինութիւնն է մարդուն» պարու նակութեամբ, ոյ այ կր Հանդիպիմ Հազու ստի կամ ծիսակատարու ՝ թեանց աւանդութիւններու: Ընդհակառակն, կր տեսնեմ ձեմարանը է: ճե-մարանականները ազա'տ նման ձեալան մզու մեներէ կամ կաշկանդու մեներէ: Կր տեսնեմ զանոնք ԱԶԱՏ, բառին յրի է: իրական առու մով, է: թերեւս, Հիմ-քը այնտեղ տիրապետող գաղափարական մթնոլորտին է: ոգիին ԱԶԱՏՈՒ-թիւնն էր:

Ազատութիւնը պէտք չէ չփոթել անիշխանութեան հետ, ինչպէս տառնին կը չփոթին շատեր ու կը պակասուն ձեւաբանի մէջ անբոյս գտնկարդուպահութիւնը:

Իրրեւ ուսանող, կամ իրրեւ ուսուցիչ հոն անցուցած տարիներու քրեթագրին, ոչ մէկ օր հանդիպեցայ անկարգապահութեան: Ամէն օր ռակայնի դէմ յանդիման կը գտնուէի մտքի ու հոգիի ազատութեան:

Անոնք, որոնք կ'ուզեն աշակերտը տեսնել քարացած անշարժութեան եւ լուսթեան մէջ, յանուն կարգապահութեան, առանց որ իրենք թափին պէտք եղած ճիշդ, տոնքնայնութիւն, համար աշակերտը, գրաւելու համար անոր միտքն ու հոգին, անոնք չեն մտածեր իրենց յանձնուած տղոցմէն ու աղջիկներէն ապագայ մարդը, հայ մարդը պատրաստելու մասին, այլ կը ձգտին միայն իրենց հանգիստին ու կ'ուզեն աշակերտը մտցնել կազապարի մը մէջ, դնել զայն մամուլի մը տակ ու ճգմել կարգապահութեան գլանին ներքեւ այնպէս, որ ոչ բերանը բացուի, ոչ ալ անդամները շարժին, երբ իրենք խօսին:

Ջարկած էր զանգը ու դասարանէն ներս էր մտած Եանթը: Կանգնած էր սեղանի ետին, կը խօսէր յունական քաղաքակրթութեան մասին, անոնց տաճարներու մասին, քուրմերու, վիստալեան կոյսերու, զոհարեալական արարողութիւններու մասին, Փերիքլէսի մասին: Տասնվեց կամ տասնութ պատանիներ, անտեսանելի թելերով կախուած իր շրթունքներէն, մոռցած զուրթ ծոռերու մէջ խաղցող տարուկ արեւը, գրասանքն ու խաղը, փոխադրուած էինք Ակրոփոլ, Փարթենոնէն ներս, կամ կը ճեմէինք Սոկրատի ու Պլատոնի հետ, երբ զանգը, ուրիշ պահերու փրկարար զանգը, այս անգամ անողոք՝ կը կտրէր թելը, խլելով մեզմէ զգոհանքի ճիւղը:

Կարգապահ տղաք էինք ու աղջիկներ այդ օրը եւ անկէ հտք միշտ՝ Եանթի գասերու: Կարգապահ այնպէս՝ ինչպէս դուրսի ախարհը կ'ուզէր՝ Ազատ տղաք էինք սակայն, ու ազատ աղջիկներ: Ո՛չ մէկ ձեռքի պահանջով, հրահանգով, հրամանով չէր ձեռք բերուած մեր լուսթիւնը եւ ուշադրութիւնը: Առիւնքն ու մեր հոգիները, գրաւուած էր մեր միտքը, մեր ազատ կամքով կապուած էինք ուսուցիչին:

Ազատութիւնը կը յարգուէր մանաւանդ մասնաժողովներու եւ գաղափարներու կազմաւորման եւ արտայայտութեան մարդին մէջ:

Ձգահանելու եցաւ երբեք մեզմէ կաղապարուած մտածումներու արտադրումը, շափում խօսքերու գործածութիւնը, պարտադրուած պաշտամունքը այս կամ այն գաղափարին, կամ անձին, կամ մտայնութեան:

Ուսուցիչին եւ աշակերտներու յարաբերութեան ազատութիւնը կը մղէր աշակերտը ըլլալու արժանի իրեն հանդէպ յայտնաբերուած փոփոխութեան: Հազուադիւրէն Եանթի միջամտութիւնները կամ սաստիկը եւ սաստիկալէ աւելի դարձանք մեր էին անոնք, որ այդ տղան, կամ աղջիկը կըցեր էր այդպիսի տղեղ քայլ մը առնել, չէր սպասուել իրմէ, ուրիշ բան կը յուսացուէր, տարրեր ճանչցած էին գիւղեր, ինչ էր պատահած արդեօք:

Ու ան, որ հոգի մը ունէր, ու զէր կամ չուզէր, ինքն իսկ պիտի տնչնար իր ըրածին եւ սրբազրէր ինքզինք, ձգտելով արժանի ըլլալ իր մասին կազմուած լուս կարծիքին:

Այդ ազատութեան կը պարտին ձեւաբան յաճախողները կամ աւարտողները՝ իրենց անհատականութեան չճգմութիւնը, խտրականալը, իրենց հոգիի լուս կոյմներու փթթումը եւ գիտակցութեան գորացումը:

Այնքան լրիւ եղաւ այդ ազատութիւնը, որ դուռնու եցան ձեւաբանը աստղ շրջանաւարտներ, Եանթը չսիրող ձեւաբանականներ, ճիշդ է՝ հազուադիւրէն, բայց կային: Եւ ոչ մէկ օր դասնութեան արտայայտութիւն չիլեց անոնց զոյութիւնը ձեւաբանի վարիչներու եւ ուսուցիչներու բերնէն:



Նիկոլ Աղբալյան
digitised by A.R.A.R.®

Ու ապառաժութիւնը շարունակեց հոգիով ու մտքով անկաշկանդ մարդիկ պատրաստել:

Երկրորդ հիմնական գիծը, որ կը տեսնեմ այսօր, յետագայը ինչպէս թուի, անհուն սէրն էր, ու պաշտամունքն այն ամէն ինչին, որ հարապատօրէն հայկական էր, հայ ժողովուրդի մտքին ու հոգիին բերքն էր, հայոց պատմութեան լուսաւոր հանգրուանն էր:

Այդ խորունկ սիրոյ մարմնացումը Աղբալեանն էր եւ, ի տես հայ ժողովուրդի անցեալի մեծութեանց՝ անոր աչքերէն հոսող արցունքը:

Արշակ Բ. Շապուհի վրտնին մէջ կը պարտէր ու երբ կու գար Հայաստանէն բերում հոգին վրայ, կը գոռար իր ձայնը հպարտ, անընկճելի, ու կը փայլէին Աղբալեանի աչքերը. կ'անցնէր պարսկական հոգին վրայ եւ հլու-հնազանդ կը զառնար Արշակ, քմծիծաղ մը զծագրելով Աղբալեանի դէմքին վրայ, որովհետեւ գիտէր, որ անկորնչելի հայու ոգին պիտի արթննար Արշակի մէջ քիչ ետք, կրկին ոտքը հայ հոգին վրայ դնելուն պէս:

Փառասուս, Նիզիէ, Խորենացի կ'ըսէր այնպէս՝ ինչպէս ուրիշներ պիտի ըսէին Աստուած, Որդի, կամ Հոգին Սուրբ:

Կ'ապրէր մեր բոլոր դարերուն մէջ, բոլոր դարերուն հայու հոգի ու նեցողներուն, հայութեան գանձերուն պաշտամունքը ու նեցողներուն հետ, ժամանակակից ապրումով: Սահակ կաթողիկոսի հետ գիտերու փոխադրութիւնը ունէր, Ներսէսի հետ կ'աղօթէր բազմատարած, Արշակ Բ.ի հետ կը տառապէր Անյուշ բերդին մէջ, կ'արտասուէր Անիի աւերակներուն վրայ, անցեալ ու խորտակուած բոլոր փառքերուն վրան հայուն: Կը դուրսգլուր ժողովրդական երգի մը բառերուն վրայ, անոնց հարազատ իմաստի պահպանման վրայ. «Թխկոն, Թխկոն, Թխկոն տէ՛ն կը դառնար զօրջ մի՛ կոնտէ, Ապոն թող կոնտէ՛ն տէ՛ն ու երգը կը կենդանանար, Ապոն հոգի ու մարմին կը ստանար, հայ գիւղացիին անհուն բարութեամբ ու տառապանքով, շուրջպարի կը մտնէր իր սիրտը, սակայն ուրիշ մարդու գացած աղջկան հետ եւ, ի տես անոր յուզումէն կ'իմաստէր՝ կը պաղատէր «տըլէ մի՛ կոնտէ, Ապոն թող կոնտէ...»:

Կոմիտասը՝ իր հոգիին ամբողջական խորութիւնը կը գտնէր Աղբալեանի շրթերէն ծորող բառերուն մէջ ու Հայր Յակոբոս Տաշեանը կը զազրէր հեռաւոր վանական մը բլլալէ ու կը դառնար հայ պատմագիրներուն, գրչագիրներուն շղթայուած օղակ մը եւ մխիթարեան վանատան խցիկը կ'ըլլար հայկական լեռնախորհի փէհերուն թառած վանք ու տաճար հայ մտքի, հայ հոգիի:

Ձե՛, Ճեմարանի պատերուն վրայ չկային ոսկետառ տախտակներ՝ «Մահ իմացեալ անմահութիւն է» կամ այլ մեարտական պատգամներ պարտի նակող: Կար իր սեղանին ետեւ Աղբալեանի սպիտակահէր գլուխը, որուն վրայ եկած էին հանգչելու յուսապսակները Ս. Մեսրոպի ու Սահակի, Խորենացիի ու Նարեկացիի:

Ու նաեւ հպարտութիւնը կար այնտեղ: Արժանիքներով հարուստ ժողովուրդի արժանաւոր գաւաակներուն հպարտութիւնը հայ ծնած բլլալու: Սուրբայայտութեան պատգամ մէ տառապողները բմբունել չէին կրնար ստիկա ու յաճախ կ'երակայութեան զգացումին կը վերադարձէին հրճուանքը, որ կը ծագէր Շանթի աչքերու մէջ՝ ի տես «Համազգային» թատերասերներու ձեռք բերած յաջողութեան, կամ ճեմարանականի մը, կամ ուրիշ հայու ձեռք բերած յաջողութեան համար Աղբալեանի արտաբերած հիասքանչ տեսաւոր...քը:

Հպարտութիւնն ու գոռոզութիւնը հոմանիշ չեն իրարու եւ երկրորդը անոնցմէ մուտք չ'ուտ: Ճեմարանի մէջ: Սակայն կար ցեղի արժէքներու գիտակցութեան բերած վարակող հպարտութիւնը բոլոր անոնց մէջ, որոնք վաղուան հայ մարդը պատրաստելու մենխան ունէին:

Ինքնաշահույթն ու մեծամիտ կոչուեցան ճեմարանականները յաճախ ու քիչ մը ամէն կողմ: Գանուեցան թերևս ինքնաշահույթն ու մեծամիտներ, ճեմարանական ըլլալը դրամագլուխ մը կարծողները, սակայն չէր գար ու չէր կրնար պայման տալու մ մը շինարանին, ուր տիրող ոգիին ու պաշտօնական միջոցառման հետ խոտոր կը համեմատուէին մեծամտութիւնն ու ինքնաշահույթն: Արտաքին միջավայրի ապրումներուն և արժանազանոր կզան հապտապիւս քանի մը զկարգերը, կամ էլ ուղիները ինքնաշահույթն ու մեծամտութեան:

Համեմատութեան մարմնացումն էր հայ հոգիի մարմնացումն իսկ եղող Ագրապեանը, դասարանին ներս թէ դուրս, դաստիարակական սրահներէն ներս, կամ ժողովներու մէջ:

Անվիճելի գեղեցկութիւններ արտադրելէ ևտք մատենագիրներու մասին հոգիները խոսկող դաստիարակութեան մը բնթագքին, աւարտու մէն ևտք ժառանգանալի չեղա՞ւ արդեօք՝ կը հարցնէր իրական անձկութեամբ ու երբ հակառակը կը պնդէինք, նոր միայն խանդավառութեան ախբը կը բարձրանար իր սրտէն ու նոր թափով կը վարակէր շուրջիները:

Շունթը, անմատչելի կործնած Շունթը ևս իրապէս շահերու և անմատչելի մնացած Շունթը պիտի ըլլար օրինակը ինքնաշահույթն ու մեծամտութեան: Ինչպէ՞ս պիտի կրնան սակայն իրենց անմատչելի մնացած Շանթին համար մեծամիտ ու ինքնաշահույթն էր բռնել, քանի որ իր անմատչելիութեամբն իսկ անձանք մըն է ան անոնց համար: Իսկ անոնք, որոնց մատչելի էր և կուէր Շանթը իր մանկական պարզունակ հոգիով, կրնա՞ն արդեօք նման յայտարարութիւն մը ընել. պիտի այրին չրթուքները անոնց ու խիղճը պիտի չարքիլէ իրենց հոգին:

Ու զգամտութեան, պողպատեայ կամքի, անսոյթութե և շարունակական յատկապագայի մարմնացումն Շանթը զրա՛նած էր իր հոգիին կեանքէն եկող հարուածներուն և զէ՛մ, հոգիին թոխչը արդիւնող առօրեայի տափակ ու գունճիկ բոխ-բառններուն և, միջմտութիւններուն և, պոհանքներուն զէ՛մ ու կը թուէր զրա՛նին բախողներուն և, որ Շանթը արհամարհանք ու նէր մարդոց հանդէպ:

Ջրահները իր հոգիին կ'իյնային, երբ կը վճռէր, որ զիմացիներ անասակ էր ակունքն ի վար հոռեցնելու Պէտքը լեռան ստորոտը տեղի ունեցող կոխուներուն և, գոյութեան կենդանական պայքարներուն ազմուկը: Ինք շատոնց բարձրացած էր պաշարի ու ձորերու օդը կը նկզէր գինը, մինչ բարձունքներու վրայ բուսող խոտին ու ծաղիկին հանդէպ, լեռներու կոպին զարնուող գլ-փիւռին ու հովերու և հանդէպ պարզութեան ու սէր ու նէր միայն ու յապկեցած կարօտը աւելի բարձրին:

Աւելի բարձրին, ո՛չ ունի փառաւորին:

Շանթը պատգամաւ տիպար: Այո՛, խորքին մէջ նայելով Ռոմանթիք և իրիքի. անասակ նիւթապատութեան բերած մեծամտութեանց և ինքնաշահույթն:

Արա՛նին խորքը կանգնած, անշարժ, նայուածքը դա՛մած սանդուխտներէն խառն ի խոռն բարձրացող աշակերտներուն և, Շանթը կը սանձէր իր աչքերուն և փայլումն իսկ խաղը նոր ձգած, Լեւոնները քրտինքով ծածկուած ողորդը ու կը մղէր պանոնք կոճկուելու և հանդարտած մտնելու դասարան:

Հեռուստ'ը ու բարձր:

Վերադառնալու ու սերուն, կ'սկսէր փոխն, ու նկնդիր գեղեցիկ թատերակի մը պատմութիւն՝ «Յետո՛յ, շարունակէ՛...» ու աչքերուն մէջ ծաղկած ժպիտ մը, երբեմն քաղցր, հնչական խնդուք մը, մօտիկ քեզի, այնպէ՛ս մօտիկ, որ կը մոռնա աւարտութիւնը զինքը քեզմէլ բո՛ւնալ ու ան կ'ըլլար մօտ ու մատչելի:

Հպարտ: Այս: Հպարտ: Հորոտութեամբ ցեղին ու ցեղին գտականե—
րուն: Հպարտ: մտքի ու հոգիի որժէքներով, Հպարտ: Հոյ ժողովուրդով,
Հպարտ: մարդկայինով, այո: Ու կը ճառագայթէր այդ Հպարտութիւնը ամէն
ցաւի, ամէն խօսակցութեան, ամէն բանախօսութեան, որ կու տային ինքը՝
Շանթը, կամ Աղբալեանը, վարակիչ ջերմութեամբ մը ողովելու համար ուն—
կընդիրները, աշակերտ կամ ոչ:

Ու այս բոլորին շահկապը, մղիչ ուժը կամ խարխիւր՝ մղու մը աշխա—
տանքի, մղու մը զիտակցելու, որ ճեմարաններն ու համալսարաններն անպամ
հանգրուան մըն են միայն մարդկային մտքի անյազ ծարաւին յագեցմանը
համար, որ տնհրաժեշտ չեն համալսարանները, եթէ կայ յամառ աշխատանքի
կարողութիւնը, եթէ կայ նոր Հորիզոններ բանալու, տեսնելու, ծարաւը, եթէ
կայ ինքն իր մէջ աւելի ու աւելի բարձրանալու տենելը:

Յրինակը կու գար Աղբալեանէն, որ մինչեւ Ճեմարանի սրահին մէջ
մութ տիրուպետելը, կարդալէ ետք, յոգնած զիրքը կը զնէր թեւին տակ,
դուրս կու գար բակ, երթալու համար տուն, ու բակին մէջ յամեցող արեւի
վերջին ցոլացումներուն ի տես զպահ, դեռ յոյս է եղեր՝ կ'ըսէր ու կը բանար
զիրքը, ոտքի շարունակելու համար իր ընթերցումը:

Կու գար Շանթէն, որ ամէն առաւօտ կ'անցնէր դրասեղանին առջեւ
մտքի աշխատանքը շարունակելու, ինչ որ այդ որ ըլլար, երբ այդ որ ըլլար:

Յրինակը կու գար: Ահա զաղտնիքը Ճեմարանի գաղափարական ուղի—
ին: Իրենց կեանքովն ու կենդանի օրինակովն էր, որ ոգեղէնը կ'առաջացնէին
Շանթն ու Աղբալեանը:

Հիմա, որ չկան, կարելի է այլեւս ըսել, — մարդն էին անոնք, վեր մարդե—
րէն: Հայն էին անոնք՝ վեր աղաւաղուած հողիով հայերէն: զաղափարներու
մարմնացումն էին եւ ամէնօրեայ ճառագայթում մով, անգաղարու մ սպառումով
կը բերէին սէրը ազատութեան, պայտամունքը ամէն ինչի, որ հայ ժողովուր—
դինն էր հարազատօրէն, հաւատքը հայուն արժէքներուն եւ ապագային հան—
դէպ, հպարտութիւնը հայուն ու անյազ ծարաւը գեղեցիկին ու բարձրին:

Անոնք չկան այսօր, կայ սակայն արձակուած լոյսը, որ առաջնորդու—
թեամբը ուրիշ գաղափարի քուրմի մը պիտի շարունակէ գեռ երկար թափան—
ցել այսպէս: Եւ շրջապատի հոգիներէն ներս, տանելու համար այն—
տեղ մեծարժէք գեղեցկութիւնները հայ հողին:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ



Հ. ԻՓԵԿԵԱՆ

1936ի շրջանաւ արտերին: Մեծ է 25 Յունուար
1919ին, Քեհրան: Իր արուեստագէտն է ասու արու-

կան Հոր՝ Գրապար Իփեկեանի չեւ Երկր Երկիր
ըրիւմ Հուրի Իփեկեան իսկեան կրթութիւնը կը
ստանայ Ֆինլ Երկրներու՝ Գարսիաստանի, Ֆրանս-
այի, Նիդերլանդի, Իրաքի և, Հնդկաստանի մէջ, Իսկ
Երկրորդական ու սու մը՝ Պէրուի Հայ ձեռարանին
մէջ, որուն շրջանը 1936ին աս արտերէ կ'ար, տարի մը
կը չեւանի Պէրուի Սիւրիկեան ձեռնարը գոյնի
դարձեալներուն, ապա կը մեկնի Պէրուի և
կ'ստանի Պրիսկի Նաժարարանին մէջ, ուրիւ և
կը ստանայ իր յիսանն ու ակրիկալիոնը՝ իրրեւ
մասնագէտ գրականութեան, փիլիսոփայութեան
և ուսման լիզուայիտութեան: Աւելի ուշ, իսկ Նա-
ժարարանին մէջ կը պաշտպանէ իր տոմարայի
աս արուեստը՝ իսկրուստ Բանաստեղծ Փանայիթ
Իսկրուստ:

Դպրոցական գրականներէն սկսած՝ Ատրա
գրանուստ կ'աշխատակցի «Հայրենիք» ամսագ-
րին և Կիւսիստայ մասնիկի, Խորոպրիւմ Բա-
նաստեղծութիւններ: Աւելի ուշ, Երբ կ'անցնի
Պրիսկի, Ֆրանսերէնում կը սկսի գրել ինքնուրոյն
Բանաստեղծութիւններ, որոնք կը Նաժարարանին
գրական և Ֆրանսական գրական մասնիկին
մէջ: 1943ին, Պրիսկի մէջ յայտ է ընծայել իր անդ-
րանիկ չերիտայիքը՝ Couleurs de Temps
(Եփամանակի գոյներէ), որուն 1946ին կը յաջորդէ
Sonates (Եղեղեղեղէն):

Երջան մը կը գրայի ու սուցուի Քեհր, Պէրուի
և Փարիզի մէջ, որ և կը թերի իր գործուն մասնակ-
ցութիւնը մը Նաժարանի կեանքին: Կը մեռնի 24
Յունուար 1980ին, Փարիզի Անթոնիոնի Ֆի-
լանդանցիէն մէջ:

Հ. ԻՓԵԿԵԱՆ

ԹՈՂ ԳԱՆ ՕՐԵՐ



Նիկոլ Աղբալեանին

Շովկեր անդին՝
Մըշուշածին երկիրներու մէջ օտար,
Հայրենաբոյր շողմ էիր դուն...
Նւ յուշերու թանկագին,
Թախծակարօտ մեղեդիք:

Այլաբարբառ, անգորով
Իմաստութեան ժայռերուն,
Մագլցումին մէջ մաշող՝

digitised by A.R.A.R.@

Կիսուած կեանքիս անաւան,
 Կապոյտ ծաղիկն էիր զով՝
 Թոյն՝ խոնջէնքիս դէմ ժպտող,
 Վերելին դէմ անկայան,
 Շիք մը, լինէն մեր Սեւան...

Ծովեր ասդի՛ն,
 Երբ քեզ բերի սի՛րտըս մատեան,
 Ինձ ցոյց տըին
 Փակուա՛ծ դուռը տընակիդ,
 Էւս հոգակոյտը փառքիդ
 Եւ թաց ողբը, յաւերժացա՛ծ մեկնումիդ...
 Տըւին նկարդ վերջին,
 Ձիւն է իջեր մասիսական նակատիդ
 Եւ սառեր է, աչքերուդ խորքըն աղօտ,
 Նայիրեան սէ՛ր կարօտիդ՝
 Զուր սպասումն արցունքոտ:

Զգրտայ քեզ, չգրտայ քեզ՝ իմ անգին,
 Ահառական որբացած.
 Զգրտայ քեզ, չգրտայ քեզ՝ եւ բեկուած,
 Վերադարձայ սին կեանքին...
 Բայց, ո՛վ հըրաշք, հո՛ն էիր դուն,
 Հոն՝ ծառերուն ու գետին
 Միծաղին մէջն ու հեւքին...
 Սայաթ-նովեան տաղերուն
 Իմաստութեան ու դաշտին՝
 Վարդերուն մէջն ու փուշին,
 Գինիին մէջն ու վանկին...
 Հոն նըրբամա՛տ թառերուն.
 Թըթիռին մէջ ու յոյզին...
 Վարդակոշի՛կ պարերուն՝
 Նագերուն մէջ եւ սագին:

Գրտայ քեզ հոն՝ վառ փարոս՝
 Մատեաններու աղամանդ
 Պատգամին մէջ տարածին,
 Քաղցրութեան գիրկը նարդոս
 Սաղմոսներու հընաւանդ,
 Եւ սրբտին մէջ տըրտփուն՝
 Հա՛յ դպրոցին ու մտքին:
 Գրտայ քեզ հոն, սէզ հերոս՝
 Ազատվառ կամքերու

Հաւատքի՛ն մէջ աստղահոս,
 Եւ պատանի կեանքերու
 Պատրանքին մէջ անաշուն:
 Թող գան, անդէ՛մ օրեր, թող գան հիմա
 Շող, սիւք ու շող,
 Թող գան մաղուիլ շիրիմիդ վրան,
 Ըլլան անհե՛տ...
 Ափսոսանքնե՛ր թող հեծկրտան
 Յուշերն անքուն,
 Թող գան, վըշտո՛տ օրեր թող գան,
 Դուն կաս յաւէտ:
 Հայոց ազգին կեա՛նքն է անթաղ՝
 Ուր կ՛ապրիս դուն,
 Կ՛ապրի՛ս աւիշ, հեֆիաթ անո՛ւն,
 Լո՛յս արահետ:
 Թող գան, դարով օրեր թող գան՝
 Կ՛ապրիս յաւէտ՝
 Իմ կարօտցա՛ծ, անդա՛րձ մեկնած,
 Ձայն յուսաւէտ:

ԱՆՁՐԵԻ



Մէկիկ-մէկիկ վարդերը
 Կորսնցուցին թերթերն իրենց
 Հիւանդանոցի անկողինիս մէջ
 Այդ տժգոյն օրուան մէջ
 Իրենց դալուկ հոգին
 Կորսնցուցին վարդերը:

Դուրսը,
 Կ՛անձրեւէ:
 Տխրօրէն կ՛անձրեւէ:
 Դուրսը անդադար կ՛անձրեւէ,
 Կ՛անձրեւէ ու կ՛անձրեւէ
 Հիւանդ գարնան վրայ,
 Անժպիտ աշխարհի մը վրայ:

Հեռո՛ւն, անծանօթիմ մէջ,
 Մէկիկ-մէկիկ, մարմիններ կ'իյնան
 Մերկ հոգին վրայ:

digitised by A.R.A.R.@

Հեռո՛ւն, անծանօթին մէջ,
Աշխարհի չորս կողմը,
Հուժկու եւ մեծղի մարմիններ,
Գլուխներ մթադոյն մազերով:
Աշխարհի չորս կողմը,
Հեռո՛ւն, անծանօթին մէջ,
Խոշոր աչքեր մանկական
Ստուերին մէջ բաց կը մնան:

Ու այս բոլոր համը սրտերուն վրայ,
Այս անվերադարձ մեկնումները՝
Կ'անձրեւէ, կ'անձրեւէ անդադար
Նինջերուն վրայ անպատարագ՝
Կ'անձրեւէ, կ'անձրեւէ անվերջ
Մարած արեւներու վրայ,
Կ'անձրեւէ տրամօրէն:

L'ENFANT PRODIGE



Je briserai les freins
du train de ma vie.
Je briserai les freins
et la lâcherai
au hasard des chemins.
O sainte folie
des rails inconnus
aux troupeaux humains

Je briserai les liens
d'un esclavage serein,
des vitesses tracées
et des gares préconcues.
Je briserai les freins
des présents haïs,
et confierai le train
de mon destin maudit
aux rails de ma folie!

(Bruxelles, 1943)

HOURI IPEKIAN
digitised by A.R.A.R.©



Գառար Իփեկեան

ՀԱՅԿԱՅԻՆ

ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ



Հեռաւո՛ր բարեկամ,
Եթէ գիտնայի՛ր
Որքա՛ն պէտք ունիմ, այս իրիկուն
Քու ներկայութեանդ:

Առանձնութեանը մէջ
Սենեակիս,
Կը թրթռայ միջոցը
Ձայներով մարած:

Ասանք բոլորը խորիմաստ,
Որոնք երբեք
Չպիտի ըսենք մենք,
Կ'արիւնին պարապութեանը մէջ
Քու բացակայութեանդ:

Հեռաւո՛ր բարեկամ,
Եթէ գիտնայի՛ր,
Որքա՛ն պէտք ունիմ, այս իրիկուն
Քու լռութեանդ:

ՀՈՒՐԻ ԻՓԷԿԻԱՆ

SOLITUDE



Ami lointain,
si tu savais,
comme j'ai besoin ce soir
de ta présence.

Dans la solitude
de ma chambre,
l'espace vibre
de sons éteints.

Toutes ces choses profondes,

qui par nous jamais
ne seront dites,
saignent dans la vide
de ton absence.

Ami lointain,
si tu savais,
comme j'ai besoin ce soir
de ton silence.

HOURI IPEKIAN

(Bruxelles, 1941)

digitised by

A.R.A.R.@



Ժ. ԱԲԹԱՐԿԱՆ

Թերատար» 1931ին: Մնած է 1915ին, Պարսուշի եւ Փոնիայի երկաթուղային միջեւ գտնուող աննշտն կայարանի մը՝ Ելկրնի մէջ: Կախարչութիւնը՝ թիւեր կը ստանայ Պէրսեթի Ա. Նշտն վարժարանին մէջ, ուրկէ շրջանաւարտ ելլալէ ետք ձեռքի կը չափու հայ ձեռնարան:

Ինքնուրուշտն գրականութեանը հետեւ՝ ժիրոյր Աթթարեան կը սկսի գրել ֆրանսերէն լեզուով: Աւելի ուշ, պատմութեանը կ'աշխատակցի Պէրսեթի ֆրանսերէն մասին: Հետեւեալ թուականներուն, իր պատմութեանը եւ իր պատմութեանը հազարեան լեզու կը սկսի ստորագրել հայերէնով: Շրջան մը մաս կը կազմէ Եւրոպայի խմբագրութեան: 1981ին կը հրատարակէ իր պատմութեանը լեզուին մէջ մը՝ Եւրոպայի լեզուին եւ լեզուին խմբագրութեան: 1987ին, իր թարգմանութեան, Ա. Նաւանդեանի մէջ հայերէնով կը հրատարակուի Հայերի լեզուին Եւրոպայի լեզուին:

1971(ն) ի վեր կ'ապրի Ա. Նաւանդեանը:

Ժ. ԱԲԹԱՐԿԱՆ

«ԱՅՍՏԵՂՈՒԱՆՆԸ ՍՈՒՏԱԿԱՆ Է, ՍՈՒՏԱԿԱՆՆԸ...»

Լիբանան:

Երբ տակաւին չեղածիծայ կը կոչուի:

Երբ տակաւին Արեւելքի այդ տաղանդի պատմութեան տարեկանին չեւ պիտեւ ինչ ուրիշից այդ պէս տեղ լինած, կամ թէ տաղանդի տեղին ուրիշ ինչ պիտեւ մեկուկ պիտեւ ինչ... Փարիզի տեղին հետ, կանաչ, ժպտուն, բարեկերպ... Զուգարից հետ: Երբ տակաւին, երբ տակաւին...

Եւ տակաւին Լիբանանի լեզուները: Միջերկրականի կապուած, միջիւրեւ տեղին այդ վերջին տարի միջիւրեւ իրենց վերջին տարի, կապուած, թափանցիկ մշակութեան պատմութեան լեզուները եւ անոնց լեզուին ու կատարելութեան ու պատմութեան:

digitised by A.R.A.R. @

բակներու պէս ցանուած փայլուն, պուպուն ամառանոց դիւզերու Ջերմայտփի առաջին իսկ ոստումներուն հետ, ամառը դեռ Պէյրութ քաղաքը իր հեղձուցիչ թոնիրին մէջ չգրկած, պէյրութցիին ինքն այ ոստում կատարած կ'ըլլաւ զէպի լեռները, հալարներով մեթր բարձրութեամբ առնոց լանջերու ի թառած ամառանոց դիւզերը: Անկասկած, որ պէյրութցիին հետ օդափոխութեան այդ քարձարները վայրերը փութացած կ'ըլլար իր օրերը, ժամերը, անոնց յետին պահերը մինչև հրճուանքով ու բերկրանքով լեցու հոգիներու լիբանանցիին անմոռելի... Հանդիմանութիւնը նաեւ: Եւ այլեւս երգ ու նուագ, պար ու խոյտանք, երգահանգէս ու պարահանգէս, հանգէ՛ս... Հանգէ՛ս անսպառ: Կեանքը կ'ենար, կը խայտար ամառանոց այդ դիւզերուն մէջ՝ ցերեկներու, գիշերներու ամբողջ երկայնքին: Պար ու նուագ, խնձոյք, խախճանք, զուարճութիւն ու ցնծութիւն անյազ, անյազուրդ:

Այդ պէս էր Լիբանան, ամառներով, ձմեռներով, բոլոր, բոլոր՝ Լիզնակներով: Առակագիր Լաֆոնթէնի ճպուտին երանելի անհոգութիւնը յիշեցնող պարահանգէ՛ս, երգահանգէ՛ս, սոսնահանգէ՛ս Լիբանան:

Այդ տարի, կանխահաս տաքի վայրի ալիք մը պատճառ դարձած էր, որ մենք այ բոլորին պէս աճապարէնք ամառանոց քարձարանայ, դիւզի մեր տունը, սոփորականէն աւելի կանուխ վերադառնելու համար մեր ամառնային ապրելակերպը: Ամառնային եղանակին պէյրութցիին զէպի լեռները տեսակ մը վաշկատու նի կամաւոր գաղթը, տաքէն փախչելու, զով ու մաքուր օդը փրճուտն էլու, օդափոխութեան եւ այլ պատրուակներու կողքին ու այդ պատրուակներէն անկախ, կեանքի, կենցաղի, ապրելակերպի փոփոխութեան հնարաւորութիւնը մը կ'ընծայէր: Ամբողջ տարի մը քաղաքին ճնշիչ, այլեւս արտում ու տաղտկալի առօրեայէն ազատագրուած կ'ըլլար այսպէս պէյրութցիին եւ երեք ամիս, երբեմն նոյնիսկ աւելի, քաղաքին հետ կապը պահելով հանդերձ, զի զը աւարելու, գիւղական կեանք վարելու պատրանք կ'ունենար: Եւ լեռներուն մէջ մնացած էին, կային տակաւին քաղաքակրթութեան ախտերէն զեռ բոլորութիւն չլարակուած, չխաթարուած անկիւններ, ուր մարդ կրնար ինքզինքին այդպէս հանդարտ ու նախնական կեանքի մը պատրանքը պարզեւել: Յամենայնդէպս, խիստ նիւթ մը պատեանին պէս ինքն իր վրայ ուրուող ցից, ու զղածից այդ լեռնային ճամբաներով իր կոնակը անգամ մը երկուք Պէյրութ քաղաքին դարձնել նոք, քաղաքացիին կը վերանորոգուէր կարծէք, նոր հորիզոն կը բացուէր անոր գէժ եւ տիեզերքը կը փոխուէր:

Այդ տարի, ուրեմն, Յուսիսի զեռ երկրորդ կէտերուն, բարձրացած էինք ու հաստատուած գիւղ եւ յանձնուած՝ ամառնային մեր տոմարներուն: Մեր բոլորէն աւելի, բոլոր տնեցիներէն առաջ ամառնային օրացոյցին ինքզինք յանձնած էր վեց տարեկան աղջիկս: Ինքնաշարժէն հագրի ուրքը վար դրած, առանց ոչ մէկուն խօսքը մտիկ ընելու, թէ՛ ճաղջիկս, քիչ մը սպասէ, տեղաւորուելէ անգամ մը, պացած ու տան ետեւ իրքեւ մթերանոց ծառայող սենեակին մէջ դուռը էր իր յանձնական հեծելանիւր ու խոյացած դուրս, զէպի գալտերն ու պարտէզները, երկար ատեն արգելափակուած եղջերուի մը պէս: Քաղաքի շէնքերէն մէկուն հինգերորդ յարկի նեղ սահմաններուն մէջ տարի մը ամբողջ կայանուաւ որ մնացած բնակիչի իր կացութեան վրէժը կարծէք կը յուժէր այդպէս: Ետքաթ մը շանցած՝ աղջկանս ընկերու հի Սիլվանէք ալ եկած էին գիւղ ու տեղաւորուած մեր պարտէզին կից գտնուող իրենց բնակարանին մէջ եւ, այդ պէտքով, ամառնային մեր կեանքը, աղջկանս կեանքը մասնաւորաբար, ամբողջական իր ընթացքը վերադարձուէր: Արեւ ու, պայծառ, բնութեան կանաչ ու հողատար ծոցին մէջ անհոգ, անկաշկանդ ու անփախճան գրօսանքի ու գործունէութեան լըջան մըն էր, որ կը սկսէր աղջկանս ու իր ընկերու հիին՝

Սիլվային համար: Եւ այնչաւ ճոռուղիւն մը, բոլորին մը մեր երկուքիս տունը—
բոլորն շտապ ընկալաւ: Անտառ տան աստիճանի իսկ ծածկերէն մինչեւ իրիկուն ան
վերջին սահմանը վազվազ ք մը, արշաւ մը՝ մէկ տունէն միւսը ու զաղար շու—
նեցող իրարանցում ք մը մեր եւ Սիլվայինց պարտէզներուն մէջ: Այնքան՝ որ
պարտէզները իրարմէ քաճկոտ ցանկապատին որոշ մէկ մասը քանդուած էր,
գետինն հաւատար ճամբու վերածուած, սակայն մեզմէ ոչ մէկուն միտքէն չէր
անցնէր վերականգնել զայն...

Այսպէս էր սկիզբէն ի վեր: Այն սկիզբէն, երբ աղջիկու ու Սիլվան այնչաւ
ոտքի կանգնեցան, քայլ սկսան:

Այդ տարի, սակայն, քաղցր, լուսաւոր ամառնային այդ եղանակը իր
միջօրէին հազիւ թէ հասած, աղջկանս մանկական գուարթ, անստու երօրերուն
վրայ պոստիւրէթիւն մը, սեւ շուք մը խնկաւ: Ամերիկա երթալու, Ամերիկայէն
գալու գրոյցներ հրապարակ ինկան:

Իրիկուն մը, քաղաքէն դարձիս, վաղեց զէմս աղջիկն եւ մէկ շու նշով:

— Ամերիկան հեռու է, պապա...

— Հրամ...

— Պէտք ունի՞ս ալ հեռու է...

— Ինչու՞, ի՞նչ կայ, աղջիկն...

— ... Եղբի Սիլվայինց Ամերիկա պիտի երթան,— ըսաւ աղջիկն՝ տեսակ
մը անհաւատութեան, արհամարհանքի չեղտով: Եւ կարճ լուսթեմէն մը ետք...

— Մենք է՞րբ կ'երթանք Ամերիկա, կ'երթանք մենք ալ, չէ՞, պապա...

— Սկիզբները մըցումի պէս, մարտահրաւեր կարգալու պէս բան մըն էր
Ամերիկա ճամբորդելու այս հարցը: Ինչպէ՞ս թէ Սիլվան կ'երթայ եւ ինչ չի
կրնար: Ամերիկան ի՞նչ է որ, ինչ է իմէ ուզէ՝ իր պապան գինք ուրանդնէ՞ր կը
տանի...: Սակայն շուտով կ'ընտելան հարցերը, մթազնեցաւ աղջկանս ան—
որթեան: Սկիզբի արհամարհում, հպարտ կեցում անգիտութեամբ, փոխուեցաւ
մանուկի իր տակաւին վտիտ պատեաններուն մէջ պարունակուելի, լուծուելի
չկրցող մէկ շատ թանձր անձկութեամբ: Աղջկանս առօրեային մէջ Ամերիկան
դարձաւ մոտաւոր ետու մ, տեսակ մը խուլ, յամառ մտաւորականութիւն: «...Սիլ—
վայինք կ'երթան... Սիլվայինք կ'երթան... Եղբի ալ պիտի չգան... Ինչու՞ պա—
պա, ինչու՞ Սիլվայինք...»:

Կէսօրէ ետք մը, զէպի մօտակայ բլուրները մեր կատարած սովորական
պտույտներէն մէկուն բնթացքին եւ պտույտի ողջ տեսութեան սախաւեցում—
թիւնը տեղի կ'ունենար աղջկանս ու Սիլվային միջեւ:

— Մնտու կ'ներք լինեցինք, պալ ամիս կ'երթանք...

— Ի՞նչ այսինքն, պապայիս կ'ըսեմ՝ մենք ալ կ'երթանք...

— Դուք տուններէդ, պարտէզներդ ծախեցի՞ք մը որ... սնտու կ'ներքինդ
չի՞նցի՞ք... նաւ նստելու թուղթերդ առի՞ք...

— Է՛հ... ի՞նչ կայ որ... մենք ալ վերջը կը լինենք... վերջէն օքայով կ'եր—
թանք... պապա մեզի օթոյով ամէն տեղ կ'ընայ տանիլ...

— Խե՛ղ... չ'ըլլար, օթոյով չ'ըլլար... նաւ պէտք է, նաւ...

— Կ'ըլլայ... պապա կը տանի՞,— կը սրդողէր աղջիկն:

— Օթօ չ'ըլլար բո՞ր քեզի,— կը յամառել Սիլվան յաղթական,— Ամերի—
կա ծովին վրայէն կ'երթան, նաւ ի թուղթ պէտք է առնեն...

Եւ կարծէք թէ անգրադառնալով ընկերուհիին պատճառած ցաւին եւ
զայն մեղմելու մարտի՞

— Դու ն հոգ մի ընել,— կ'ըսէր Սիլվան, Ե՛ի՛ չոզ մի ընել, դու ն չես պար
նէ՛ հա նորէն կու դամ... դալ տարի շուտ մը կու դամ... դալ տարի չէ՛ նէ՛ տասը
տարիէն շուտ մը կու դամ...

— Տասր տարի՞,— կը դարձաբերէր աղջիկս,— ես այն տանն ծեր կ'ըլլամ, մեծ մամա կ'ըլլամ...

— Ա՛յ, ծեր չէ... շատ մը կու գամ... Ամերիկա ֆիւլէ կայ, տնար հետ յուսին կ'երթան... ես ալ ֆիւլէ կը նստիմ—կու գամ...

Իրիկուսն մըն ալ Սիլվային մայրն ու մեծ քոյրը արդէն ժամաք բարձրիչ եկան։ Ետու բնկնուած կ'երեւէին երկուքն ալ։ Կտրծէր յանգստը կը պարծէին լիբանանը ձգելով։ Ալին բոկը ինչ, սակայն դիւրաւ կը կուտնուէր, որ բուն մը պատահած պիտի բոյսար բնաւանդին մէջ, ստիպելով սոյսպէս, որ երկրէն հեռանան։

— Ի՞նչ բնեւէր,— կ'ըսէր Սիլվային մայրը ճարձատա մէկու մը շեշտով,— ի՞նչ բնեւէր... բախաբերիտ աշուղէս բերաւ...

Այդ օրերուն լիբանանը չէր մզուէր։ Անմիանկարն ու մեծաւորը պիտի բոյսար մարդ, կամ չէս դիտէր շրտուց, շիտաւորութիւն ալ ուրիշ ինչ պատճառէր պրզուած՝ լիբանանէն մեկնելու համար։ Հրաժարելու համար կամային ուղի այնքան կ'ազդարար ու հրապուրէր երկինքէն, այնքան հրաշալի, հաճոյսի կեանքէ, կենցաղէ։ Այդ օրերուն աշխարհի բոլոր եւանկարն ու մեկնէն հիւսկի ու հրապուրէր... խնամքներն անգամ դժուար թէ կտրեւային լիբանանէն գրախաւէն ինքզինք արտաքին ապրու պատարուակ գտնուել։

Ետքալ տատու մը, խոշոր քամիով մը կկու, բնացուց Սիլվայինց սնտու կնեւն ու բոյսար պայտ ստիկները ու կլաւ—զնաց։ Իրենք ալ՝ մայրը, մեծ քոյրը, եղբայրն ու ինք, նստանցան ուրիշ ինքնաշարժ մը եւ՝ ժամաք բարձրիչ... միաք բարձրիչ... պայ—պայ... պայ—պայ... քսին, պտուցին ու կլան—զնացին։

Սիլվան մեկնեցաւ։ Պնաց պղտիկ, կարճատեւ պտուղի մը երթալու պէտք։ Սիլվան զնաց, ինքնաշարժին պտտու հանէն շատար, չմտած աղջկանու երեւին պտուղով։

— Նորէն կու գամ... նորէն կու գամ... շատ մը կու գամ...

Յաջորդ երկու օրերուն, իրենց կտտուն դիւրեք—ցերեկ մշուեց, նստած զոց դրան դիմաց։ Խեղճ կենդանին չկրցաւ երբեք դիտեալ, թէ ինչու՞նչ աղջկէս տեսարար գտնու պտտու հան զոց կը մնային։ Եւ այլեւս կտրծէր ճարձատա, ցերեկ ու գիշեր, գիշերները մտնուտնց տղիպարմ մշախնեւեր արձակել պկտաւ։ Երբորդ օրը ալ չկրցանք դիմանալ եւ այդ գիշեր, երբ դարձեալ զոց մնացող պտտու հաններուն վեպկերուն դիմաց կտտուն աղջկէս մշուեց ոկը—ստա, տեսալ, որ աղջիկս ալ մահակային մէջ տնքուն նստէր էր... Երբ դիտեւ—ստա՝ «Պայա,— բաւա,— Միմին մեղք է, շատ կու յայ, Սիլվային կ'ուզէ, հաճեա, տանեւք մեր տունը բերեւէր»։ Պայինք գիշերով «Միմին, Միմին» կանչեց աղ—ջիկս։ Կտտուն ճանցաւ գիշեր, եկաւ մտար եւ քսկտտուիլ պկտաւ։ Առինք—բեւ—րինք մեր տունը, որդեկրեցինք գիշեր եւ տմբուն վերջաւորութեան մեկի հետ քոզաք տարինք։

Եւ այլեւս նամակ, նամակներ... «Միմին բնեւէր հիւ...»։ Առաջինը ստացանք գիւզէն մեր իջնալէն երկու թէ երեք շարաթ կաք, երբ բոլոր պարսոց—ներու կարգին աղջկանու պարսոցն ալ վերաբացան տնէր եւ պարսոցանուն մտ—նաւ կնեւն ու հետ օրերն ալ հագած լին իրենց սովորական տարապը։ Ա՛յ աւար—բերութեամբ, որ տատաները այլեւս Սիլվային հոնգիպիլ շիտը՝ գիշեր միտին պարսոց տունէն համար։ Եւ ուրեմն, այդ օրերէն մէկուն բնեւէր, տեսնուա յանկարծ պահարան մը Ամերիկայէն, աղջկանու անունը գրան, նամակատան մեր հապէին ու պրտած։ Պահարանին մէջ մանկական անվարմ, անհաս տարր գիւրերով... «Միմին բնեւէր հիւ», եւ տմբուց երկու չէ անհաս տարր, ծուռ առ—զերով, բեւապիլ, կտրծէր ծածուկ պրտիլին։ Տեսնելու բուն էր աղջկանու ու բախութիւնը։ Առախութեւն աւելի՝ հպարտութիւնը։ Ինք տատնին նա—մակ կը ստանար, մեծ մարդու կարգին կ'անցնէր։ Չուզեց սկիզբը ոչ սքի յանմ—

նեղ, սակայն հեղեղ, անփրկ ճգնել, բնիկերդտնտնութեան ամբողջ իր գիտու – թիւ նր ի գործ դնել հաբ, կրցաւ վերջապէս երեսն լեւել... «Սիրելի բնիկերու – հիւս: Սնտցեալը... հետեւեալը կտրուցինք»:

«Այն օրը Պէլլուր զայնիմ խոշոր մաւ մը մտեցանք մաւր վերջը մաւայիս գլուխը բռնեց: Վերջը ուրիշ շատ աւելի խոշոր մաւ մտանք լո – դաց լողաց մաւր շատ լողաց շատ շատ բալեցինք Ամերիկա հասանք: Այս – տեղ գալը շատ հեռու է մէկ հաս մաւ չի բաւեր երկուս հաւ ալ չի բաւեր: Խոշոր մաւէն վերջ մէկ հաս օրօ ալ մտանք շատ հեռու տեղեր գացինք: Այստեղ ես դպրոց կ'երթամ անգլերէն դպրոց շատ ազուր խոշոր դպրոց է բայց մեր դպրոցը աւելի ազուր էր... միշտ բեզի կը մտածեմ շատ զրէ: Ընկերու հիւղ Սիւվա»:

Այս նամակէն հաբ, Ամերիկան զարձեւող սկսաւ ողջիւնս միտքը շար – շարել:

— Ասի՞ր, պապա, նաու տոմակ տոբ՝ մեզի ալ, — սկսաւ զարձեւող հարց տալ տեւարար:

Չուշացաւ «Սիրելի բնիկերու հիւս» շարքին երկրորդ համարը: Մանկու – կան նայն անվարժ մանկերով, անհաս առար ու ծուռ սուգերով երկու լման էջ զարձեւող: Մատնաւ սը ճիւղ պէտք եղաւ զարձեւող, ծածկապէր, բեւեռապէր կարգաւ կրցողի գիտութիւն նսեւ՝ «Սիրելի բնիկերու հիւս» առկը շարուած միւս սուգերը կտրուցաւ համար: Այս նամակը օրերով մեր ձեռքը մնաց: Կար – դացինք, զարձեւող կարգացինք, անոր քանի մը տղերք մասնաւորաբար: Կարձէք ողջիւն չէր հասաւար ես կամ կ'ու պէր աւելի տպահով լլլալ Սիրվային բաժնեկերու: — Դպրոց կ'երթամ, դպրոցէն կու գամ — առօրեայի իր կենտրին մէկ պատկերը տալ հաբ, Սիրելի բնիկերու հիւս սա շատ գաժան հաստատու մ – ներք կը կատարէր: «Այստեղ հայերէն չկայ հայերէն խօսիս մէ վրաղ կը խնդան»: Եւ քիչ մը անգին: «Այստեղ ազուր չէ, ընկեր չես կրնար գտնել ամէնքն ալ ուրիշ տեսակ են: Մեր այնտեղը ինչքան սղաւոր էր: շատ շատ ունիլի տղուր էր»: Եւ, վերջապէս՝ «Այստեղ ուրիշ տեսակ է, այստեղ հեռու է շատ շատ հեռու է այստեղ դալ չ'ըլլար: Գուն մի գար սիրելի ընկերու – հիւս, ես կու գամ, ես մտրէն կու գամ: Մեծնամ մէ շուս մը հոն կու գամ»:

Սիրվային այս նամակը՝ Ամերիկայի մասին ողջիւնս մէջ ծնած այդ տեսակ մը հմայքը, անդիմադրելի կանչը եթէ երբեք բոլորովին չքանդէց, բայց կարձէք թէ տկարացուց, պզտորեց:

— Պապա, այդ սեղ հեռու է եղեր, շատ, շատ հեռու է եղեր, — սկսաւ բռնել եւ ինչ որ աւելի նկատելի էր, երկար ատեն, գրեթէ այլիւս երբեք մեզի համար այ ճեսախ տոմակէ տոնելու խնդիր չտեսցծեց:

Ամերիկայի համար եթէ առկա ին ճեսախ տոմակէ դնելու փափաքներ մնացած էին ողջիւնս մաս, անտեղ ալ մէկէն անկացան, շրջանի կապանդի ու թիւ Սիրվային դրկած վերջին նամակով: Հակայ ծաւալով փայլուն, պատգամն տանրիկեան կազանգի բարթ մը, սրու ն մէջ հակաշահուն պիւրերով «Ճեռնորհաւ սը Նար հարթ մը գրաւած կտր, ճէնկերու հիւղ Սիրվա» շատ յատակ – նսա ստորագրաւթեամբ, սրու ն ստիւյն կ'ընկերանար երկու լման էջ այդպէս մանկական, անկարգ գրութիւն դարձեալ: Նամակին գլուխը տեղուշտ բաղ – ման էր զարձեւող տնիստ սալիկի «Սիրելի բնիկերու հիւս», սրմէ հաբ, իրաւ է, մո – նու կը շատ անվարժ չկաւ սվաւ ձեւով, սակայն խոշոր մարդու մը նայնիսկ սիր – ար բոլորով կրցող հետեւեալ սուգերը:

«Կաղանդը եկաւ նորէն: Հիշ չեմ ուզեր այս տարի: Այդ իրիկունը հոն պիտի չըլլամ քանի որ ինչ բնեմ չեմ կրնար գալ: Այստեղ գիտնաս որ-
քան հեռու է: Շատ շատ հեռու է: Ինչ աղուոր էր մեր Կաղանդ Պապան: Անիկա իրաւէն էր: Երկինքէն կու գար լոյսով շինուած կառքին մէջ: Առաջ
կ'երթար ծովին այնտեղը բոլոր նաւերուն սուրիչները կը զարմէր եկայ
ըսելով: Անգամներ ալ կ'ուշանար շատ կը սպասէինք ինծի եւ քեզի որքան
շատ նուէր կու տար: Որքան ազուոր էր: Երկինքէն էր մեր Կաղանդ Պա-
պան»:

Այդ պէս արտու մ շէշտերով հետու մնացած, ճշատ-շատ հետու մնա-
ցած այդ իրաւ Կաղանդ Պապային գովասանքը ընկէ, անոր բազում ուրիշ բա-
րեմասնութիւնները չիչել յետոյ, Սիւլիան յանկարծ կ'ընկղմէր գինջ շրջապա-
տող տխուր իրականութեան դառնութեանը մէջ: Մանուկի իր մատները ասկէ
աւելի յստակ չէին կրնար թարգմանել ու յետոյ թուղթին յանձնել Հօգրադոյն,
նոյնիսկ մարդոց լեզուները չգիշայել կրցող այսքան Հօգր միշտ: Կ'ըսէր.

«Այստեղ չկայ մեր Կաղանդ Պապան»:

Եւ չեա գիտէր ինչ միտքէ տարուած.

«Անիկա աստեղ չի գար: Փողոցներուն Կաղանդ Պապան կայ այստեղ: Այստեղիներ շու
կայէն կու գայ խանութները կը ծախէ, գանգակ կը գարնէ»:

Եւ վերջապէս՝

«Այստեղուն Կաղանդ Պապան սուտակամ է, սուտակամ»:

Միջնարար...: Կարճ դադարէ մը, կեանքի մը գիրքին պզտիկ մէկ լջը
հագիւ գրաւող ժամանակամիջոցէ մը ետք՝ Հիմա բեմը կը բացուի, նոյն, միեւ-
նոյն դերակատարներով, սակայն այս անգամ... Նիւ Եորքի «Ըմփայր Սթիւթ
Պրիտենկսի» թատեր Սթուէրսի եւ «Ռաքֆելըր Սենթրալ» տեսարաններուն
վրայ:

Ամերիկեան այս բեմին վրայ գործողութեան ձեռնարկէլ տալ սա-
կայն, հաւանարար անհրաժեշտ է վերաբաղ մը, վերջիչեցու մը կատարել կի-
րանանի վերջին տեսարաններուն վերջին արարէն:

Եւ ուրեմն, Սիւլիանի այդ Նոր Տարուան նամակը գայթակղեցուցած,
ընդվզեցուցած էր կարծէք պզտիկ աղջիկս: Ձեր հասկցած, թէ ինչպէս փողոց-
ները Կաղանդ Պապան կը լեցուի: Ձեր բմբուած Կաղանդ Պապան ինչո՞ւ, ինչ-
պէ՞ս զանգակ կը զարնէ: (Իրեն համար աղբահաւաքը զանգակ կը զարնէր,
տուններուն զիպիլները տանելու համար): Եւ մա՞նաւանդ՝ Կաղանդ Պապան,
ի՞նչ Կաղանդ Պապան ինչպէ՞ս սուտ կ'ըլլայ, «սուտակուն» կ'ըլլայ:

— Կ'ըլլա՞յ, պապա, Կաղանդ Պապան քու տ կ'ըլլա՞յ, կրնա՞յ սուտա-
կան ըլլալ,— Հարց տուած էր շարունակ տեսակ մը վախով...

Եւ, վերջապէս, Ամերիկայէն կարծէք այլեւս բոլորովին հիասթափ.

— Ա՛յ չերթանք պապա, այլեւս չերթանք,— բնած, կրկնած էր:

* *

Բայց անաւասիկ, Հիմա արդէն հոս էինք, ամերիկեան այս բեմին վրայ:
«Ձերթանք, չերթանք, այլեւս չերթանք» այդ պէս անվերջ կրկնելով՝ մենք մեզ
զտած էինք Ատլանտեանի հակապական ջուրերուն այս վերջին ծայրը, առանց
նոյնիսկ նստապէս «նախ տոմսակ» գնած ըլլալու: Ձգած էինք Լիբանանը,
երբ տակաւին «գեղածիծաղ» էր, երբ տակաւին մոնկոլական հրէշային իր գի-
մագիծը փայլուն, շողողուն ու հմայիչ գիմակներու տակ պահած-նստած էր:
Սիւլիանից նման մեր ալ «բախտը այդպէս ու գած էր» եւ, տուն ու տեղ ու

դարձող ձգած՝ հետոցած էինք կտրծէք մեր կամքէն տնկութի, հոկայ սխալ մը, աննկերելի մեղք մը պործողի հողւմիճակով:

Դեկտեմբերի սկիզբներն էին: Առտու մըն ալ արթնցանք, տեսանք աշխարհը ամբողջ մաքրամաքուր, զգլխիչ, ճերմակ հազուած էր: Ըսին՝ այս տարի ձիւնը կանուխէն ինքզինք յայտնած էր, եւ թէ՛ այսպէսով ձնովակ Քրիսմաս մը ու նենայտ յայտեր շատ կան: Դուրս վազեցինք զրեթէ ամբողջ բնտանեօք: Անիւն նետեցինք իրարու, վազեցինք, վազվզեցինք ճերմակ տարածութեան մէջ, իրարու հասակ յափեցինք: Պէտք չէր մէջ միւնը գրաւել, հմայել պատկերի պէս բան մըն էր, Սաննիի թարմը ու հուսար կատարնելին տեսարար մեզի ժպտացող եւ որ երեխաներուն ափ մը այգւէս ձիւն կարենալ շօշափել տալու համար կը ստիպուէինք միշտ, ձմրան ցուրտին, լեռները ելլել, Տաշք-էլ-Պաշտարի բարձունքները մազլցիլ, շատ յաճախ ալ վերադառնալ զլիւիկոր, առանց ձիւնի փաթիլի մը իսկ հանդիպած ըլլալու...

Նիւ Եորքի հսկայ թաղամասերէն, հելլենական շէն դիտեր ինչ հրապոյրանքը յիշեցնող «Աթորթաշի մէջ յոյս աշխարհ եկած մեր հայ բարեկամուհին (ժողցանք ըսելու, թէ մեր այստեղ հասնելէն հազիւ երկու շաբաթ ետք, երբ տասարդ հայ տիկնոջ մը ծանօթանալու եւ անմիջապէս իրեն հետ բարեկամանալու հազուադէպ տեսարար ունեցած էինք), ուրեմն, այս աղինը բարեկամուհին, Բարի Սամարացիի զե՛ր մը ինքզինքին տուած ըլլալու, իր հայ ծագումին տո՛ւրք մը հատուցանելու, թէ ամերիկեան անգլերէնին մշակուին նմանող հնչումներուն պատճառով ծնած, ծնած ու քայքայուած իր հայերէնին քիչ մը ուղղութիւն տալու դիտարարութեամբ, ստանձնած էր, ինքնամատոյց կամ ճեղքութեամբ յանձն առած էր Նիւ Եորքը մեզի եւ մեզ Նիւ Եորքին ծանօթացնելու նուրբ եւ փափուկ եւ ոչ-դիւրին պաշտօնը: Բարձրացած էինք արդէն իսկ «Ուորլա Թրէյա Սենթրը» երկուորեակին, ապակիի եւ պեթոնի այդ քառանկիւն տղեղութեան, մարդու ձեռքով կառուցուած բարձրագոյն բուրգերուն այս իրրեւ թէ ամէնէն բարձրին զոյգ գագաթները: Ելած էինք արդէն իսկ «Ըմփայր Սթրիթ Պրիտինկ» ծայրագոյն մասը, այդ բարձունքէն տեսնելու համար դիտարժան Նիւ Եորքի համաաւարած զեղեցկութիւնը: Կամուրջները, թանկարանները, կարծէք յոյսով կերտուած քնարներու պէս գէպի երկինք սլացող հսկայական կամուրջներուն տակ խեղճուկ, թշուառ մնացած, երբեմնի հզօր, բայց այլիւս առասպելի կարգ ահագած կոյր փարոսները...: Տեսած էինք այդ ամէնը, ամէնը եւ զմեզ հիացած, սքանչացած ցոյց տուած...: Ըրած էինք, ցոյց տուած այնպէս, որ կարծէք երբեք, իր աւերակ վիճակին մէջ իսկ հսկայ, վեհաշուք, մարդու ձեռքով կառուցուած հին թէ նորագոյն բոլոր հրաշալիքներով թիւններուն իր փառապանծ սիւներուն ու քանդակներուն բարձունքէն նայող... Պաշտպալի մը անմիջական մօտիկէն եկող չէինք մենք: Ըրած էինք, ցոյց տուած այնպէս, որ կարծէք երբեք, բնութեան ամբողջ, համընդհանուր պեղեցկութիւնը, ծով ու երկինք ու լեռներ, մէկ ափի մէջ հրամցուող պարզ եւ մը պէս իր ծոցին մէջ խտացուած, ամփոփած լիբանան կոյտեղ ցամաքէ մը եկող չէինք մենք եւ որ ամէն օր, ամէն իրիկուն ահա, ահարկու մայրաճառ տներուն հրկիզումին ականատես եղած չէինք...: Հրճուեցանք շոր ցիցի պէս մայրի մը ափին տնկուած «Ըմփայր Սթրիթ Պրիտինկ»-ով այնպէս ցոյց տալով, որ կարծէք երբեք երկնաւառ ու այլուպէս առիւնքնող «Թուր-էլ-Ֆելի» գագաթի չէինք բարձրացած եւ որ այնտեղէն, բազում ու բիւր անգամ... Լոյսի Քուգտին հրուշակէր չէինք բերուխնած:

Դեկտեմբերի սկիզբներն էին եւ արդէն... յա՛յտ-յա-յա... յա՛յա-յա-յա... օր ու իրիկուն, ժայնասփիւռէն եւ պատկերասփիւռէն, ամէն, ամէն ուղղութենէ, փողոցները, խանութները փայլուն, փայլալուստ վարդարուած են արդէն իսկ Եւրոպական Ծնունդը զիմա որելու համար: Եւ այլիւս չգայնու-

թիւն, պզուտանք պատճառով ամերիկեան այդ Միտոնդի երգերը, յաւիտեանս կրկնուի այդ յա՛յրա՛յա՛յա... յա՛յրա՛յա՛յա... կարծէք ասանց այդ յայրա՛յա՛յա... թա՛ն Միտոնդ-Չատիկ, Քրիստոս-Սիսուս կտրելի չէ որ յայտ աշխարհ գտնի:

— Պապա,— բոտս իրիկուի մը ազնիւկս, պարոցէն պարծին,— Կազանդ Պապուն այստեղ չուտ կու գայ եղեր, պարոցը ամբողջ կ'երդեն, այստեղի Կապանդ Պապան երգելով է, երգելով...

Այդ երգեցիկ օրերէն մէկուն, ամերիկեան մեր հայ բարեկամու հին յայտնեց մեզի, որ աստեղու թեան կարգ անցած սովորաւ թեան համաձայն, այս տարի եւս, Վեաքֆլէյրը Անթրոփի հրապարակին վրայ, Կազանդի հսկայ ծառ մը բերած-տնկած են զարմեայ, նախկին իր նմաններու նա՛մէնէն բարձր, պոր պիտի դարձարեն ու յոսաւ սրեն վազը, Հինգշաբթի իրիկուի: Եկ'արձէ տեսնել պայն,— բոտս մեր բարեկամու հին,— ուրիշ տեղերէ հազարներով մարդիկ հոս կու գան այդ ծառին համար, և յանձնարարեց, որ պատրաստ բլտեք՝ Շաբթի իրիկուի երթալու համար:

Գացիք Շաբթի իրիկուի: Ամբայդ ազնիւ բարեկամու հին տարու դիտու ազնիւ, աշխարհի Եթը հրաշալիքներէն մէկը կարծէք ցոյց տուալի հաւատալով: Հսկայական, անծայրածիր ու, մա՛նաւ անդ՝ անկարգ ամբողջ մը, փողոցներու ամբողջ յայնքին, երկայնքին: Մանկամարդ ու պատանի ազնիւներ ու աղաք, ձեռքերնին խմիչքի մէկական լիչ, կէս-հարբած ու կէս-արթն ու գիճաւկով և ազմուկով, հրմշտուկով փողոցները կ'ողողին: Ռատառի պարծիք ու նեղացի պէտք էր, այսօր իրարմոտ մի մէջ երկու շիտակ քայլ ասնելու համար: Եւ վերջապէս, Վեաքֆլէյրը Անթրոփի պոփիկ այդ հրապարակը և աւտոր գլխուի... ծառը կար, տեսաւ: Մտոր հոն էր, անեղիքի բարձրութեամբ և յայտնով աղուած: Երկինքի կարծէք բոլոր աստղերը շատ գիտէին ի՛նչ հրաշքով, անկարելի, աներական իրենց փայլով ու գոյնով եկած-տեղադրուած են Վեաքֆլէյրը Անթրոփի այդ ծառին վրայ: Եւ իր բոլորտեք՝ ուրախութիւն, հանգիստ, հրմշտեք, երգչախումբեր, երգեցողութիւն... յա՛յրա՛յա՛յա՛յա... լալա՛:

Մտոր կար, հոն էր, երկինքէն կարծէք այստեղ իջած, յայտով, պոյնով, հմայքով: Ամէն ինչ կար, ամէն ինչ լսու էր, ի բաց տեսալ... ի բաց տեսալ...

Տեսալ՝ պահ մը ազնիւան աչքերը պահուած-կեցած են մէկ ու միտկ ու դդու թեամբ, մէկ կէտի վրայ: Ես ալ աչքերս նայն ու դդու թեան գարձուցի, չկատկու համար նախ, որ մեղմէ թիչ անդին, փողոցին միւս անկիւնը, յոյսերու մէջ լողացող ամերիկեան այդ հսկայաւոր փոխառաւոր նմանքէն մէկը կայ և յետոյ, որ... ի՛նչ տեսնեմ ազնիւ... երկու Կազանդ Պապա, աստապելուտն կարծիք իրենց գլխարկով ու հագուստով, ճերմակ, երկար մօրու քով, իրական Կազանդ Պապա: Իայց ձեռքերնին մէկական... պանակ, անպաղտը կը գտնուէր հարեն, խանութին առջև: Ճիշդ այնպէս՝ ինչպէս գրած էր Արիփան:

Ազնիւ մտցած էր ծառը, անոր շուրջ տիրող իրարանցումը և իր ամբողջ հոյ թեամբ տարուած կը թուէր փողոցին միւս անկիւնի անցող գարձուով: Ազնիւ ամբողջ ու չքր այդ փողոցի ունկիւնի խանութին առջև պանակ կարծող Կազանդ Պապաներու նէր: Անանցմէ մէկը, գլխուկ, կարճուկ մէկը, տեսնեմք մէկ այդ դրու պանակը մէկը ու գնաց նստեցաւ փառաւորաւոր գրան անկիւնը, աթոռակի պէս բանի մը վրայ: Եւ յետոյ... յետոյ... մօրու քր հանեց, գլխարկը հանեց, թշուտ, ճաղատ պոյն մը մէջտեղ բերելով՝ տեսաւ սանտուիլի մը ու ահ: Իսկ ազնիւ, որ յաճախուտ ամբի նման այդ ամբողջը կը գիտէր, ահարեկուած ձայնով մը՝

— Պապա, պապա, տե՛ս,— բոտս,— ոտ տականները... ոտ տականները...

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.®



ԱՇԽԱՏ ԱՌԻՐԵԱՆ

1929ի շրջանում արտոնեղծ: Բա՛ն ա՛նու՛նով՝ Նա-
հապետ Չուպրեան: Մե՛սած է 1921ին, Ազատաց Մա-
տեն (Քուրթիս): Նախակրթու՛թիւ նըր հըր սաւանայ
Պէլլու: Թի՛ մէջ, իսկ երկրորդ տկտն ուսաս մը՝ շոյ ճե-
մարանի գրասեղաններու ն գրայ:

Նըթան մը հըր պրոպի ուսուցչու՛ թեւամը հ. իմբուպ-
րական աշխատանքներով, իսկ աւելի աւշ՝ տաե-
տուրով: Մնակաե թուականներու ն մաս հըր հազմէ
եկկրուցի իմբուպրու թեւան:

Իպրուցական գրասեղաններէն ոկտեայ՝ ն. Թա-
պուի եւ աւագանի ա՛նու՛նով կ'աշխատակցի
սփի ոքա՛նայ շուրք մը թերթերու, սառարպելով
բանաստեղծու՛թիւ ններ, արձակ էջեր եւ քննուպա-
տական ու ճրագարակագրական յօդուաններ:

1939ին, Աշտա՛նուրեան հըր ճրատարակէ բանաս-
տեղծու թիւ ններու թը աուտին շուտորք՝ սկանայ
քուցերս:

Ներկայիս, Աշտա՛նուրեան կ'ապրի Պէլլու թի:

Ա. ԱՌԻՐԵԱՆ

ԼՈՒՍԱՂԲԻՒՐ

Նայելով գեմֆին, չէիք յագենար –
իմչ թախծատոչոր... աղաչող աչքեր-
կորուստին իր մեծ, ինչպէս դիմանար,
Ո՞ր էին հիմա, լսած էր միայն՝
Լերան Արարատ՝ հովիւ է տղան...:

Առտու, իրիկուն կարօտի ճամբուն
Ղօղանցող զանգա՛կ հաւատացեալի,
Բախտէն հալածուած, լքած հող ու քոյն,
Անոնց բայց կանչին սպասող «գերի»:
Լուսայեղց նաեւ զրի՛չ Մաշտոցի
Եւ արեւի ելֆ՝ բեմերու վրայ,
Ամմահութեան հետ գրուցող ոգի –
Նոր ուժին համար, որ Զարեանց դառնայ:

Հասակ քունածին մենք կը հաւատանք,
Անոր եւ շուքին, երբ միտք են, կորով,
Յոյսին ալ, եթէ՝ թեւերն են հաւատք:

digitised by A.R.A.R.@

Յեղափոխութեան մինչ այդ լուռ սալին
 Երբ վնիւն իջաւ կարմիր... կռաւով՝
 Ղեկավար, գիւնուոր մոռցան եար ու կին,
 Արդար վրէժի արիւնէն գինով:
 Փայլակ, որոտում, յառա՛ջ անսասան:
 Ուր որ էր հասաւ՝ ահա, փետային
 հորհուրդով առլի՝ իմացեալ մահուան,
 Անվրէպ գարկի մոսիցն իր ուսին –
 Կեանքն ինչո՞ւ, ինչի՛, երբ չկար մեռնիլ –
 Ան այդ երազին ուխտեալն էր արդէն,
 Նախ պէտք էր մեռնիլ ու յետոյ ապրիլ:

Դարերն իրարու թէւ յար–մամ
 Արիւնով, ջիւղով ու երակներով,
 Շատեր բայց կ'ուզեն, որ մեր պատմութեան
 Նորին ու հինին մօտենանք... միշտով:
 Ահա վարդանին, դասին ալ կղեր,
 Կամաւոր մահուան մայնպէս ծիրանին:
 Յարդ կը կարծէին հինն է գերիւկեր
 Ու մորը՝ առուակ, թափուող Տզմուտին –
 Թուրքն ինչպէ՞ս սակայն. մայնել Յազկերտին
 Իւրաստեղծ ու... բուք իբ հաթաղանով,
 Նիշով չեն չափեր հայուն փետային...

Հայ էր այն դարէն, երբ մարդը ինքզինք
 Աննկուն կամֆով կու տար... նօթութիւն,
 Մոմի լոյսի տակ թափելով բրտինք,
 Ապրելով յանուն Բանին անվախեան:
 Զինք երբ մենք նանչցանք, արցունք կար աչքին
 Գաղթաշխարհ բերած հողին արիւնով:
 Ան սակայն շուտով շարեց ադամանդ,
 «Յոյս»ով իր կազմած տողերուն վրայ,
 Իրարու որոնք երբ գան քով քովի՝
 Նայէ՛, հասած են Սարդարապատի:

Ճեմելն իրեն հետ պեղում էր հանքի,
 Երբ ամէն առտու երազներ շալկած,
 Մագաղաթներէն կը հանէր ոսկի.
 Արփաչ մարգարէ, գրողին դիմաց,
 Բոպէի մը մէջ գայն տանող փառքի:
 Ահա՛, բնթերցող, մարդ մը, որ ճամբուն
 Նայեցաւ անվերջ, բայց չունեցաւ... տուն:



ՇԱՔԷ ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ — ՄԻՆԱՍԵԱՆ

1943ի շրջանաւարտներէն: Մնած է Պէյրութ: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է

Պէյրութի Հայ Ճեմարանին մէջ, գործարարելէ ետք, կը յաճախէ Պէյրութի Ծրարական Լիւնը, ապա՝ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը, ուրկէ եւ կը վկայուի Պատկաւ որ Արտիստ (B.A.) տիպագրով: Համալսարանական իր ուսումը կը շարունակէ Փրոմոնայի մէջ եւ Փարիզի Սորբոնէն նախ կը ստանայ գրականութեան իր վստահութեամբ, ապա՝ տոհմը-բուն՝ 1953ին:

1950ական թուականներու եւ, Եաթ Տէր Մելքոնեան-Սինասեան իրրէ խմբագիր լստորագրութեամբ ժամանակը թիւնը կը բերէ Պէյրութի Վիկտորին, Փարիզի Վիկտորին մանկապատանեկան ամսագրին եւ Վիկտորին սրտիկներին, ստորագրելով գրական եւ հասարակական նիւթեր շաշափող բազմաթիւ լստագրութեան, իսկ 1969էն ի վեր ուն նշանաւորութեամբ լստագրութեան եւ ուսումնասիրութեան նիւթը կը ստորագրէ Պատկաւոր Փրոմոնայի ժամանակէն մէջ:

1969էն սկսեալ Եաթ Տէր Մելքոնեան-Սինասեան կը գրաստանդէ Մանթրէլայի համալսարանին մէջ՝ իրրէ գրականութեան դաստիարակութեամբ (Contes et légendes arméniens (1964), L'Épopée populaire arménienne «David de Sassoun» (1972), Politiques littéraires en U.R.S.S. (1978), «Contes arméniens» (1987), ինչպէս նաեւ «Հայերէնի զիրք» գրաստագրութեան Գ., Դ. եւ Ե. հատորները (1978, 1979, եւ 1983):

Ներկայիս, Եաթ Տէր Մելքոնեան-Սինասեան կ'ապրէ Փանատու:

Շ. ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ — ՄԻՆԱՍԵԱՆ

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻԴՑԱԶՆԱՎԵՊԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունուած կարծիք է, որ ազգային-ժողովրդական դիւցազնավէպերու առաջին գրաստագրութեան կը զուգահեռ ժողովրդական ժանկութեան շրջանին կամ ազգային գիտակցութեան զարթոյնման, քաղաքակրթութեան մը ծնունդի տարիներուն, կամ հակամարտ երկու քաղաքակրթութիւններու, կրօններու, ազգերու միջեւ հակամարտական պայքարի պահներուն:

Դժուար է ճշգրտօրէն սահմանել, թէ ինչպէ՞ս, հեռաւոր անցեալին, ժողովրդային երեսակայութիւնը կը ստեղծէր դիւցարանութիւններն ու դիւցազնավէպերը, անոնց մէջ անխափր միախառնելով կարելին ու անկարելին, իրական եւ մտացածինը, մարդկային զգացումներով օժտուած գերմարդկային կեանքներն ու անիրական կացութիւնները, բայց եւ այնպէս՝ հաւատալով այս բոլորին:

digitised by A.R.A.R.®

կասկածէ վեր է սակայն, որ Հնագոյն դիւցազնավէպերու մէջ առկայ են առնուազն երկու գլխաւոր տարրեր. մէկը՝ մարդոց բնագոյնական-հոգեկան-զգացական էութենէն բխած, միւսը՝ մարդկային հաւաքականութիւն-ներու պատմական անցեալին հետ շփոխութեամբ Առաջինին մաս կը կապուին, օրինակ, դիցականութեամբ պահանջը, կրօնական ու հերոսական առասպելներու կառչելու անհրաժեշտութիւնը. երկրորդը՝ իրական եթէ բնական հոգեւորութիւն, պարզապէս ու հրաշալիքին հետզհետէ ազուցին մարդկային առօրեան եւ ցեղային-ազգային հանգանակները: Երկրորդին առընդոյց հետապնդողութիւնները կարելի է հիմնել համեմատաբար աւելի շօշափելի տուեալներու վրայ, ա՛յն իմաստով, որ պատմութեան մէջ իսկապէս գոյութիւն ունեցած անձեր են եղած սուրբերական, հնդկական, յունական, հայկական, պարսկական, ֆրանսական եւ այլ ազգային դիւցազնավէպերու հերոսներու նախատիպերը: Այլ հարց, թէ այս վերջիններուն նախնական սիրողորձութիւնը, շնորհիւ ժողովրդային երեւակայութեան, հետզհետէ բազմապատկուած ճիւղաւորումներով փոխանցուած է սերունդէ սերունդ: Ընդլայնման այս հոլովոյթին ժառ կը կազմէ նաեւ, ի հարկէ, այլոց կողմէ կատարուած սիրողորձութիւններու ալ համախմբումը՝ ժողովուրդի նախասիրած մէկ հերոսի անուն շուրջ: Այս կրեւոյթը մասնաւորաբար նկատելի է Սասնայ ծռերու Ա., Գ. եւ Դ. հիւղերուն հերոսներուն կապակցաբար («Սանասար եւ Բաղդասար», «Սասունցի Դաւիթ», «Փոքր Մհեր»):

Հնագոյն դիւցազնավէպերու պարագային, պատմա-ընկերային ու բոյն աղբիւրներու չգոյութեան հետեւանքով, հետաւոր անցեալէն փոխանցուած միակ օգտագործելի աղբիւր յաճախ կը մնայ նոյնինքն դիցազնավէպը, պատմական թէ մարդարանական, ընկերային թէ բարոյական, գրական թէ գեղագիտական եւ նման այլ տեսանկիւններէ դիտուած: Ասոր լուսաւոյն օրինակը կը հանդիսանայ Եփրատի վտակներ, որմէ քաղուած են թագաւորութիւններու. հիման վրայ է, որ մեզի ժամանակակից հնախոյններ կարողացան դառնել Տրոյական քաղաքին վայրը եւ հոն ձեռնարկուած պեղումներու շնորհիւ հաստատել դիւցազնավէպին մէջ յիշուած կարգ մը տեղեկութիւններու վստեղականութիւնը:

Դիւցազնավէպերու ուղեւորութեան մէջ պատմական տեսարանութեան կիրարկումը ցոյց կու տայ, թէ Հնագոյն ժամանակներէն սկսեալ, դիւցազնակերպական աստիճանաց կազմաւորման գլխաւոր թիւերը կը հանդիսանայ ցեղախումբի կամ ազգային հպարտութեան զգացումը, իբրեւ հետեւանք՝ թշնամի ցեղախումբին կամ ազգին հանդէպ տածուած ատելութեան: Բարոյական, կրօնական, փիլիսոփայական, հոգեկան, կենցաղային, ընկերային, տնտեսական եւ նման այլ մղիւ ազդակներ, ըստ պարագային, կ'ամրապնդեն ազգային զգացումը եւ իւրապատու կ'զու նաւորումով կ'օժտեն տուեալ ազգին դիւցազնակերպական աւանդութիւնը:

Այսպէս, հնդկական Ռամայանա դիւցազնավէպին միջուկն է՝ արիական ցեղի եւ պրահմայական կրօնի յաղթանակը՝ բնիկ ժողովուրդին վրայ: Իրերայալորդ պատմութիւնները կը մանրամասնեն դրուագները՝ յաղթանակին նախորդող երկարատեւ պայքարին, մ'զուած՝ Վիշնուի եօթներորդ մարմնացումը հանդիսացող արքայազուն Ռամայի կողմէ, ընդդէմ՝ Դեւերու թագաւոր Ռավանայի, որ կ'իշխէ Սէյլան կղզիին վրայ: Ռամայի յաղթանակով կ'իրականանայ Հնդկաստանի եւ Սէյլանի քաղաքական միաւորումը, ի փոփոխութեան ցեղին եւ պրահմայականութեան: Յեղաշրջան-կրօնական-քաղաքական այս միջոցին շուրջ է, որ կը դասաւորուին մնացեալ թեմաները, ինչ ալ ըլլայ անոնց բնոյթը, — աստուածային հզօրութեան մարմնացումը եղող վեհապետին դերակրութիւնը՝ քաղաքատմաբան ժողովուրդին. կեանքի բոլոր



Ն. Ժ. Հեմարմի առաջին շենքը
digitised by A.R.A.R.®

երեւոյթներուն մէջ աստուածային կամքի առկայութիւնը, այսինքն՝ կրօնքի գերակայութիւնը, պրահմայական բարոյախօսութեան գերակշռութիւնը՝ անհատական երջանկութեան վրայ, ի հարկին՝ ի գին ինքնագոհութեան, որդիական յարգանքը, ամուսնական հաստատութիւնը, պատուախնդրութիւնը, եղբայրական սէրը, մարդկային եւ կենդանական աշխարհներու ներդաշնակութիւնը եւ անոնց միջեւ գործակցութիւնը, եւ այլն: Այս բոլորը մաս կը կազմեն Բարիի եւ Չարի միջեւ մղուած յաւիտենական պայքարին, այն յստակ հասկացողութեամբ, որ արեական ցեղի զաւակ եւ պրահմայականութեան պաշտպան Ռաման մարմնացումն է Բարիին, իսկ հակա-արեական եւ հակա-պրահմայական Ռափանան մարմնացումն է Չարին:

Հնդկական երկրորդ դիւցազնավէպը կը կոչուի Մահապիարաթա, որ թարգմանի՝ «Պհարաթայի զարմին պայքարներուն պատմութիւնը»: Իրեն կեդրոնական նիւթ ունենալով՝ Հնդկաստանի նուաճումէն ետք, երկու գեր-դաստաններու պայքարը, իշխանութեան ի խնդիր: Ըստ Հնդկական աւանդութեան, դէպքերը տեղի ունեցած են Ք.Ա. 3100ական թուականներուն: Ընդհանրապէս բնդունուած է, սակայն, որ փիլիսոփայական, բարոյախօսական եւ նմանօրինակ հանդամանք ունեցող բազմաթիւ ենթաբաժանումներ, ինչպէս օրինակ՝ Պիտակապատ փիքան, գլխաւոր պատմութեան կցուած են յարաբերաբար աւելի ուշ:

Յոյներու պարագային, Իլիականի բազմաթիւ տարբեր կազմող ասանդավէպերը կ'առնչուին դարաւոր այն պայքարներուն, զորս Հելլենական ցեղերը մղեցին Արեւմտեան Փոքր Ասիոյ ժողովուրդներուն դէմ: Դիւցազնավէպին մէջ, Տրոյական պատերազմին իրեն գորդապատճառ կը տրուի Հելէնի առեւանգումը Փարիսի կողմէ: Բայց բաւ է անդրադառնալ, թէ ինչպէս, Հիւսիսէն դաղթած պատերազմի ժողովուրդը, յունական հողէն քիչ կրետական իշխանութիւնը, ապա զրաւեց Կրետէն եւ քարուքանդ բրաւ անոր մայրաքաղաքը՝ Մինոս: Ասկէ մեկնելով, կարելի կը դառնայ ենթադրել, թէ յոյները պարզապէս պատրուակի կը սպասէին՝ Եգէականի դիմացի ափին վրայ ծաղկող, քաղաքակրթութեամբ՝ կրետականին աւելի մերձ եւ ճառել տրական մրցակից՝ նկատուած Տրոյական ճգմելու համար:

Յամենայնդէպս, Հնախուդական պեղումները հաստատեցին, թէ Իլիականը, որ գրի առնուած է հոն նկարագրուած դէպքերէն առնուազն չորս դար յետոյ, կը ցոյցնէ Պիլինձէ դարաշրջանի յունական քաղաքակրթութեան գրեթէ հարազատ պատկերը: Հետեւաբար, անիկա կը հանդիսանայ արեւմտեան քաղաքակրթութեան ամենահին «պատմագրական» երկը: Մինչ այդ, սակայն, Հզօրութեան եւ Հերոսականութեան բոլոր երազները, զորս ժողովրդային երեւակայութիւնը համախմբած է Տրոյական պատերազմի գլխաւոր Հերոսներուն շուրջ, ինչպէս նաեւ Ողիմպոսի աստուածներու միջամտութիւնները դէպքերու հոլովոյթին մէջ, շատ հաւանաբար արդիւնք են Հետադայ սերունդներու կողմէ ներմուծուած յաւելումներու, որոնք եւ վերադադրուած են Հոմերոսի կողմէ:

Պարսկական Դահ Նամէն կը սերի Իրանի հողամշակ ժողովուրդներու մղած պայքարէն, ընդդէմ՝ Թուրանի վաշկատու ցեղախումբերուն: Գրութեան այն դրուագներէն սկսեալ, ուր կը պատմուի կայսրութեան բաժանումը Ֆերիդունի երեք որդիներուն միջեւ, ասոնց ներքին տարակարծութիւնները եւ փոխադարձ քայքայումը, Հերոսապատումէն ներս կը սկսի շէշտաւորուիլ ազգայնականութեան թեման, Իրան-Թուրան մնայուն պայքարին յատկացւած դրուագներու բազմապատկումով: Զրադաշտական կրօնին մէջ գոյութիւն ունեցող Բարիի եւ Չարի պայքարը՝ Ահուրամազդայի (Որմիզդ) եւ Ան-

բո—Մենեուի (Ահրիման) միջև, կը միախառնուի Երան—Քուրան հակամարտութեան հետ: Այսպէս, հարազատօրէն կը ներդաշնակուին աղբյուրն եւ կրօնական լինելութեան սկզբունքներն ու հրամայականները:

Մեր Սառնայ ծոցերու պատմական—կրօնական—ազգային—գաղափարական աղբյուրներու պրպտութիւն մեզ կը հասցնէ բացառիկ կերպով յատկանք—շական զուգորդումներու:

Կուսկածէ վեր է, որ դիւցազնավէպին հիմքը կը կազմէ Գ. ճիւղը, այսինքն՝ Սասունցի Դաւիթի բաժինը. իսկ ասոր ալ միջուկը կը հանդիսանայ Դաւիթի մենամարտը Մարայ Մելիքի դէմ ու վերջնական յաղթանակը:

Պատմական սկզբնական մեկնակէտին շուրջ տարակարծութիւն չկայ: 851 թուականին, երբ Հայստանը կը գտնուէր արաբական տիրապետութեան տակ, Աբու Սէիթ որդի Եւսուֆ Ոստիկանը կը յարձակի Մշոյ դաշտի հայու—թեան վրայ, ջարդի ու թալանի կ'ենթարկէ ամբողջ շրջանը եւ գերի կը բռնէ Նախարար Բազարատ Բազրատունին: Ասոր երկու որդիները, Աշոտ եւ Դաւիթ, կը փախչին ու կ'ապաստանին Սասնոյ լեռնականներուն մօտ: Մինչ Եւսուֆ կը սպասէր ձիւնային, որպէսզի ընկճէ Նաեւ լեռնային այս շրջանը, սասունցիներն են, որ կը յարձակին Եւսուֆի բանակատեղիին վրայ՝ խուժանքի Յովնանի տառնորդութեամբ: Փախուստի կը մատնեն արաբական բանակը, կը հետապնդեն եկեղեցիի մը մէջ ապաստանած Եւսուֆը եւ, դուրս քաշելով՝ կը սպաննեն զայն:

Բայց երբ, դիւցազնավէպի Գ. ճիւղի երկայնքին, քննենք Դաւիթի կերպարը, իր մանկութենէն մինչեւ Մարայ Մելիքի վրայ տարած յաղթանակը՝ իր մասին տրուած մանրամասնութիւններով, նմանութեան բաղձաթիւ եղբիւր կը գտնենք Հայոց Պատմութեան այլազան ժամանակներու մէջ այլ անձնաւորութեանց վերաբերող դէպքերու հետ:

Սրինակ, Իսմիլ Ուսթունի մօտ Դաւիթի անցուցած մանկութեան տարիները եւ Արշակ Բ-ի որդի Պապի Նախ՝ անպաշտօն, ապա՝ պաշտօնական գերութիւնը բիւզանդական արքունիքի մէջ:

Դաւիթի յաղթանակը ոչ միայն կը համապատասխանէ Թ. դարու Յովնան խուժանքի եւ սասունցիներու սիրազորութեան, այլեւ իր մէջ խորհրդող անշարար կը պարփակէ նախորդ դարերու հայկական յաղթանակները եւս, անհամեմատ աւելի զօրաւոր թշնամիներու դէմ: Ինչպէս, օրինակ, Մուշեղ Մամիկոնեանի յաղթանակը, Դ. դարուն, Շապուհ Բ-ի դէմ. Թէոդորոս Ռշտունիի բնագործութիւնը, է. դարուն, Էմիր Մուսիկային, եւ որուն շնորհիւ կ'ապահովուէր Հայաստանի ինքնավարութիւնը:

Չանց կ'առնեմ նմանօրինակ զուգորդումներու շարքը, զոր մանրամասնօրէն ներկայացուցած եմ L'épopée populaire arménienne «David de Sassoun» աշխատութեան մէջ (*): Աւելցնեմ միայն, որ Սասունցի Դաւիթ անուան ընտրութեամբ, կ'իւրացուի Նաեւ՝ Դաւիթ—Գողթաթ պաշտօնի ոգին ու խորհրդանիշը: Արդ, խորհրդանիշը միշտ աւելի համապարփակ բնոյթ ունի, քան ամենափայտուն առանձնակի սիրազորութիւնը:

Բազմայարկ զուգորդումներու երեւոյթը առկայ է մեր դիւցազնավէպին բոլոր ճիւղերուն մէջ, առաւել կ'ամ նուազ ուժգնութեամբ ու սրշուկիւ—թեամբ:

(*) Les presses de l'université du Québec. Montréal, 1972, 220 p.
digitised by A.R.A.R.@

Ա. ճիւղին մէջ, օրինակ, Սանտսարի ու Բաղդասարի հրաշագործ ծնունդը կը զուգորդուի Մարիամ Աստուածածինի անարատ յղութեան հետ: Երկուորեակ եղբայրներու պատմութիւնը կը կապուի Ա. Գրքի մէջ յիշատակուած Աղբաթիւքի եւ Սարասարի հետ, որոնք սպաննելէ հաջորդեց հայրը, կ'ապաստանին Հայաստան: Ու նաեւ՝ Մամիկ եւ Կոնակ եղբայրներու պատմութեան հետ, որոնք կ'ապաստամբին ձենաց երկրի թագաւոր Իրենց միւս եղբոր դէմ, կը մտնեն Հայոց Քոսրով թագաւորի ծառայութեան մէջ. ի վերջոյ կը զոհնան Մամիկոնեան տոհմի նահապետները:

Սանտսարի ու Բաղդասարի ազատատենչութեան արժանիքը խորհրդանշօրէն մեզ կը հասցնեն մինչեւ Հայկ նահապետի մերժումը՝ Բէլի իշխանութեան ներքեւ հանգիստ ապրելու:

Բ. ճիւղի հերոս Առիւծ Մհերի կերպարը միաժամանակ կը յեշեցնէ Հերթիւքը, կը մարմնաւորէ ուժի սկզբունքին վրայ հիմնուած ազատութիւնը եւ կը պատկերացնէ քրիստոնէական բարոյականին շեղումի հետեւանքները:

Իսկ Դ. ճիւղի հերոս Մհերը հարազատ վերարտադրումն է Արտաշէս Բ. թողի Արտաւազդի աիւլարին, որ, ըստ ժողովրդային աւանդութեան, մինչեւ օրս բանտարկուած կը մնայ «Մհերի դուռ» կոչուած՝ ուրարտական անպաղիւր արձանազրութիւններով ծածկուած ժայռի հոփին, Վանայ բերդի արեւելեան կողմի լեռներուն մէջ:

Կասկած չկայ, որ ընդհանուր առմամբ տեղի է ունեցած՝ այլազան պատմական հերոսներու սխրագործութիւնները դիւցազնիկական քանի մը հերոսներու կերպարին շուրջ կենդրոնացնելու գործողութիւնը: Բայց այնպիսի՝ ձեւով, որ անվարան կարելի է հաստատել, թէ ոչ մէկ ազգային այլ դիւցազնավէպ այսօրեայ համապարփակ խորհրդանշիչը կը հանդիսանայ ամբողջ ազգի մը պատմական անցեալին եւ հաւաքական իտելալին՝ իր գոյութեան սկզբնական օրերէն մինչեւ արդի ժամանակները:

Արդարեւ, մասնաւորաբար միջնադարեան այլ հերոսապատումները հիւսուած են՝ պատմութեան մէջ ծանօթ առանձնակի անձնաւորութեան մը արարքներուն շուրջ:

Այսպէս, սպանական երկու հերոսապատումներէն առաջինը նուիրուած է Ռուի (Ռոտրիկ) Տիադ տէ Պիվարի սխրագործութեանց: Ան կ'ապրէր ԺԱ. դարուն (1026 կամ 1040–1099): Արաբներու դէմ պայքարի ընթացքին իր ցուցարեւած սխրագործութիւններով, ի կենդանութեան կը վայելէր արդէն՝ առասպելական հերոսի համբաւ: Արաբները զայն կը կոչէին էլ Սիւս, իսկ սպանացիք՝ Իլ Գամպէտտո:

Երկրորդ հերոսապատումի առանցքը կը կազմէ Բերնարդ տէլ Գամպիո, Սպանիոյ վրայ հիսփսէն կատարուած արշաւանքներու ժամանակ ընդդիմադրութեան կազմակերպիչը:

Յրանաւական հերոսապատումը, Լա Շանտոն տը Ռոյան, կ'առընչուի սարագինոսներու դէմ մղուած կռիւներուն: Իսկական Ռոյանը՝ կառավարին էր Պրիթանը նահանգին: Պատմական այլ տեղեկութիւններ չկան իր մասին: Բայց ըստ երեւոյթին, մասնակցած է «Հիթանոս» սարագինոսներու դէմ քրիստոնէայ Գաղիան պաշտպանելու համար մղուած կռիւներուն՝ ԺԲ. դարուն: Պրիթանեան յեռներէն անցքին, իբրեւ յառաջապահ, Ռոնսըվոյի մէջ ան կը սպաննուի թշնամիներու ձեռամբ, բայց իրեն նախանձող ազգակիցի մը յարած ծուղակն ինկած: Նախքան վերջին շունչը փչելը, սակայն, գերբնական ճիգով կը հնչեցնէ վտանգի փողը, ստոյգ մահէ փրկելով Հետեւող բանակը:

Վերոյիշեալ բոլոր օրինակները ցոյց կու տան, թէ դիւցազնիկական մեկնակէտը կը հանդիսանայ կարեւոր կամ կարեւոր նկատուած պատմական

զէպքը, համապատասխան հերոսական արարքով, որ կ'արժանանայ համաժողովրդային հիացման: Երգեր կը հիւսուին անոր շուրջ. ժամանակի ընթացքին նոր ժանրամասնութիւններ կը հնարուին. յաւելումներ կը կատարուին. իրարու հետ նմանութեան եզր ունեցող հերոսներու արարքները կը կեդրոնացուին նախափրութիւն վայելող հերոս տնձին շուրջ. որոշ պարագաներու ան հետզհետէ կ'օժտուի իրեն արժանի ճշայն ու ճշեմ հայրնով, ինչպէս նաեւ իր՝ մէկ սերած զաւակներով:

Բայց այս բոլորը բուարար չեն՝ դիւցազնեղութեան ապու: Համար ճաղգային դիւցազնավէպն հանգամանք: Ասոր համար անհրաժեշտ է, որ հոն տեղ գտած ըլլան նաեւ տուեալ հաւաքակաճութեան կրօնա-քարոյական, բնկերա-փիլիսոփայական հաստատման, խորհրդանշանները, աւանդութիւնները, ընդհանրական անհրեւ իտէալները, եւայլն:

Այս իմաստով, հնազոյն դիւցազնավէպերը կը ներկայացնեն համեմատարար աւելի՛ ամբողջական պատկեր, իսկ միջնադարեան շրջանին ծագում առածները կը մնան աւելի սահմանափակ: Բացառութիւն կը կազմէ Սասնայ Մանրու պարագան, համապարփակ իր էութեամբ, ինչպէս նշած եմ վերը:

Գիտակցորէն անկարելի է ճշգիւ անվարան կերպով, թէ վերոյիշեալ քաղաղութիւնները ե՞րբ, ինչպէ՞ս, որո՞ւ կողմէ միախառնուած են դիւցազնեղութեան պատմական միջուկին հետ: Եօշափելի միակ իրականութիւնը կը մնայ՝ հնադարեան բանաստեղծին կամ գրիչին եւ արդի բանաստեղծին կողմէ գրի առնելու զիւրեղանովէպը, իբրեւ գրական երկ կամ բանասիրական նիւթ:

Առնենք սուսերական կիլիկամէշի դիւցազնավէպը:

Սուսերացիք կը հաւատային, թէ Բարին եւ Չարը ներկայացնող ուժերը անդադրում պայքար կը մղեն իրարու դէմ:

Արդ, դիւցազնավէպին հերոսը, Ուրուք քաղաքի Թագաւոր Կիլկամէշը, կը վայելէ Արեւ-աստուծոյ հովանաւորութիւնը, ամէն անգամ, որ իր պայքարը մղուած ըլլայ հրէշներու դէմ:

Սուսերացիները կը հաւատային նաեւ, թէ մարդոց ճակատագրի դասաւորման մէջ, հիմնական է աստուածներու դերակատարութիւնը: Կիլկամէշ, իբրեւ մեղի ծանօթ առաջին ըմբոստացողը իրերու այս կացութեան դէմ, կը փորձէ ի գերեւ հանել մարդոց վրայ իրենց այս առաւելութիւնը շարաշար գործածող որոշ աստուածներու միջմատութիւնները: Սուսերացիք իրենց աստուածներուն կը վերագրէին մարդկային նկարագրի գիծեր: Կիլկամէշ, հեշտասիրութեան աստուածուհի Իշտարի հետ կը վերաբերի իբրեւ ամենայնօրին ցնծու հիւ, երբ կ'ենթարկուի ասոր վաւաչուտ հետապնդումներուն:

Սուսերացիները մտահոգուած էին մահուան ու անմահութեան հարցով: Կիլկամէշ, իր մտերիմ բարեկամ Էնքիտուի մահէն ետք, կ'այցելէ անվերադարձութեան աշխարհը, կը համոզուի, թէ մահէն ետք կեանք գոյութիւն չունի, հետեւաբար կը յծուի յաւիտենական երիտասարդութիւն պարգեւ ող Մադիկի փնտրտուքին, որպէսզի ի'նքն ալ, աստուածներուն նման, տիրանայ անմահութեան:

Սուսերացիք, հաւանաբար հասկնալ փորձած են նաեւ մարդկային նկարագրի երկուութեան հարցը, որ դիւցազնավէպին մէջ առած է հետեւեալ ձեւը: Աստուածները կը ստեղծեն Կիլկամէշի դէմ գլուխ բռնելու սահմանում էակ մը՝ անասնատիպ, կենդանական բարքերով, բիրտ ուժով օժտուած Էնքիտուն: Բայց Կիլկամէշ ի դերեւ կը հանէ աստուածներու այս սաղթանքը՝ փոխանակ պայքարելու Էնքիտուի դէմ, զայն կը դարձնէ իր անբաժանելի մտերիմը ու այսպէս ալ կը գտնէ իր ներքին անդորրութիւնը, որ կը խախտի Էնքիտուի մահով:

Սույն մերացիք կը հաստատային, անկասկած, որ մարդ էակին համար միջոց չկայ՝ մահկանացուի զոյսովիմակէն խուսափելու: Արդարեւ, նոյնիսկ զանեկէ հոգ Թախտենական Երեսօտարդութեան Ծագիկը, Կիլկամէշ կը կորսնցնէ դայն: Զեռնու նայն կը վերադառնայ իր երկիրը: Աստուածներուն հասնելու վերջին ապարդիւն ճիգէ մը հաջ (Բարեկունի աշտարակի կառուցմամբ), կը համակերպէ մարդկային իր ճակատագրին, ուր միակ ազատութիւնը, որ ունի՝ կեանքը վարելու եւ իր հպատակներուն ալ կեանքը բարեկամելու ազատութիւնն է:

Համամարդկային թիմաներով հարուստ սումերական այս պատմութիւնը ո՛չ միայն հետազային իւրացուած էր Միջագետքի եւ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներուն կողմէ, այլեւ, այժմ փաստուած է, ծանօթ էր նաեւ կրետացիներուն ու ասոնց ալ միջոցաւ՝ յոյներուն: Բաղդատութեան անհամար Հնարաւորութիւններ կը ստեղծուին, ուրեմն, Կիլկամէշի անմահութեան ձգտումին ու Պրոմէթէոսի միջեւ, սումերական եւ յունական դիցաբանութեան միջեւ, Կիլկամէշի ձեռնարկած ճամբորդութեան եւ Ողիսիոսի հերոս իւրիս միջերկրական արկածախնդրութիւններուն միջեւ, եւ այլն: Մինչ կը կարծուէր, թէ արեւմտեան զրականութեան մէջ ստեղծուած առաջին վէպը Ողիսիոսն է, կարելի կը դառնայ ուրեմն ազգեցութիւններու շղթան երկարել մինչեւ սումերական դիցազնավէպը:

Ինչ ալ լլլան, սակայն, այս մարդէն ներս բաղդատական գրականութեան ընծայած Հնարաւորութիւնները, կասկած չկայ, որ իւրաքանչիւր ցեղային-ազգային հաւաքականութիւն, իրեն համար հիմնական նկատուած զազափարականով, առաւելութիւններով ու զգացումներով կ'օժտէ իր դիւցազնավէպին հերոսը, որ մարմնացումն իսկ կը դառնայ ցեղին կամ ազգին յաականդիներուն: Իւրիս՝ յոյնն է, ռադմիկ, նաւորդ, արկածախնդիր, խորամանկ, լեզուն բերնին մէջ դարձող, Հնարամիտ: Ռոյան՝ Փրոնտացի ասպետն է, հաստարիմ՝ իր հաւատքին, վեհապետին ալ պատուոյ հանգանակին, անխոհեմութեան աստիճան յանդուգն, քաջ, արիասիրտ, հպարտ: Միկֆրիտ, այն պահէն սկսեալ, երբ կը տիրանայ Նիպոլոսիկներու զանձին եւ սիրահարութեան հետեւանքով առաւել եւս կը միւրճուի մարդկայնութեան մէջ ու կը կորսնցնէ իր գերմարդկայնութիւնը, կը ստանձնէ պերմանական ցեղերու յատկանիշներով օժտուած հերոսի կերպարը: Հիւսիսային երկիրներու աստուածներուն նման, որոնք, գիտնալով հանդերձ, թէ վերջի վերջոյ Բարին պիտի պարտուի Զարէն, յամենայնդէպս կը պայքարին մինչեւ վերջին պահը, մինչեւ «Աստուածներու վերջալոյսը»: Միկֆրիտ եւս, քաջ գիտնալով, թէ պիտի մեռնի, չ'ընկրկիր փոսնիկին դիմաց, որովհետեւ գինք մերժող այս աշխարհին վրայ տեղ չունեցող մարդուն միակ Հնարաւոր ապաւէնը կը մնայ հերոսականութիւնը: Սասունցի Դաւիթ կը մարմնացնէ հայուն յատկանիշները եղող քաջութիւնը, յարատեւութեան ոգին, վեհանձնութիւնը, միամտութիւնը, յամառութիւնը, ազատատենչութիւնը, «ծուռ»ութեան տեսակները:

Հետաքրքրական է նշել, թէ ընդհանուր գիծերու մէջ, ժողովուրդներու երեւակայնութիւնը որքան նոյնանմանութիւն կը պարզէ՝ մարդկային կիրքերու, բնազդներու, վախերու, յոյսերու արտայայտութեան պարագային:

Մարդ արարածը միշտ ալ վախցած է այն երեւոյթներէն, զորոս չէ կարողացած բացատրել: Գրոմանիտի նախամարդը, որ ամպերուն մէջ կը կարծէր տեսնել ահարկու հրէշներ, կայծակը կը նկատէր հրեղէն օձ եւ որոտումը կը վերադրէր գերմարդկային ուժերու զայրոյթին, իր վախերուն մէջ, այնքան ալ տարբեր չէ հետագայ սերունդներու ժողովուրդներէն, որոնց առասպելները՝

բուն, ժողովրդային բանտհի սու թեան, դիցազնեղութեանց եւ հեթանոսութեան մէջ կը վիստան հուր ժայթքեցնող վիշապներ, բազմադիւսանի հրէշներ, հսկաներ, դեւեր, շարագդեցիկ թզուկներ, թռչող կամ խօսուն ձիւներ, անասունի վերածնունդ մարդիկ, անիծեալ պանծեր, վհուկներ, եւ այլն:

Իր սարսափներէն ձերբազատուելու անկարող մարդկութիւնը, իր ստեղծած հերոսներուն ձեռքով է, որ կը զգանէ ամէն տեսակի հրէշները: Հետեւաբար, այսօրինակ սխալործութեանց պարագային, բոլոր դիցազնաւէպերը կը պարունակեն նմանութեան եզրեր:

Բայց ճիշդ այն քրոմօքսմներուն նման, որոնք անձ մը կը զանազանեն մէկ ուրիշէն, կամ ժէններուն նման, որոնք կը սահմանեն ժառանգականութեան փոխանցումն ու յայտնագործումը, պատկերը բոլորովին այլ է, երբ հարցը կը վերաբերի ժողովուրդներու ազգային երեւակայութեան, որ կը կերտէ իր դիցազնաւէպի հերոսներուն առանձնայատուկ կերպարը: Ասոր շնորհէն է, որ Կիլիկիայէն կը տարբերի Իւլիսէն, Ռոմանը՝ Սիւսէն, Սիկիֆրիտը՝ Սասունցի Գուրիթէն:

Արդարեւ, եթէ մարդիկ միեւնոյնն են բոլոր երկիրներու տակ, ընդհանրական, պատմաքաղաքական, ընկերա-մշակութային, կրօնա-բարոյական, աշխարհա-տնտեսական ընդհանուր ծիրը, որուն մէջ կը զարգանայ տուեալ մարդկային ընկերութիւն մը, ժողովուրդ մը, ազգ մը, նոյնը չէ ամենուրեք: Այս մասնայատկութիւններն են, որ անկրկնելի կը դարձնեն իրաքանչիւր ազգ, որուն դիցազնաւէպն ալ կ'արտայայտէ իր իրադատութիւնը:

Նոյնպէս անհնարին է դիտել ծանօթ դիցազնաւէպերէն մին կամ միւսը՝ իրեն ծնունդ տուած հայրենիքէն տարբեր միջավայրի մէջ: Պահ մը միայն փորձենք Ելիականը տեղաւորել Սփիւստոսի մէջ, Թամայանցի՝ Ճրտանասի մէջ, Սասունցի Գուրիթը՝ Անգլիոյ մէջ...

Այստեղէն ալ կը ծագի հարցը, թէ համամարդկային եւ միայն ինչ հետաքրքրութիւն կրնայ առթիւ ժողովրդային կամ ազգային դիցազնաւէպ մը՝ պատմա-աշխարհագրական իր բնավայրէն դուրս:

